ԲԱՆԿԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

ՀԵՌԱԿԱ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՁԵՌՆԱՐԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հեռակա վերահսկողության հիմնական սկզբունքները

1.1. Հեռակա վերահսկողության նպատակն ու խնդիրները
1.2. Հեռակա վերահսկողության իրականացման ձեռնարկի նպատակը
1.3. Հեռակա վերահսկողության մեջ ներգրավվող անձանց ընտրությունը, նրանց միջև լիազորությունների և պարտականությունների բաշխումը
1.4. Հեռակա վերահսկողության տեղեկատվական աղբյուրները
1.5. Հեռակա վերահսկողության արդյունքների ամփոփումը և պահպանումը

2. Շաբաթական վերահսկողություն

2.1. Շաբաթական վերահսկողության նպատակը
2.2. Շաբաթական վերահսկողության տեղեկատվական աղբյուրները
2.3. Շաբաթական վերահսկողության հիմնական ուղղությունները
2.3.1. ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին՝ բանկի գործունեության համապատասխանության ստուգումը
2.3.2. Բանկի հաշվեկշռի կառուցվածքի, ռիսկային ոլորտների և խնդրահարույց շարժերի վերլուծությունը
2.4. Շաբաթվա ընթացքում արձանագրված խախտումների ներկայացումը Հանձնաժողովի քննարկմանը

3. Ամսական վերահսկողություն

3.1. Ամսական վերահսկողության նպատակը
3.2. Ամսական վերահսկողության տեղեկատվական աղբյուրները
3.3. Ամսական վերահսկողության հիմնական ուղղությունները
3.3.1. ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին՝ բանկի գործունեության համապատասխանության ստուգումը
3.3.2. Բանկի ցուցանիշների ամփոփ գնահատականի (ՔԱՄԵԼՍ) ձևավորումը

3.3.3. Վերահսկողական միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների մշակումը և ներկայացումը

3.4. Ամսական վերահսկողության արդյունքների ամփոփումը, ներկայացումն ու պահպանումը

4. Եռամսյակային վերահսկողություն

4.1. Եռամսյակային վերահսկողության նպատակները

4.2. Եռամսյակային վերահսկողության տեղեկատվական աղբյուրները

4.3. Եռամսյակային վերահսկողության հիմնական ուղղությունները

4.3.1. Եռամսյակային հրապարակվող հաշվետվությունների և այլ տեղեկատվության արժանահավատության գնահատումը և վերլուծությունը

4.3.2. Բանկի ներկա և սպասվող ֆինանսական վիճակի, ռիսկերի գնահատումը և վերլուծությունը

4.3.3. Վերահսկողական միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների մշակումը և ներկայացումը

4.4. Եռամսակային վերահսկողության արդյունքների ամփոփումը, ներկայացումը և պահպանումը

5. Տարեկան վերահսկողություն

5.1. Տարեկան վերահսկողության նպատակները

5.2. Տարեկան վերահսկողության տեղեկատվական աղբյուրները

5.3. Տարեկան վերահսկողության հիմնական ուղղությունները

5.4. Տարեկան վերահսկողության արդյունքների ամփոփումը, ներկայացումը և պահպանումը

Հավելվածներ

1. ՀԵՌԱԿԱ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1.1. Հեռակա վերահսկողության նպատակն ու խնդիրները

Հեռակա վերահսկողությունը Կենտրոնական բանկում (այսինքն՝ առևտրային բանկի տարածքից դուրս) բանկերից ստացված տեղեկատվության (հաշվետվությունների և այլ ձևով) հիման վրա բանկի գործունեության շարունակական վերլուծությունն է՝ բանկի ֆինանսական վիճակի, ռիսկերի մակարդակի գնահատման ու բանկային գործունեությունը կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին՝ համապատասխանելիության ստուգման նպատակով:

Հեռակա վերահսկողության հիմնական խնդիրը բանկերի ֆինանսական վիճակի շաբաթական, ամսական, եռամսյակային և տարեկան վերլուծությունների միջոցով ռիսկերի բացահայտումն ու գնահատումն է՝ բանկերի հնարավոր կորուստները կանխատեսելու և/կամ նվազեցնելու նպատակով: Ընդ որում, հեռակա վերահսկողության ընթացքում պետք է բացահայտվեն ոչ միայն բանկի ֆինանսական ցուցանիշների շարժերը, մասնավորապես, ՀՀ կենտրոնական բանկի ակտերով ամրագրված սահմանաչափերից շեղումները, այլ նաև ուսումնասիրվեն վերջիններիս պատճառները, գնահատվեն դրանց փոփոխությունները և մշակվեն համապատասխան միջոցառումների պլան՝ գնահատված ռիսկերը կառավարելու նպատակով: Հեռակա վերահսկողությունը պետք է ուղղված լինի նաև բանկի սպասվող ֆինանսական վիճակի, ռիսկերի գնահատմանն ու վերլուծությանը:

Հեռակա վերահսկողությունը կարևորվում է նաև այն առումով, որ, ժամանակին ու ճիշտ բացահայտելով բանկի խնդիրներն ու ռիսկերը, հնարավորություն է տալիս բարձացնել ընդհանուր վերահսկողության արդյունավետությունը՝ վերահսկողական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման ու վերստուգվող անձանց մոտ (բանկերում) ստուգումների պլանավորման միջոցով:

1.2. Հեռակա վերահսկողության իրականացման ծեռնարկի նպատակը

Հեռակա վերահսկողության իրականացման ձեռնարկի նպատակն է՝ սահմանել հեռակա վերահսկողության իրականացման

սկզբունքներն ու մեթոդները, կանոնակարգել գործընթացները, դրանց հաջորդականությունն ու ժամկետները, ինչպես նաև հեռակա վերահսկողության մեջ ներգրավված անձանց շրջանակը, նրանց իրավունքներն ու պարտականությունները:

Սույն ձեռնարկը բաղկացած է 5 բաժնից.

«1. Հեռակա վերահսկողության հիմնական սկզբունքները» առաջին բաժնում ներկայացվում են հեռակա վերահսկողության նպատակն ու խնդիրները, տեղեկատվական աղբյուրները, հեռակա վերահսկողության մեջ ներգրավվող անձանց ընտրությունը, նրանց միջև լիազորությունների և պարտականությունների բաշխումը, հեռակա վերահսկողության արդյունքների ամփոփումը և պահպանումը, ինպես նաև հեռակա վերահսկողության իրականացման ձեռնարկի նպատակը:

Ձեռնարկի հաջորդ բաժիններում ներկայացվում են բանկի նկատմամբ վերահսկողի կողմից հեռակա վերահսկողության իրականացման գործընթացները: Վերջիններս ենթադրում են բանկի ֆինանսական վիճակի շաբաթական, ամսական, եռամսյակային և տարեկան կտրվածքով վերլուծություն, որոնք, համապատասխանաբար, ներկայացված են սույն ձեռնարկի «2. Շաբաթական վերահսկողություն», «3. Ամսական վերահսկողություն», «4. Եռամսյակային վերահսկողություն» և «5. Տարեկան վերահսկողություն» բաժիններում: Յուրաքանչյուր բաժնում նկարագրվում են վերահսկողության նպատակներն ու տեղեկատվական աղբյուրները: Վերահսկողության հիմնական ուղղությունները ենթաբաժիններում նկարագրվում են հեռակա վերահսկողության իրականացման համար վերահսկողի այն քայլերը, գործընթացները, ուսումնասիրության ենթակա ոլորտները, որոնց հետազոտությունների արդյունքների ընդհանրացման միջոցով գնահատվում է բանկի ֆինանսական վիճակը: Վերոնշյալ գործընթացների իրականացման արդյունքում ձևավորված դատողություններն ամփոփվում են համապատասխան հաշվետվություններում, որոնց կառուցվածքը ներկայացված է վերահսկողության արդյունքների ամփոփումը, ներկայացումն ու պահպանումը ենթաբաժիններում և սույն ձեռնարկի հավելվածներում:

Սույն ձեռնարկի հավելվածներում սահմանվում են նաև այն ռիսկերի տեսակները, որոնց բացահայտմանն է ուղղված հեռակա

վերահսկողությունը և այն մեթոդական ուղեցույցները, որոնք թույլ են տալիս բացահայտել, գնահատել և վերլուծել այդ ռիսկերը: Ընդ որում, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ հավելվածներում ներկայացված մեթոդաբանությունների համաձայն ռիկերի հաշվարկներն ապահովվում են Fina համակարգի կողմից:

Չեռնարկը սահմանում է բանկերի հեռակա վերահսկողության անհրաժեշտ և պարտադիր գործընթացները և չի բացառում, որ հեռակա վերահսկողության ընթացքում հնարավոր է նախաձեռնել և իրականացնել լրացուցիչ այլ գործընթացներ:

1.3. Հեռակա վերահսկողության մեջ ներգրավվող անձանց ընտրությունը, նրանց միջև լիազորությունների և պարտականությունների բաշխումը

Հեռակա վերահսկողության մեջ ներգրավված վերահսկողների քանակը, տեղաբաշխումը, նրանց միջև լիազորությունների և պարտականությունների բաշխումը բաժնի պետի ներկայացմամբ որոշում է բանկային վերահսկողության վարչության պետը՝ հիմնվելով ներգրավված վերահսկողների աշխատանքային փորձի, մասնագիտական գիտելիքների և կոնկրետ աշխատատեղի նկարագրության վրա: Ընդ որում, մեկ վերահսկող կարող է միաժամանակ վերահսկել (սպասարկել) առավելագույնը երեք բանկ: Յուրաքանչյուր բանկ պետք է սպասարկվի առնվազն երկու վերահսկողի կողմից: Յուրաքանչյուր վերահսկող չի կարող երեք տարուց ավելի անընդմեջ սպասարկել միևնույն բանկը: Տարվա ընթացքում նույն բանկի վերահսկողներից կարելի է փոխել միայն մեկ վերահսկողի:

Եթե վերահսկողության իրականացման պարտականությունները դրվում են մեկ այլ անձի կամ բաժնի վրա, ապա նախորդ և նոր վերահսկողները (անկախ, թե որ բաժնից է նախորդ վերահսկողը) պետք է մեկ ամիս շարունակ միաժամանակ վերահսկեն տվյալ բանկը: Նախորդ վերահսկողը մեկ ամսվա ընթացքում պետք է նոր վերահսկողին ծանոթացնի տվյալ բանկի առանձնահատկություններին, ռիսկային ոլորտներին ու նախորդ

պատմությանը: Նոր վերահսկողը մեկ ամսում պետք է ուսումնասիրի առնվազն վերջին երկու տարվա բանկի գործը (այդ թվում՝ եռամսակային և տարեկան փաստաթղթային հաշվետվությունները), տեսչական ստուգման արդյունքները, ինչպես նաև համեմատի տվյալ բանկը համակարգում գործող այլ բանկերի հետ՝ օգտվելով UBPR-ում ներկայացված տեղեկատվությունից և ԿԲ վերլուծության արդյունքներից: Կարևոր է ծանոթանալ նաև բանկի ներքին աուդիտի եզրակացություններին, հառանկարային զարգացման ծրագրերին, բանկի ներքին կազմակերպչական կառուցվածքին, ներքին կարգերին, կանոնակարգերին և ընթացակարգերին:

1.4. Հեռակա վերահսկողության տեղեկատվական աղբյուրները

Հեռակա վերահսկողությունը իրականցվում է ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերից Կենտրոնական բանկ ներկայացվող Կանոնակարգ 3-ով, ինպես նաև «Երաշխիքային վճարները հաշվարկելու և բանկերի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին երաշխիքային վճարները հաշվարկելու, ավանդատուների թվի և հատուցման ենթակա գումարի վերաբերյալ հաշվետվության ներկայացման կարգով» սահմանված հաշվետվությունների հիման վրա:

Վերահսկողության արդյունավետության ու հետևողականության ապահովման նպատակով վերլուծությունների ժամանակ պետք է օգտվել նաև վարկային ռեգիստրից ստացված տեղեկատվությունից, նախորդ ժամանակաշրջաններում Կենտրոնական բանկ ներկայացված հաշվետվություններից, նախորդ և ընթացիկ ժամանակաշրջաններում բանկից ստացված գրություններից, ծանուցումներից, հեռանկարային զարգացման ծրագրերից, Գործակալ/Դիլեր կարգավիճակ ունեցող բանկերի կողմից ԿԲ ներկայացված նախորդ վեց ամսվա գործունեության հաշվետվությունից ու առաջիկա վեց ամսվա պարտատոմսերի շուկայում

գործունեության ռազմավարությունից, հրապարակված ֆինանսական հաշվետվություններից և դրանց կցված աուդիտորական եզրակացություններից, վերստուգվող անձանց մոտ (բանկերում) ստուգումների արդյունքներից, ցանկացած կերպով ստացված տեղեկատվություններից: Կենտրոնական բանկի բանկային վերահսկողության վարչության աշխատակիցները բանկերի կողմից Կենտրոնական բանկ ներկայացված հաշվետվությունների պարզաբանման և մեկնաբանման կարիք ունեցող կետերի վերաբերյալ, ինչպես նաև առանձին վերլուծական նպատակներից ելնելով՝ ծանուցման միջոցով բանկերից կարող են պահանջել լրացուցիչ տեղեկություններ և պարզաբանումներ, որոնց պահանջը և ներկայացման կարգը սահմանվում է Կանոնակարգ 3-ում ամրագրված ընթացակարգերով:

Սույն ձեռնարկով սահմանված դեպքերում անհրաժեշտ տեղեկատվության աղբյուր կարող են հանդիսանալ նաև բանկի համապատասխան ոլորտի պատասխանատու անձանց հետ հանդիպումները, Սի-Բի-էյ-Նեթ համակարգի միջոցով և հեռախոսային հարցումները, ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցներում հրապարակումները:

Առևտրային բանկերից լրացուցիչ տեղեկատվության ստանալու նպատակով բանկերին հարցումները որպես կանոն պետք է իրականացվեն Սի-Բի-էյ-Նեթ համակարգի միջոցով: Վերահսկողական գործառույթների իրականացման և օպերատիվ տեղեկատվության անհրաժեշտություն առաջանալու դեպքում վերահսկողը կարող է այն ստանալ նաև հեռախոսային հարցումների միջոցով: Հեռախոսային հարցումները (վերահսկողի նախաձեռնությամբ) և բանկերի ներկայացուցիչների հետ հանդիպումները (ինչպես վերահսկողի, այնպես էլ առևտրային բանկի նախաձեռնությամբ) կարող են կայանալ առևտրային բանկի համապատասխան ոլորտի պատասխանատու անձանց հետ միայն բանկային վերահսկողության վարչության համապատասխան բաժնի կամ վարչության պետի թույլտվությամբ և/կամ հանձնարարությամբ:

Հեռախոսային հարցումները և բանկի ներկայացուցչի հետ հանդիպումները (ինչպես վերահսկողի, այնպես էլ առևտրային բանկի նախաձեռնությամբ) պետք է գրանցվեն (համապատասխանաբար,

ըստ հավելվածներ 7-ի և 8-ի), համարակալվեն և պահպանվեն տվյալ բանկի գործում՝ վերահսկողության վարչության տեղեկատվության հավաքագրման, կարգավորման և արխիվացման բաժնում: Ընդ որում, վերահսկողի կողմից լրացված Հավելվածներ 7-ը և 8-ը հանձնվում են վերահսկողության վարչության տեղեկատվության հավաքագրման, կարգավորման և արխիվացման բաժին, ոչ ուշ, քան հեռախոսային հարցմանը կամ բանկի ներկայացուցչի հետ հանդիպմանը հաջորդող 10-րդ օրը:

1.5. Հեռակա վերահսկողության արդյունքների ամփոփումը և պահպանումը

Հեռակա վերահսկողության արդյունքների ամփոփումը: Բանկից ստացված տեղեկատվության վերլուծության արդյունքում, սույն ձեռնարկով սահմանված սկզբունքներով, ըստ առանձին բանկերի կազմվում են ներքին ամփոփ հաշվետվություններ (համաձայն սույն ձեռնարկի հավելվածներում ներկայացված ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվությունների), որոնցում պետք է բացահայտվեն բանկի գործունեությունը բնութագրող ցուցանիշների էական փոփոխությունները, բնութագրվեն բանկի գործունեության հիմնական միտումներն ու դրանց փոփոխությունները, ախտորոշվեն բանկի առջև ծառացած հիմնախնդիրները, գործունեության ռիսկային բնագավառները:

Միաժամանակ, բանկից ստացված տեղեկատվության վերլուծությունը պետք է ունենա հստակ կարգավորման ուղղվածություն այն իմաստով, որ վերահսկողի կողմից պետք է մշակվեն և առաջարկվեն լուծումներ բացահայտված խնդիրների լուծման ուղղությամբ:

Հեռակա վերահսկողության արդյունքների պահպանումը: Բանկի վերահսկողները, բանկին վերաբերող փաստաթղթերի հետ կապված աշխատանքներն ավարտելուց հետո, առնվազն շաբաթը մեկ անգամ բանկային վերահսկողության վարչության տեղեկատվության հավաքագրման, կարգավորման և արխիվացման բաժին են հանձնում բոլոր փաստաթղթերը: Ընդ որում, տեղեկատվության հավաքագրման, կարգավորման և արխիվացման բաժնի համապատասխան աշխատակիցները պետք է ձեռնամուխ լինեն յուրաքանչյուր բանկի գործի ստեղծմանը, պահպանմանն ու համալրմանը:

Բանկի գործում պետք է ամփոփվի և կարվի տվյալ բանկի հետ առնչվող ողջ տեղեկատվությունը՝ պահպանելով հետևյալ կառուցվածքը.

1. ***Լիցենզավորում ու գրանցում:*** Այս բաժնում կարվում են բանկի և վերջինիս տարածքային ստորաբաժանումների գրանցման և լիզենցավորման, ինչպես նաև բանկի սեփականատերերին վերաբերվող ողջ տեղեկատվությունը: Բանկի ղեկավարներին տրվող վկայականների ստացմանն առնչվող փաստաթղթերը կարվում են առանձին՝ ըստ տրված վկայականների համարների: Ընդ որում, բանկի գործի այս բաժնի ստեղծման, պահպանման ու համալրման նպատակով տեղեկատվության ներկայացման համար պատասխանատու է բանկային վերահսկողության վարչության լիցենզավորման և բանկային ռեգիստրի բաժնի համապատասխան աշխատակիցը:
2. ***Հեռակա վերահսկողության արդյունքներ:*** Այս բաժնում կարվում են բանկի հեռակա վերահսկողության արդյունքները՝ ամսական, եռամսյակային և տարեկան (բանկի անձնագիր) ներքին ամփոփ հաշվետվությունները (համաձայն սույն ձեռնարկի հավելվածներում ներկայացված ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվությունների):
3. ***Հաշվետվություններ և համակագրություններ:*** Այս բաժնում կարվում են բանկային վերահսկողության վարչություն թղթային եղանակով ներկայացված հաշվետվությունները, զանգվածային լրատվամիջոցներում հրապարակված եռամսյակային և տարեկան ֆինանսական հաշվետվությունները, Կենտրոնական բանկի և բանկի միջև նամակագրությունը, պահանջված և ստացված ծանուցումները, հեռախոսային հարցումների և բանկի ղեկավարների հետ հանդիպումների արձանագրությունները:
4. ***Խախտումներ և կիրառված պատժամիջոցներ:*** Այս բաժնում կարվում են բանկին վերաբերող ՀՀ կենտրոնական բանկի նախագահի, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի հրահանգներն ու որոշումները, բանկի կողմից թույլ տրված խախտումներին ու կիրառված պատժամիջոցներին առնչվող բոլոր փաստաթղթերը՝ ներառյալ վարույթը կարճելու վերաբերյալ նամակները, ինչպես նաև Կենտրոնական բանկի խորհրդի և

Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի (այսուհետև՝ Հանձնաժողով) նիստի՝ տվյալ բանկին վերաբերող արձանագրությունները (արձանագրությունների փոխարեն կարող են տրվել հղումներ արձանագրության համապատասխան կետերին):

5. ***Բանկերում ստուգումներ:*** Այս բաժնում կարվում են վերստուգվող անձանց մոտ (բանկերում) իրականացված ստուգումներին առնչվող բոլոր փաստաթղթերը՝ ներառյալ ստուգման առաջնային փաստաթղթերն ու վերջնական հաշվետվությունները:
6. ***Բանկի ներքին իրավական ակտեր:*** Այս բաժնում կարվում են բանկի խորհրդի կամ գործադիր մարմնի հաստատած և Կենտրոնական բանկ ներկայացրած բանկի ներքին իրավական ակտերը՝ ներառյալ բանկի հեռանկարային զարգացման ծրագրերը, կանոնակարգերը, կարգերը, քաղաքականությունները, հրամանները, ընթացակարգերը, հրահանգները, ուղեցույցները և այլն:

Բանկի գործում կարված փաստաթղթերը պետք է պահպանվեն և արխիվացվեն բանկային վերահսկողության վարչության տեղեկատվության հավաքագրման, կարգավորման և արխիվացման բաժնում՝ առնվազն երեք տարի:

2. ՇԱԲԱԹԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

2.1. Շաբաթական վերահսկողության նպատակը

Շաբաթական հեռակա վերահսկողության հիմնական նպատակը բանկի ընթացիկ գործունեության օպերատիվ մոնիտորինգն է:

2.2. Շաբաթական վերահսկողության տեղեկատվական աղբյուրները

Շաբաթական հեռակա վերահսկողությունն իրականացվում է Կանոնակարգ 3-ով սահմանված շաբաթական և 14-օրյա հաշվետվությունների, ինչպես նաև սույն ձեռնարկի «1.4. Հեռակա վերահսկողության տեղեկատվական աղբյուրները» բաժնում ներկայացված՝ տեղեկատվական այլ աղբյուրներից ստացված տեղեկատվության վերլուծության հիման վրա:

2.3. Շաբաթական վերահսկողության հիմնական ուղղությունները

Շաբաթական հեռակա վերահսկողության հիմնական ուղղություններն են՝

- ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին՝ բանկի գործունեության համապատասխանության ստուգումը,
- բանկի հաշվեկշռի և հետհաշվեկշռի կառուցվածքի, ռիսկային ոլորտների և խնդրահարույց շարժերի վերլուծությունը.

2.3.1. ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին՝ բանկի գործունեության համապատասխանության ստուգումը

Շաբաթական հեռակա վերահսկողության առաջին փուլում պետք է ուսումնասիրվեն ՀՀ կենտրոնական բանկի այլ ստորաբաժանումների, մասնավորապես՝ վիճակագրության վարչության կողմից արձանագրված «Բանկերի և բանկային գործունեության մա-

սին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածով սահմանված՝ հաշվապահական հաշվառում վարելու կանոնների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ներկայացման կարգի ու պայմանների խախտումների և (կամ) այդ փաստաթղթերում անարժանահավատ տվյալներ ներկայացնելու փաստերը:

Սպասարկողը պետք է ձեռնամուխ լինի նաև «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածով սահմանված՝ բանկային գործունեությունը կարգավորող այլ օրենքների, դրանց հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի պահանջների, մասնավորապես՝ պարտադիր պահուստավորման և արտարժույթի տնօրինման նորմատիվների խախտումների բացահայտմանը, եթե այդպիսիք առկա են:

2.3.2. Բանկի հաշվեկշռի կառուցվածքի, ռիսկային ոլորտների և խնդրահարույց շարժերի վերլուծությունը

Բանկի հաշվեկշռի կառուցվածքի վերլուծություն: Բանկի հաշվեկշիռը վերլուծելիս պետք է բացահայտել նախորդ և հաշվետու հաշվեկշիռների համադրման արդյունքում առաջացած տարբերությունների, մասնավորապես՝ ակտիվների, պարտավորությունների և կապիտալի հիմնական ու էական փոփոխության պատճառները, որոնք են՝

- գնահատել՝ արդյո՞ք ակտիվների ծավալի փոփոխությունը պայմանավորված է պարտավորությունների թե կապիտալի փոփոխությամբ,
- վերլուծել պարտավորությունների գումարային և/կամ կառուցվածքային փոփոխությունները՝ գնահատելով՝ արդյո՞ք տեղի է ունեցել միջոցների ներհոսք թե արտահոսք: Այս վերլուծության համար պետք է օգտագործել նաև նախորդ շաբաթվա ընթացքում ներգրավված և տեղաբաշխված միջոցների միջին տոկոսադրույքների վերաբերյալ հաշվետվությունը,
- օգտագործելով նախորդ շաբաթվա ընթացքում ներգրավված և տեղաբաշխված միջոցների միջին տոկոսադրույքների վերաբերյալ հաշվետվությունը, գնահատել՝ արդյո՞ք հաշվեկշռային ցուցանիշների ծավալի և/կամ կառուցվածքի փոփոխությունը պայմանավորված է ներգավված կամ

տեղաբաշխված միջոցների տոկոսադրույքների փոփոխությամբ,

- բացահայտել այն հաշվեկշռային հոդվածները, որոնց բաժին են ընկել ակտիվների, պարտավորությունների, կապիտալի ծավալի և/կամ կառուցվածքի փոփոխությունները,
- ուսումնասիրել հետհաշվեկշռային հաշիվների մնացորդների փոփոխությունները, մասնավորապես՝ ուշադրություն դարձնելով շաբաթվա ընթացքում բանկի կողմից տրված երաշխիքներին և երաշխավորություններին, այլ պայմանական պարտավորություններին, ստացված և տրամադրված գրավին:

Ռիսկային ոլորտների և խնդրահարույց շարժերի վերլուծություն: Շաբաթական հաշվեկշռի վերլուծությունը կարող է նաև ենթադրել ակտիվների, պարտավորությունների, կապիտալի գումարային և կառուցվածքային փոփոխությունների ուսումնասիրության միջոցով բանկի ռիսկային ոլորտների և խնդրահարույց շարժերի բացահայտում:

Վերլուծության ընթացքում որոշվում են բանկի գործունեության այն բնագավառները, որոնք ձևավորված պայմաններում առավել զգայուն ու խոցելի են ռիսկերի նկատմամբ և/կամ նախորդ հաշվետու ժամանակաշրջանում խնդրահարույց հարցադրումների պատճառ են դարձել (օրինակ, շահույթի նվազման, բանկի ծախսերի ավելացման, հիմնական ցուցանիշների, մասնավորապես՝ հիմնական տնտեսական նորմատիվների էական փոփոխության): Պետք է անդրադառնալ նաև նախորդ շաբաթվա ընթացքում արձանագրված և Հանձնաժողովի քննարկմանը ներկայացված օրենսդրության խախտումների, ռիսկային ոլորների, խնդրահարույց հարցադրումների և դրանց գծով կայացված որոշումների կատարման ընթացքին և ուսումնասիրությանը:

Երկշաբաթյա կտրվածքով վերահսկողը պետք է բացահայտի, թե արդյո՞ք բանկը հետևում է Կենտրոնական բանկի կողմից սահմանված պարտադիր պահուստավորման նվազագույն պահանջներին, իսկ խախտում արձանագրելիս ուսումնասիրի նորմատիվի խախտման հիմնական պատճառները: Վերլուծության արդյունքները պետք է տեղ գտնեն նորմատիվի հաշվարկի ավարտին համընկնող ամսական հաշվետվություններում, իսկ խախտում արձանագրելիս՝ պետք է առաջնորդվել սույն բաժնի 2.4. «Շաբաթվա ըն-

թացքում արձանագրված խախտումների ներկայացումը Հանձնաժողովի քննարկմանը» կետով սահմանված խախտումների արձանագրման և դրանք Հանձնաժողով ներկայացման ընթացակարգերով:

2.4. Շաբաթվա ընթացքում արձանագրված խախտումների ներկայացումը Հանձնաժողովի քննարկմանը

Վիճակագրության վարչության ու Կենտրոնական բանկի այլ ստորաբաժանումների կողմից հայտնաբերված և բանկային վերահսկողության վարչություն գրավոր ներկայացված, ինչպես նաև բանկային վերահսկողության վարչության կողմից բացահայտված օրենսդրական խախտումների հիման վրա վերահսկողը կազմում է արձանագրություններ, նկարագրում բանկի կողմից թույլ տրված խախտումները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ կցում վերջիններիս պատճառների ու հնարավոր հետևանքների վերաբերյալ վերահսկողի վերլուծությունները, խախտումները հիմնավորող այլ փաստաթղթերը:

Արձանագրությունները՝ խախտումն արձանագրողի, բաժնի պետի և բանկային վերահսկողության վարչության պետի ստորագրությամբ երեք օրվա ընթացքում հանձնվում են տեղեկատվության հավաքագրման, կարգավորման և արխիվացման բաժին՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ բանկի կամ դրա ղեկավարի նկատմամբ պատասխանատվության միջոցի կիրառման վարույթն ապահովելու նպատակով:

Բանկի կողմից թույլ տրված օրենսդրության խախտումների արձանագրումն ու հետագա ընթացքը կարգավորվում է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով:

3. ԱՄՍԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

3.1. Ամսական վերահսկողության նպատակը

Ամսական հեռակա վերահսկողության հիմնական նպատակը բանկի գործունեության և ընթացիկ իրական ֆինանսական վիճակի գնահատումն ու վերլուծությունն է: Վերջինս ենթադրում է, մասնավորապես, ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան գործելու հնարավորության, բանկի ռիսկերի վերլուծության միջոցով բանկի ցուցանիշների ամփոփ գնահատականի (ՔԱՄԵԼՍ) ձևավորում և վերլուծություն:

3.2. Ամսական վերահսկողության տեղեկատվական աղբյուրները

Ամսական հեռակա վերահսկողությունն իրականացվում է Կանոնակարգ 3-ով սահմանված շաբաթական և ամսական հաշվետվությունների, ինչպես նաև սույն ձեռնարկի «1.4. Հեռակա վերահսկողության տեղեկատվական աղբյուրները» բաժնում ներկայացված՝ տեղեկատվական այլ աղբյուրներից ստացված տեղեկատվության վերլուծության հիման վրա:

3.3. Ամսական վերահսկողության հիմնական ուղղությունները

Ամսական հեռակա վերահսկողության հինական ուղղություններն են՝

- ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին՝ բանկի գործունեության համապատասխանության ստուգումը,
- բանկի ցուցանիշների ամփոփ գնահատականի (ՔԱՄԵԼՍ) ձևավորումը,
- վերահսկողական միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների մշակումը և ներկայացումը:

3.3.1. ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին՝ բանկի գործունեության համապատասխանության ստուգումը

Ինչպես շաբաթական վերահսկողության դեպքում, ամսական վերահսկողությունը ևս պետք է սկսել Կենտրոնական բանկի այլ

ստորաբաժանումների, մասնավորապես, վիճակագրության վարչության կողմից արձանագրված՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածով սահմանված՝ հաշվապահական հաշվառում վարելու կանոնների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ներկայացման կարգի ու պայմանների խախտումների և (կամ) այդ փաստաթղթերում անարժանահավատ տվյալներ ներկայացնելու փաստերի ուսումնասիրությամբ:

Վերահսկողը պետք է ձեռնամուխ լինի նաև «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածով սահմանված՝ բանկային գործունեությունը կարգավորող այլ օրենքների, դրանց հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի պահանջների խախտումների, ինչպես նաև բանկի կողմից ռիսկային գործունեություն իրականացնելու փաստերի բացահայտմանը: Մասնավորապես, պետք է ուշադրություն դարձնել ՀՀ կենտրոնական բանկի սահմանած հիմնական տնտեսական նորմատիվների նվազագույն պահանջների պահպանմանը: Հիմնական տնտեսական նորմատիվների խախտման պարագայում պետք է բացահայտվեն խախտումների հիմնական պատճառները, պարբերականությունն ու միտումները:

3.3.2. Բանկի ցուցանիշների ամփոփ գնահատականի (ՔԱՄԵԼՍ) ծևավորումը

Բանկի ֆինանսական վիճակի վերլուծությունը ենթադրում է բանկի ակտիվների որակի, կապիտալի համարժեքության, եկամտաբերության, իրացվելիության, շուկայական ռիսկերի նկատմամբ զգայունության, կառավարման որակի և ղեկավարության գործունեության գնահատում ու վերլուծություն:

Այս առումով կարևոր է ուսումնասիրել ակտիվների, պարտավորությունների և կապիտալի ծավալի ու կառուցվածքի փոփոխությունների հիմնական պատճառները: Ինչպես շաբաթական, այնպես էլ ամսական հաշվեկշռի վերլուծության ընթացքում անհրաժեշտ է.

- վերլուծել ակտիվների ծավալային կամ կառուցվածքային փոփոխությունները, գնահատելով՝ արդյո՞ք տեղի է ունեցել միջոցների ներհոսք թե արտահոսք,

- գնահատել՝ արդյո՞ք ակտիվների ծավալի փոփոխությունը պայմանավորված է պարտավորությունների թե կապիտալի փոփոխությամբ,
- գնահատել՝ արդյո՞ք պարտավորությունների ծավալի և/կամ կառուցվածքի փոփոխությունը պայմանավորված է ներգրաված միջոցների տոկոսադրույքների փոփոխությամբ,
- բացահայտել այն հաշվեկշռային հոդվածները, որոնց բաժին են ընկել ակտիվների ծավալի և/կամ կառուցվածքի էական փոփոխությունները,
- գնահատել՝ արդյո՞ք բանկի հաշվեկշռի կառուցվածքում արձանագրված փոփոխություններն արդյունք են բանկի կողմից նախկինում ընդունված քաղաքականության փոփոխության,
- վերլուծել՝ արդյո՞ք ակտիվների, պարտավորությունների, կապիտալի ծավալի և/կամ կառուցվածքի փոփոխությունները պայմանավորված են ներքին թե արտաքին, տևական թե պատահական գործոններով, և արդյո՞ք այդ փոփոխությունները, շարժերը բնորոշ կամ ներհատուկ են տվյալ բանկին:

Ուսումնասիրելով ու վերլուծելով ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող տեղեկատվությունը՝ վերահսկողն իրականացնում է բանկի ՔԱՄԵԼՍ-ի գնահատում՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականի (ՔԱՄԵԼՍ) հաշվարկման, հաստատման և հրապարակման կարգի»: Ընդ որում, բանկի ՔԱՄԵԼՍ-ի գնահատականի հաշվարկման համար նախատեսված էլեկտրոնային ֆայլը լրացվում է Հավելված 6-ում ներկայացված մեկնաբանության համաձայն:

3.3.3. Վերահսկողական միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների մշակումը և ներկայացումը

Ամսական վերահսկողության ընթացքում տեղեկատվության վերլուծությունը պետք է ունենա հստակ կարգավորման ուղղվածություն այն իմաստով, որ վերահսկողի կողմից պետք է մշակվեն և առաջարկվեն լուծումներ՝ բացահայտված էական խնդիրների,

դրանց վերացման, ազդեցության թուլացման և հետագայում կանխման ուղղությամբ:

Վերլուծությունների ընթացքում ռիսկերի, խնդրահարույց հարցադրումների կամ ոլորտների բացահայտման պարագայում վերահսկողը բանկի վճարունակության, ֆինանսական վիճակի կայունության, երկարաժամկետ գործունեության ապահովման նպատակով անհրաժեշտության դեպքում պետք է առաջարկի վերահսկողական միջոցառումների ցանկ:

3.4. Ամսական վերահսկողության արդյունքների ամփոփումը, ներկայացումն ու պահպանումը

Արձանագրված խախտումների ներկայացումը Հանձնաժողովի քննարկմանը: Վիճակագրության վարչության ու Կենտրոնական բանկի այլ ստորաբաժանումների կողմից հայտնաբերված և բանկային վերահսկողության վարչություն գրավոր ներկայացված, ինչպես նաև բանկային վերահսկողության վարչության կողմից բացահայտված օրենսդրական խախտումների ներկայացումը Հանձնաժողովի քննարկմանը կարգավորվում է «2.4. Շաբաթվա ընթացքում արձանագրված խախտումների ներկայացումը Հանձնաժողովի քննարկմանը» բաժնով:

Ամսական վերահսկողության արդյունքների ամփոփումը: Հեռակա վերահսկողության համար անհրաժեշտ տեղեկատվության վերլուծության արդյունքում վերահսկողը տվյալ բանկի համար կազմում է ամսական հաշվետվություն (ըստ հավելված 9-ի): Ընդ որում, եթե տվյալ ամիսը եռամսյակի վերջին ամիսն է, ապա եռամսյակային հաշվետվության կազմման դեպքում տվյալ ամսվա համար լրացուցիչ ամսական հաշվետվություն չի կազմվում: Ամսական հաշվետվությունը պետք է կազմված լինի հինգ հիմնական բաժիններից՝ «ՔԱՄԵԼՍ-ի գնահատական», «Նորմատիվների մեծություն», «Բանկի ցուցանիշների ամփոփ գնահատականի (ՔԱՄԵԼՍ) ձևավորում», «Նշանակալից տեղեկատվություն կամ արձանագրված այլ դեպքեր» և «Գործողությունների պլան»:

Հաշվետվության «ՔԱՄԵԼՍ-ի գնահատական» բաժնում ներկայացվում են ՔԱՄԵԼՍ-ի յուրաքանչյուր տարրի գնահատականները:

«Նորմատիվների մեծություն» բաժնում ներկայացվում են բանկի նորմատիվների փաստացի մեծությունները, խախտումներ արձանագրելու դեպքում՝ խախտումների թիվը:

«Բանկի ցուցանիշների ամփոփ գնահատականի (ՔԱՄԵԼՍ) ձևավորում» բաժնում ներկայացվում են բանկի ՔԱՄԵԼՍ գնահատականի ձևավորման համար իրականացված վերլուծության արդյունքները: Դրանք ամփոփելիս վերահսկողը պետք է նկարագրի բանկում առկա հիմնախնդիրները, դրանց պատճառները և ազդեցությունը բանկի վիճակի վրա: Այս բաժնում ներառված դիտողությունները պետք է հիմնավորեն առաջարկված ՔԱՄԵԼՍ-ի գնահատականը:

«Նշանակալից տեղեկատվություն կամ արձանագրված այլ դեպքեր» բաժնում ներկայացվում են բանկի և Կենտրոնական բանկի միջև նամակագրության արդյունքները, բանկային վերահսկողության և Կենտրոնական բանկի այլ ստորաբաժանումների՝ մասնավորապես վիճակագրության վարչության կողմից արձանագրված խախտումները, բանկի նկատմամբ կիրառված պատժամիջոցները, խախտումների և պատժամիջոցների արձանագրությունների բովանդակությունը, վերջիններիս հետևանքները, ինչպես նաև արձանագրված այն դեպքերը, որոնք վերահսկողի կարծիքով պետք է ընդգրկվեն ամսական հաշվետվության մեջ:

«Գործողությունների պլան» բաժնում ռիսկեր կամ խնդրահարույց հարցադրումներ բացահայտելու դեպքում պետք է ներկայացնել առաջարկություններ վերահսկողական գործողությունների կամ միջոցառումների վերաբերյալ (մասնավորապես, բանկում արտահերթ ստուգում անցկացնելու նպատակահարմարությունը կամ անհրաժեշտությունը)՝ ուղղված դրանք վերացնելուն, ազդեցության թուլացմանը և հետագայում՝ կանխմանը:

Եթե ամսական վերլուծության արդյունքում մնացել են չպարզաբանված կամ խնդրահարույց հարցադրումներ, որոնք առավել մանրակրկիտ ուսումնասիրության առարկա են, և/կամ դրանք ներկայացվել են Հանձնաժողովի քննարկմանը, ապա վերջիններիս վերաբերյալ վերլուծության արդյունքները պետք է տեղ գտնեն հաջորդ ամսական հաշվետվությունների մեջ:

Ամսական վերահսկողության արդյունքների ներկայացումը և պահպանումը: Բանկի վերահսկողը, մինչև բանկի կողմից ամսական հաշվետվությունները Կենտրոնական բանկ ներկայացվելուն հաջորդող ամսվա 5-ը, բանկային վերահսկողության վարչության համապատասխան բաժնի պետին է ներկայացնում ամսական հեռակա հաշվետվությունը, իսկ մինչև հաջորդող ամսվա 10-ը համապատասխան բաժնի պետը հաշվետվությունը ներկայացնում է բանկային վերահսկողության վարչության պետին:

Ամսական հեռակա հաշվետվությունները, մինչև բանկերի կողմից ամսական հաշվետվությունները Կենտրոնական բանկ ներկայացնելուն հաջորդող ամսվա 15-ը, հանձնվում են Հանձնաժողովի քարտուղարին՝ Հանձնաժողովի նիստի օրակարգում ընդգրկելու և բանկի ՔԱՄԵԼՍ գնահատականը հաստատման ներկայացնելու նպատակով: Հանձնաժողովին ներկայացվելուց հետո եռօրյա ժամկետում հաշվետվությունները կարվում են բանկի գործի համապատասխան բաժիններում:

4. ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

4.1. Եռամսյակային վերահսկողության նպատակները

Եռամսյակային հեռակա վերահսկողության հիմնական նպատակը բանկի ներկա ու սպասվող ֆինանսական վիճակի և ռիսկերի գնահատումն ու վերլուծությունն է: Եռամսյակային հեռակա վերահսկողությունը պետք է ուղղված լինի բանկի շարունակական գործելու հնարավորության գնահատմանը, որը ենթադրում է բանկի գործունեության, ֆինանսական վիճակի փոփոխության, բանկին ներհատուկ ռիսկերի և ֆինանսական կայունության գնահատում ու վերլուծություն:

4.2. Եռամսյակային վերահսկողության տեղեկատվական աղբյուրները

Եռամսյակային հեռակա վերահսկողությունն իրականացվում է Կանոնակարգ 3-ով, ինչպես նաև «Երաշխիքային վճարները հաշվարկելու և բանկերի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին երաշխիքային վճարները հաշվարկելու, ավանդատուների թվի և հատուցման ենթակա գումարի վերաբերյալ հաշվետվության ներկայացման կարգով» սահմանված հաշվետվությունների, ՀՀ կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ հաստատված՝ «Բանկային գործունեության միասնական հաշվետվության» (այսուհետև՝ ԲԳՄՀ) և «Բանկերի հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերը և դրանց լրացման ցուցումները» կարգով սահմանված եռամսյակային հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների և բանկի գործունեության, ավանդների ընդունման և վարկերի տրամադրման կարգի ու պայմանների վերաբերյալ հրապարակվող, ինչպես նաև սույն ձեռնարկի «1.4. Հեռակա վերահսկողության տեղեկատվական աղբյուրները» բաժնում ներկայացված տեղեկատվական այլ աղբյուրներից ստացված տեղեկատվության վերլուծության հիման վրա:

4.3. Եռամսյակային վերահսկողության հիմնական ուղղությունները

Եռամսյակային հեռակա վերահսկողության ուղղությունները, բնագավառները, վերլուծությունների ոլորտները հիմնականում համընկնում են ամսական հեռակա վերահսկողության ուղղությունների, բնագավառների և ոլորտների հետ: Սակայն, ի լրումն ամսական հեռակա վերահսկողության, եռամսյակային վերահսկողության դեպքում վերահսկողին հասանելի են լրացուցիչ տեղեկատվություններ, որոնք պետք է պատշաճ վերլուծվեն ամբողջ տեղեկատվության հետ:

Եռամսյակային հեռակա վերահսկողության հիմնական ուղղություններն են՝

- եռամսյակային հրապարակվող հաշվետվությունների և այլ տեղեկատվության արժանահավատության գնահատումը և վերլուծությունը,
- բանկի ներկա ու սպասվող ֆինանսական վիճակի և ռիսկերի գնահատումն ու վերլուծությունը,
- վերահսկողական միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների մշակումն ու ներկայացումը:

4.3.1. Եռամսյակային հրապարակվող հաշվետվությունների և այլ տեղեկատվության արժանահավատության գնահատումը և վերլուծությունը

Վերահսկողը պետք է ձեռնամուխ լինի «3.3.1. ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին՝ բանկի գործունեության համապատասխանության ստուգումը» ենթաբաժնով սահմանվող ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին՝ բանկի գործունեության համապատասխանության ստուգմանը:

Վերահսկողը «Ֆինանսական հաշվետվությունների հրապարակման կարգով» սահմանված եռամսյակային հրապարակվող ֆինանսական հաշվետվությունները և «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ով սահմանված՝ հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ եռամսյակային հաշվետվությունները, ինչպես նաև ավանդների ընդունման և վարկերի տրամադրման կարգի ու պայմանների վերա-

բերյալ տեղեկատվությունը ստանալուց 15 օրվա ընթացքում պետք է կատարի ներքոհիշյալ ոլորտների ուսումնասիրությունն ու վերլուծությունը՝

- պարզել՝ արդյո՞ք մամուլում հրապարկվող հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ եռամսյակային հաշվետվությունը և հրապարակվող ֆինանսական հաշվետվությունները կազմված ու լրացված են, համապատասխանաբար, Կանոնակարգ 3-ի և «Բանկերի հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերը և դրանց լրացման ցուցումները», «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտների (այսուհետև՝ ՀՀՀՀՍ) պահանջներին համապատասխան, ինչպես նաև՝ արդյո՞ք բանկերն արժանահավատորեն և առանց խեղաթյուրող հանգամանքների են հրապարակել իրենց գործունեության, ավանդների ընդունման և վարկերի տրամադրման կարգի ու պայմանների վերաբերյալ տեղեկատվությունը,
- բացահայտել և ուսումնասիրել զանգվածային լրատվամիջոցներում հրապարակված տեղեկատվության արժանահավատությունը՝ արդյո՞ք արձանագրվել են տարբերություններ Կենտրոնական բանկ ներկայացված և մամուլում հրապարակված տեղեկատվությունների միջև: Արդյո՞ք դրանք պատահական բնույթ ունեն, թե տեխնիկական կամ անուշադրության սխալի, նպատակային կեղծիքի հետևանք են:

4.3.2. Բանկի ներկա և սպասվող ֆինանսական վիճակի, ռիսկերի գնահատումը և վերլուծությունը

Բանկի ներկա և սպասվող ֆինանսական վիճակի, ռիսկերի գնահատումն ու վերլուծությունը ենթադրում է՝

- բանկի ցուցանիշների ամփոփ գնահատականի (ՔԱՄԵԼՍ) ձևավորումը,
- բանկի ռիսկերի գնահատումն ու վերլուծությունը,
- բանկի ներկա և սպասվող ֆինանսական վիճակի գնահատումն ու վերլուծությունը:

Եռամսյակային հեռակա վերահսկողությունը ենթադրում է «3.3.2. Բանկի ցուցանիշների ամփոփ գնահատականի (ՔԱՄԵԼՍ) ձևավորումը» ենթաբաժնի դրույթների համաձայն՝ բանկի տվյալ եռամսյակի վերջին ամսվա ՔԱՄԵԼՍ գնահատականի ձևավորումը, տվյալ եռամսյակի բանկի ներկա և սպասվող ֆինանսական վիճակի գնահատումն ու վերլուծությունը, ինչպես նաև «1.4. Հեռակա վերահսկողության տեղեկատվական աղբյուրները» բաժնում ներկայացված և ԲԳՄՀ միջոցով ստացված լրացուցիչ տեղեկատվության հիման վրա եռամսյակային կտրվածքով բանկի հաշվեկշռի կառուցվածքի, ՔԱՄԵԼՍ-ի գնահատականների, ինչպես նաև ստորև ներկայացված ակտիվների որակի, կապիտալի համարժեքության, եկամտաբերության, իրացվելիության, շուկայական ռիսկերի նկատմամբ զգայունության, կառավարման որակի և ղեկավարության գործունեության գնահատումն ու վերլուծությունը:

Վերահսկողը պետք է ուսումնասիրի ստորև ներկայացված ոլորտներում՝ եռամսյակի ընթացքում արձանագրված և սպասվող հիմնախնդիրները: Այդ ոլորտների վերլուծությունն ունի ուղեցուցային բնույթ, ինչը նշանակում է, որ վերահսկողը եռամսյակային հաշվետվության մեջ արտացոլում է միայն իր համար էական համարվող հարցադրումները:

Ակտիվների որակի գնահատումն ու վերլուծությունը: Բանկի ակտիվների որակի վերլուծությունը հիմնականում իրականացվում է ՀՀ կենտրոնական բանկ ներկայացված ամսական հաշվետվությունների, ինչպես նաև վարկային ռեգիստրից ստացված տվյալների հիման վրա: Վերլուծության համար անհրաժեշտ է՝

- ուսումնասիրել ակտիվների ծավալի, կառուցվածքի և որակի փոփոխությունների ընդհանուր միտումները, բացահայտել դրանց բնույթը և փոփոխությունների հիմնական պատճառները,
- վերլուծել եկամտաբեր և ոչ եկամտաբեր ակտիվները, դրանց կառուցվածքը և փոփոխության միտումները,
- ուսումնասիրել աշխատող և չաշխատող ակտիվները, դրանց կառուցվածքն ու փոփոխությունները, գնահատել ակտիվների դասերի միջև տեղի ունեցած շարժերը, հնարավոր միտումները՝ բացահայտելով առանձնապես խոշոր և ռիսկային շարժերն ու դրանց պատճառները: Ուսումնա-

սիրել վարկերի, դեբիտորական պարտքերի, ներդրումային արժեթղթերի հնարավոր կորուստների դիմաց ընդհանուր և հատուկ պահուստներին կատարվող մասհանումների մեծությունը, փոփոխությունները, ինչպես նաև վերջինիս հիմնական պատճառներն ու ընդհանուր միտումները,

- ուսումնասիրել ակտիվների վերաձևակերպումների հնարավորությունները՝ կապված ակտիվների դասերի սպասվող խստացումների, բանկի և դրա հաճախորդների վերաբերյալ հայտնի դարձած տեղեկատվության հետ,
- վերլուծել ակտիվների խոշոր դասերը՝ ակտիվների կենտրոնացումն ըստ տեսակների և գործիքների (կանխիկ միջոցներ, վարկային պորտֆել, դեբիտորական պարտքեր, ֆինանսական ներդրումներ, նյութական ու ոչ նյութական ակտիվներ), բացահայտել կենտրոնացման պատճառները և հնարավոր խնդիրներն ու դրանց ազդեցությունը: Ուսումնասիրել տնտեսության այն ճյուղերի կամ ոլորտների ներկա և սպասվող հնարավոր վիճակները, որտեղ արձանագրվել է կենտրոնացում: Այս խնդրի վերլուծության ամբողջականության ապահովման նպատակով, օգտվելով Կենտրոնական բանկի կողմից պատրաստված մակրոտնտեսական, ինչպես նաև տնտեսության տարբեր ճյուղերի իրավիճակների վերլուծություններից, կարևոր է ուսումնասիրել վերոնշյալ փաստաթղթերում ներկայացված տնտեսության ընդհանուր զարգացման միտումները, իրադարձությունները, որոնք կարող են ազդեցություն թողնել կենտրոնացման, ինչպես նաև ակտիվների որակի, կառուցվածքի և ծավալի վրա (բանկի ակտիվների որակի վրա ճյուղերում սպասվող վիճակի ազդեցության գնահատումն իրականացվում է առնվազն տարին մեկ անգամ),
- ուսումնասիրել ակտիվների կենտրոնացման աստիճանն ըստ փոխառուների, դրանց վարկունակությունը և ֆինանսական վիճակի հավանական փոփոխությունների ազդեցությունը ակտիվների որակի վրա,
- գնահատել բանկի հետհաշվեկշռային գործառնությունները, դրանց հետ կապված ռիսկերը, մասնավորապես՝ կենտրոնացումն ըստ գործիքների, փոխառուների, ճյու-

ղերի, և հնարավոր ազդեցությունը բանկի հաշվեկշռի, ֆինանսական ցուցանիշների վրա,

- ուսումնասիրել ակտիվների ժամկետայնությունը՝ գնահատելով՝ արդյո՞ք դիտվում է ակտիվների ժամկետայնության երկարացում թե կարճացում, ինչպես է դա անդրադառնում բանկի ակտիվների եկամտաբերության և ռիսկայնության վրա: Այս առումով ավելի ամբողջական լինելու համար կարևոր է դիտարկել նաև պարտավորությունների ժամկետայնությունը՝ վերջինս համադրելով ակտիվների ժամկետայնության կառուցվածքի փոփոխության հետ,
- ուսումնասիրել ՀՀ պետական պարտատոմսերի շուկայում Գործակալի/Դիլերի կարգավիճակ ունեցող բանկերի կողմից ՀՀ պետական (գանձապետական) պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման կարգերով սահմանված Կենտրոնական բանկ ներկայացվող նախորդ վեց ամսվա գործունեության հաշվետվությունը և առաջիկա վեց ամսվա պարտատոմսերի շուկայում գործունեության ռազմավարությունը (այս ուսումնասիրությունը պետք է իրականացնել առնվազն կիսամյակը մեկ անգամ):

Քանի որ բանկի գործունեության ընթացքում հիմնականում ի հայտ է գալիս վարկային ռիսկը, ապա վերահսկողի հատուկ ուշադրության առարկա պետք է հանդիսանա վարկային պորտֆելի վերլուծությունը: Դա իրականացվում է ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող բանկի վարկային պորտֆելին վերաբերող ամսական հաշվետվությունների, ինչպես նաև վարկային ռեգիստրից ստացված տվյալների հիման վրա: Ուսումնասիրության հիմնական արդյունքը պետք է լինի վարկային պորտֆելի որակի գնահատումը և վերլուծությունը: Ստորև ներկայացված են վարկային պորտֆելի որակի գնահատման ժամանակ վերլուծության ենթակա տարրերը.

- վարկերի ծավալների և ակտիվներում դրանց տեսակարար կշռի փոփոխության միտումների, դրանք պայմանավորող պատճառների վերլուծություն,
- ժամկետային, երկարաձգված և խնդրահարույց վարկային ներդրումների վերլուծություն,
- վարկային ներդրումների կենտրոնացումներ,

- բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին տրամադրված վարկային միջոցներ,
- խոշոր փոխառուներ, նրանց տրամադրված միջոցներ,
- օվերդրաֆտներ, վարկային գծեր, վարկային գծերի չօգտագործված մասեր,
- տնտեսության այն ճյուղի կամ ոլորտի ներկա և սպասվող հնարավոր վիճակները, որտեղ կատարվել են խոշորածավալ վարկային ներդրումներ (վերլուծությունը կատարվում է՝ օգտվելով Կենտրոնական բանկի կողմից պատրաստված մակրոտնտեսական, ինչպես նաև տնտեսության տարբեր ճյուղերում տիրող իրավիճակների վերլուծություններից՝ առնվազն տարին մեկ անգամ),
- իրականացնել վարկային պորտֆելի վերլուծություն ստրես-տեստերի միջոցով (հավելված 2):

Եկամտաբերություն (եկամուտներ, ծախսեր, շահույթ/վնաս): Եկամուտների և ծախսերի վերլուծության հիմնական նպատակը ներքին և արտաքին գործոնների ազդեցության գնահատումն է բանկի սպասվող եկամուտների մակարդակի, միտումների և որակի վրա, ինչը հնարավորություն է տալիս վերահսկողին եզրակացություն կատարել բանկի գործառնությունների արդյունավետության, ինչպես նաև ակտիվների աճի ապահովման՝ բանկի ներքին պոտենցիալի վերաբերյալ: Եկամուտների և ծախսերի վերլուծությունը չի կարող ամփոփ լինել, եթե հաշվի չառնվեն եկամուտների հաստատուն և շարունակական բնույթը, ինչպես նաև դրանց կապը բանկի դրամական հոսքերի հետ: Բանկի եկամտաբերության վերլուծությունը հիմնականում իրականացվում է ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող ամսական հաշվետվությունների տվյալների հիման վրա: Բանկի եկամտաբերությունը վերլուծելիս անհրաժեշտ է.

- ուսումնասիրել եկամուտների և ծախսերի մակարդակի փոփոխություններն ու միտումները, դրանց կառուցվածքը, ազդեցությունը բանկի շահութաբերության մակարդակի վրա: Բանկի եկամտաբերության մասին եզրակացություններն առավել ամբողջական դարձնելու համար անհրաժեշտ է վերլուծել նաև եկամուտների և ծախսերի իրական հոսքը (դրամական հոսքերի մասին հաշվետվությունից),
- բանկի շահութաբերության ցուցանիշների փոփոխության արձանագրման պարագայում ուսումնասիրել բանկի

ակտիվներում և պարտավորություններում արձանագրված հնարավոր կառուցվածքային տեղաշարժերը, որոնք հանգեցրել են եկամուտների աղբյուրների փոփոխության և կարող են ազդել բանկի շահութաբերության մակարդակի վրա: Միաժամանակ, գնահատել՝ արդյո՞ք վերջիններս վկայում են բանկի՝ ռիսկային գործարքների մեջ ներգրավման մասին, և վերլուծել, թե ինչպիսի տեսակարար կշիռ ունի բանկի ներդրումային պորտֆելի եկամտաբերությունն ընդհանուր եկամտաբերության մեջ. արդյո՞ք վերջինս աճել է թե նվազել, արդյո՞ք բանկի ղեկավարությունը բացահայտել է խնդիրների ծագման աղբյուրը և ձեռնարկել ուղղիչ միջոցառումներ,

- ուսումնասիրել ակտիվներից ստացված հասույթը և պարտավորությունների գծով ծախսերը, մասնավորապես՝ տոկոսադրույքների միջև տարբերությունը, վերջինիս փոփոխությունների միտումները: Վերլուծել բանկի «թանկ» միջոցներից կախվածության աստիճանը և ոչ եկամտաբեր ոլորտներում խոշոր ներդրումների առկայությունը,
- գնահատել եկամտաբերությունն ըստ ակտիվների և կապիտալի, դրանց փոփոխությունները և միտումները,
- վերլուծել՝ արդյո՞ք բանկի եկամտաբերության (ըստ կապիտալի) փոփոխությունը պայմանավորված է ակտիվների եկամտաբերությամբ թե բանկի լևերեջի փոփոխությամբ, գնահատել դրա տևականությունը և հնարավոր հետևանքները բանկի եկամտաբերության ընդհանուր մակարդակի վրա,
- գնահատել եկամուտների կենտրոնացման առկայությունն ըստ ակտիվների տեսակների, շուկաների, ճյուղերի, փոխառուների, նման կենտրոնացման հետ կապված ռիսկերը, և դրանց հնարավոր ազդեցությունը բանկի եկամուտների և շահութաբերության վրա,
- հետագայում բանկի շահութաբերության մակարդակը և դրա հնարավոր փոփոխությունները գնահատելու համար հաշվի առնել ակտիվների դասակարգումների և դասակարգված ակտիվների դասերի խստացման հետևանքով հնարավոր կորուստների գծով սպասվող լրացուցիչ հատկացումների, դատարանի միջոցով բանկի դեմ հնարավոր

պահանջների, ինչպես նաև խախտումների դիմաց Կենտրոնական բանկի կողմից գանձվելիք միջոցների հնարավորությունները, մակրոտնտեսական իրավիճակի փոփոխության ազդեցությունը բանկի շահութաբերության մակարդակի վրա (կատարվում է՝ օգտվելով Կենտրոնական բանկի պատրաստած մակրոտնտեսական, ինչպես նաև տնտեսության տարբեր ճյուղերում տիրող իրավիճակի վերաբերյալ վերլուծություններից և առնվազն տարին մեկ անգամ),

– գնահատել և վերլուծել բանկի շահութաբերության փոփոխության ազդեցությունը կապիտալի նվազագույն մակարդակի վրա համապատասխան պահուստների ձևավորման տեսանկյունից, ինչպես նաև եկամուտների բավարարության աստիճանը բանկի ընդլայնման/աճի համար անհրաժեշտ կապիտալացման մակարդակն ապահովելու և շահաբաժիններ վճարելու առումով:

Իրացվելիություն/բանկի ակտիվների և պարտավորությունների կառավարում: Իրացվելիության վերլուծությունն իրականացվում է ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող շաբաթական և ամսական հաշվետվություններից ստացված՝ բանկի ակտիվների և պարտավորությունների, դրանց ժամկետայնության, արժութային կառուցվածքի վերաբերյալ տեղեկատվության հիման վրա: Իրացվելիության վերլուծության արդյունքում ձևավորվում է բանկի՝ ժամանակին և առանց զգալի ծախսերի պարտավորությունների բավարարման և ակտիվների ֆինանսավորման իրական հնարավորությունների, դրանց միտումների և սպասվող փոփոխությունների գնահատականը: Իրացվելիության վերլուծություն իրականացնելու համար անհրաժեշտ է.

– ուսումնասիրել բանկի ընդհանուր և ընթացիկ իրացվելիության մակարդակը: Պարզել՝ արդյո՞ք բանկը հետևում է Կենտրոնական բանկի կողմից սահմանված իրացվելիության նվազագույն պահանջներին: Իրացվելիության նորմատիվների խախտում արձանագրելու պարագայում բացահայտել ընդհանուր և ընթացիկ իրացվելիության նվազագույն պահանջներին անհամապատասխանության պատճառները,

- ուսումնասիրել Կանոնակարգ 2-ով սահմանված բարձր իրացվելի ակտիվների ծավալը և կառուցվածքը: Փոփոխությունների արձանագրման պարագայում բացահայտել այն հաշվեկշռային հաշիվները, որոնք հանգեցրել են նման վարքագծի,
- ուսումնասիրել՝ արդյո՞ք ընթացիկ իրացվելիության նորմատիվի խախտումն արձանագրվել է ցպահանջ պարտավորությունների փոփոխության պատճառով և այդ դեպքում բացահայտել պարտավորությունների կառուցվածքի և ծավալի փոփոխության հիմնական պատճառները,
- գնահատել բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների սպասվող փոփոխությունների ազդեցությունը բանկի իրացվելիության գնահատականի վրա,
- գնահատել բանկում իրացվելիության արտահերթ պահանջների բավարարման և լրացուցիչ միջոցների ներգրավման հնարավորությունը բանկի իրացվելիության հնարավոր վատթարացման դեպքում,
- գնահատել բանկի իրացվելիության մակարդակի «կախվածության» աստիճանը փոխառու և ակտիվների վաճառքից ստացված միջոցներից,
- գնահատել ներգրավված միջոցների կայունությունը՝ «թանկ» և «անկայուն» ֆինանսավորման աղբյուրներից կախվածության տեսանկյունից,
- գնահատել ներգրավման և տեղաբաշխման ժամկետների, արժույթների միջև անհամապատասխանության առկայությունը և աստիճանը՝ ըստ հավելված 5-ում ներկայացված իրացվելիության ռիսկի վերլուծության մեթոդաբանության:

Կապիտալ, կապիտալի համարժեքություն: Կապիտալի համարժեքության վերլուծությունն իրականացվում է ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող ամսական հաշվետվությունների միջոցով ստացված տեղեկատվության հիման վրա: Բանկի կապիտալի համարժեքությունը գնահատվում է ոչ միայն նորմատիվների պահանջների, այլև ակտիվների որակի, հետհաշվեկշռային գործառնությունների, բանկի իրացվելիության և շահութաբերության վերլուծությունների արդյունքների հիման վրա, քանի որ բանկի կապի-

տալի համարժեքությունը վերջին հաշվով ուղղակի թե անուղղակի ձևով կրում է այս ոլորտներում բացահայտված խնդիրների ազդեցությունը:

Այս առումով բանկի կապիտալի համարժեքության վերաբերյալ գնահատականները և եզրակացությունները պետք է հիմնվեն համապատասխան ոլորտների ուսումնասիրությունների վրա, ինչի համար անհրաժեշտ է.

- ուսումնասիրել՝ արդյո՞ք բանկը հաշվետու ժամանակաշրջանում խախտել է ընդհանուր կապիտալի և կապիտալի համարժեքության նորմատիվները,
- բացահայտել նախորդ ժամանակաշրջանի համեմատությամբ նորմատիվների հաշվարկի մեջ ընդգրկված ցուցանիշներում արձանագրված փոփոխությունները: Մասնավորապես, որևէ նորմատիվի խախտման կամ անկման դեպքում բացահայտել, թե կապիտալի համարժեքության վատթարացումը պայմանավորված է ռիսկով կշռված ակտիվների հանրագումարի թե կապիտալի ընդհանուր մեծության փոփոխությամբ,
- վերլուծել ռիսկով կշռված ակտիվների և կապիտալի մեջ մտնող տարրերի շարժը,
- գնահատել սպասվող շահույթի և/կամ վնասի մակարդակի, կենտրոնացման հետ կապված խնդիրների, ակտիվների ռիսկայնության փոփոխությունների, հավանական դասակարգումների ու դուրսգրումների, հետհաշվեկշռային գործառնությունների ազդեցությունը բանկի կապիտալի համարժեքության վրա,
- վերլուծել ու գնահատել նորմատիվային և հաշվեկշռային կապիտալների ծավալի ու կառուցվածքի փոփոխության միտումները, բացահայտել այն գործոնները, որոնք նպաստել են այդ փոփոխություններին,
- բացահայտել՝ արդյո՞ք բանկն ի վիճակի է պահպանել կապիտալի աճի նորմալ տեմպերը՝ հաշվի առնելով ակտիվների աճը և ռիսկայնության միտումները,
- գնահատել բանկի կապիտալի համարժեքությունը՝ հաշվի առնելով իր կողմից իրականացվող գործառնությունների ուղղությունները, այդ թվում՝ բանկի հետհաշվեկշռային

պարտավորությունները, դասակարգված ակտիվների ծավալը և բանկի կառավարման որակը,

– ուսումնասիրել ֆինանսական շուկաներից նոր ռեսուրսների ներգրավման, ինչպես նաև բանկի բաժնետերերի՝ լրացուցիչ ներդրումներ կատարելու հնարավորությունները:

Զգայունություն: Շուկայական ռիսկերի նկատմամբ բանկի զգայունությունը գնահատելու և վերլուծելու համար առաջնային տեղեկատվության աղբյուր են ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող ամսական հաշվետվությունները: Զգայունության վերլուծության արդյունքում պետք է գնահատել, թե բանկը որքանով է զգայուն շուկայական ռիսկերի նկատմամբ և արդյո՞ք կարողանում է գնահատել ու կառավարել դրանք: Շուկայական ռիսկերի վերլուծությունը ներառում է տոկոսադրույքի, փոխարժեքի, գնային, գործառնական, գործարարական և այլ շուկայական ռիսկերի ուսումնասիրությունը: Վերլուծության ամբողջականության ապահովման նպատակով անհրաժեշտ է.

– ուսումնասիրել՝ արդյո՞ք բանկը խախտել է արտարժույթի տնօրինման նորմատիվները, և ինչպիսի փոփոխություններ են արձանագրվել արտարժույթի տնօրինման նորմատիվի հաշվարկում օգտագործվող ցուցանիշներում: Նորմատիվների խախտման դեպքում բացահայտել նորմատիվների խախտման, ինչպես նաև արտարժութային դիրքերի կառուցվածքի փոփոխության հիմնական պատճառները (օրինակ, փոփոխությունը պայմանավորված է ներքին թե՞ արտաքին գործոններով, նորմատիվը խախտվել է արտարժույթով ակտիվների աճի թե՞ դրամի նկատմամբ արտարժույթի հաշվարկային փոխարժեքի փոփոխության պատճառով): Գնահատել արտարժութային ռիսկերն ըստ հավելված 2-ում ներկայացված ստրես տեստերի և հավելված 4-ում ներկայացված VaR մեթոդաբանության:
– գնահատել տոկոսադրույքի ռիսկը, որն իրականացվում է բանկի տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների միջև ճեղքվածքի, ինչպես նաև դյուրացիայի հաշվարկի միջոցով (ըստ հավելված 2-ում ներկայացված ստրես տեստերի և հավելված 3-ում ներկայացված GAP-ի և Դյուրացիայի մեթոդաբանությունների): Վերլուծելով ճեղքվածքը, ինչպես նաև վերջինիս միտում-

ների վրա ազդող գործոնները՝ բացահայտել այն պատճառները, որոնց արդյունքում ձևավորվել է ճեղքվածքը,
- գնահատել բանկի ակտիվների նյութականացման աստիճանը, դրա տեսակարար կշիռը բանկի ակտիվներում կամ կապիտալում, վերջինիս միտումները՝ ներառյալ հիմնական միջոցները, բանկի օգտին գրավադրված գույքը:
- գնահատել այն գործոնները և/կամ երևույթները, որոնք հանգեցրել են բանկի ակտիվների նյութականացման նման մակարդակին, ինչպես նաև բանկի ղեկավարության ունակությունը՝ «հարմարվել» շուկայական փոփոխություններին և կառավարել ակտիվների նյութականացմամբ պայմանավորված ռիսկերը,
- գնահատել բանկի՝ շուկայական ռիսկերի ծածկման նպատակով բավարար կապիտալի առկայության հնարավորությունը և արագ ու նվազագույն կորուստներով շուկայական փոփոխություններին հարմարվելու ունակությունը:

Կառավարում և մասնակիցներ: Բանկի կառավարման որակի և մասնակիցների վերլուծությունն իրականացվում է ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող կանոնադրական կապիտալի ձևավորման և բանկի աշխատակիցների վերաբերյալ ամսական հաշվետվությունների տվյալների հիման վրա: Բանկի կառավարումը և բանկի գործունեության վրա իր մասնակիցների ազդեցությունը գնահատելիս անհրաժեշտ է.
- ուսումնասիրել բանկի կառավարման համակարգը, մասնավորապես՝ արդյո՞ք բանկում կառավարման տարբեր մարմինների միջև առկա են իրավասությունների և պարտականությունների հստակ տարանջատում, որոշումների ընդունման պատշաճ ապակենտրոնացում բանկի աշխատակիցների և տարբեր կառույցների գործառույթներին համապատասխան, ինչպես նաև բանկի խորհրդի անդամները և գործադիր մարմինը՝ անկախ են բանկի մասնակիցներից և խոշոր ավանդատուներից,
- ուսումնասիրել բանկի ներքին հսկողության համակարգը, մասնավորապես՝ ներքին աուդիտի գործունեությունը՝ ուշադրություն դարձնելով բանկի ներքին աուդիտի խմբի գործունեության մասնագիտական մակարդակի վրա: Ար-

դյո՞ք հաշվետու ժամանակաշրջանում առևտրային բանկը թույլ է տվել թերացումներ կամ խախտումներ, և դրանք պետք է կանխվեին ներքին աուդիտի կողմից,

- ուսումնասիրել բանկի կողմից թույլ տրված խախտումների և Կենտրոնական բանկի կողմից կիրառված պատժամիջոցների հաճախականությունը, ինչպես նաև պատժամիջոցների, մասնավորապես՝ հանձնարարականների կատարման ընթացքը,
- ուսումասիրել, թե արդյո՞ք բանկի կողմից հետևողականորեն իրականացվում են ռազմավարական ծրագրերով սահմանված միջոցառումները, և արդյո՞ք դրանք ու բանկի փաստացի ցուցանիշները ընդհանուր առմամբ համադրելի են,
- ուսումնասիրել բանկի աշխատակիցների որակավորման մակարդակն ու աշխատանքային փորձը. մասնավորապես՝ միջին և բարձր օղակի ղեկավարներն ունե՞ն պատշաճ մասնագիտական պատրաստվածություն (կրթություն, մասնագիտական փորձ, վերապատրաստումներ), արդյո՞ք բանկի աշխատակիցների քանակը համապատասխանում է բանկի կողմից իրականացվող գործառնությունների ծավալին և որակին, ինչպես նաև բանկում առկա՞ է նոր աշխատակիցների ընտրության և վերապատրաստման գործող ծրագիր,
- ուսումնասիրել, թե հաշվետու ժամանակաշրջանում ինչպիսի փոփոխություններ են տեղի ունեցել բանկի սեփականատերերի կազմում, և դրանք ինչպիսի ազդեցություն կունենան բանկի ֆինանսական վիճակի և բարի համբավի վրա:

Վերահսկողի կողմից կատարված ուսումնասիրությունները և վերլուծությունները պետք է ուղղված լինեն նաև բանկի ռիսկերի, ինչպես նաև սպասվող ֆինանսական վիճակի, դրա հավանական փոփոխությունների գնահատմանն ու վերլուծությանը:

Բանկի ռիսկերի գնահատում ու վերլուծություն: Եռամսյակային հեռակա վերահսկողության ընթացքում վերահսկողը պետք է ձեռնամուխ լինի ռիսկերի, մասնավորապես՝ վարկային, իրացվելիության, տոկոսադրույքի, արտարժութային, գնային, գործառնական և

բարի համբավի ռիսկերի գնահատմանը և վերլուծությանը (սահմանումները և գնահատման ընդհանուր սկզբունքները տրված են հավելված 1-ում):

Եռամսյակային հեռակա վերահսկողության ընթացքում պետք է բացահայտել բանկի գործունեության այն բնագավառները, որոնք ձևավորված պայմաններում առավել զգայուն ու խոցելի են ռիսկերի հանդեպ, և/կամ նախորդ հաշվետու ժամանակաշրջանում խնդրահարույց հարցադրումների (շահույթի նվազման, ծախսերի ավելացման, հիմնական ցուցանիշների՝ մասնավորապես հիմնական տնտեսական նորմատիվների էական փոփոխության) պատճառ են հանդիսացել:

Վերոնշյալ բնագավառների և «4.2. Եռամսյակային վերահսկողության տեղեկատվական աղբյուրները» բաժնի տեղեկատվության ոլորտների ուսումնասիրության միջոցով պետք է գնահատել տվյալ բանկին ներհատուկ բոլոր ռիսկերը: Վարկային, իրացվելիության, տոկոսադրույքի, արտարժութային ռիսկերը պետք է գնահատել հավելվածներ 2-5-ում ներկայացված մեթոդաբանությունների համաձայն: Յուրաքանչյուր ռիսկի տեսակ, ըստ հավելված 1-ում ներկայացված ռիսկերի գնահատման մեթոդաբանության, պետք է գնահատել որպես բարձր, միջին կամ ցածր: Միևնույն ժամանակ, վերլուծելով վերոնշյալ ռիսկերի միտումները, պետք է գնահատել դրանց վարքագիծը՝ աճող, կայուն և նվազող:

Բանկի սպասվող ֆինանսական վիճակի գնահատում և վերլուծություն: Բանկի հաշվեկշռի, ՔԱՄԵԼՍ-ի գնահատականների, վերոնշյալ ոլորտների, բանկի ռիսկային ոլորտների և ռիսկերի ուսումնասիրության ու վերլուծության ընթացքում անհրաժեշտ է՝

- ուսումնասիրել, թե ինչպիսի փոփոխություններ են սպասվում բանկում, մասնավորապես՝ բանկի ֆինանսական վիճակում, հաշվի առնելով Կենտրոնական բանկ ներկայացվող ռազմավարական ծրագրի դրույթները (կապված բանկի կողմից առաջարկվող նոր ծառայությունների և նախատեսվող գործառնությունների, կառավարման սկզբունքների ներդրման հետ), ընդհանուր մակրոտնտեսական և ֆինանսական շուկաների, ինչպես նաև այլ տնտեսական պայմանների փոփոխության հնարավորությունները, նոր երևույթների ի հայտ գալու հետ կապված իրադարձությունները և դրանց ազդեցությունը բանկի սպասվող ֆինան-

սական վիճակի վրա (ընդհանուր մակրոտնտեսական իրավիճակի փոփոխության ազդեցությունը բանկի սպասվող իրավիճակի վրա կատարվում է՝ օգտվելով Կենտրոնական բանկի կողմից կազմված մակրոտնտեսական, ինչպես նաև տնտեսության տարբեր ճյուղերում տիրող իրավիճակի վերաբերյալ վերլուծություններից՝ առնվազն տարին մեկ անգամ),

- գնահատել բանկի ֆինանսական վիճակի կայունությունը, կանխատեսել դրա հավանական փոփոխությունը բանկի շարունակական գործելու հնարավորության առումով,
- ուսումնասիրել հաշվետու ժամանակաշրջանում բանկի նկատմամբ հանրության կարծիքի փոփոխությունը, դա պայմանավորող դեպքերը: Մասնավորապես՝ արդյո՞ք վերջինս պայմանավորված է բանկի ղեկավար անձանց կամ սեփականատերերի մասին զանգվածային լրատվամիջոցներում հրապարակումներով,
- ուսումնասիրել բանկի նկատմամբ դատական գործընթացների առկայությունը, նոր գործընթացի հարուցման, սկսված դատական գործընթացներում էական դեպքերի արձանագրման կամ հայտնաբերման, ինչպես նաև տվյալ բանկի նկատմամբ դատարանի կողմից այս կամ այն որոշումների կայացման հնարավորությունները, և դրանց ազդեցությունը բանկի ֆինանսական վիճակի և կայունության վրա:

4.3.3. Վերահսկողական միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների մշակումը և ներկայացումը

Եռամսյակային վերահսկողության ընթացքում տեղեկատվության վերլուծությունը պետք է ունենա հստակ կարգավորման ուղղվածություն, այսինքն՝ վերահսկողի կողմից պետք է մշակվեն և առաջարկվեն բացահայտված էական խնդիրների լուծումներ, որոնք պետք է ուղղված լինեն դրանց վերացմանը, ազդեցության թուլացմանը և հետագայում դրանց հանդես գալու կանխմանը:

Վերլուծությունների ընթացքում ռիսկերի, խնդրահարույց հարցադրումների կամ ոլորտերի բացահայտման պարագայում վերահսկողը բանկի վճարունակության, ֆինանսական վիճակի կայունության և երկարաժամկետ գործունեության ապահովման նպա-

տակով պետք է անհրաժեշտության դեպքում առաջարկի վերահսկողական միջոցառումների ցանկ:

4.4. Եռամսյակային վերահսկողության արդյունքների ամփոփումը, ներկայացումն ու պահպանումը

Օրենսդրության խախտումների բացահայտումը, արձանագրումն ու ներկայացումը Համձնաժողովի քննարկմանը: «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածով սահմանված օրենսդրության խախտումների (եռամսյակային ֆինանսական հաշվետվությունների հրապարակման և Կենտրոնական բանկ ներկայացման ուշացում, դրանցում անարժանահավատ տվյալների արտացոլում կամ թերի տեղեկատվության հրապարակում) բացահայտման պարագայում կազմվում են արձանագրություններ, որոնցում նկարագրվում են բանկի կողմից թույլ տրված խախտումները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ կցվում խախտումները հիմնավորող այլ փաստաթղթեր: Վերահսկողը պետք է ձեռնամուխ լինի նաև «3.3.1. ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին՝ բանկի գործունեության համապատասխանության ստուգում» բաժնի «Օրենսդրության խախտումների բացահայտումը և արձանագրումը» ենթաբաժնով սահմանված ՀՀ կենտրոնական բանկի, մասնավորապես՝ վիճակագրության վարչության կողմից արձանագրված «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածով սահմանված՝ ֆինանսական և այլ հաշվետվությունների ներկայացման կարգի ու պայմանների խախտումների և (կամ) այդ փաստաթղթերում կեղծ կամ անարժանահավատ տվյալներ ներկայացնելու փաստերի, ինչպես նաև վերոնշյալ օրենքի 41-րդ և 60-րդ հոդվածներով սահմանված՝ բանկային գործունեությունը կարգավորող այլ օրենքների, դրանց հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի պահանջների խախտումների, ինչպես նաև բանկի կողմից չհիմնավորված ռիսկային գործունեություն իրականացնելու փաստերի բացահայտմանը: Արձանագրությունները՝ բաժնի պետի և բանկային վերահսկողության վարչության պետի ստորագրությամբ, երեք օրվա ընթացքում հանձնվում են տեղեկատվության հավաքագրման, կարգավորման և արխի-

վացման բաժին՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով բանկի կամ նրա ղեկավարի նկատմամբ պատասխանատվության միջոցի կիրառման վարույթն ապահովելու նպատակով:

Վիճակագրության վարչության ու Կենտրոնական բանկի այլ ստորաբաժանումների կողմից հայտնաբերված և բանկային վերահսկողության վարչություն գրավոր ներկայացված, ինչպես նաև բանկային վերահսկողության վարչության կողմից բացահայտված օրենսդրական խախտումների ներկայացումը Հանձնաժողովի քննարկմանը կարգավորվում է «2.4. Շաբաթվա ընթացքում արձանագրված խախտումների ներկայացումը Հանձնաժողովի քննարկմանը» բաժնով:

Եռամսյակային վերահսկողության արդյունքների ամփոփումը, ներկայացումն ու պահպանումը: Եռամսյակային հեռակա վերահսկողության համար անհրաժեշտ փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում վերահսկողը կազմում է եռամսյակային ամփոփ հաշվետվություն: Ընդ որում, եռամսյակային հաշվետվությունը կարգավորվում է սույն ձեռնարկի «3.4. Ամսական վերահսկողության արդյունքների ամփոփումը, ներկայացումն ու պահպանումը» բաժնով սահմանված ամսական հեռակա վերահսկողության հաշվետվական ձևով և ընթացակարգերով: Ի լրումն ամսական հեռակա հաշվետվության՝ եռամսյակային հեռակա հաշվետվության մեջ լրացուցիչ «Ռիսկեր» բաժնում պետք է արտացոլել վերահսկողի կողմից տվյալ բանկի ռիսկերի գնահատման ու վերլուծության արդյունքները: Տվյալ բանկի վերահսկողը, մինչև բանկի կողմից ամսական և եռամսյակային հաշվետվությունները՝ Կենտրոնական բանկ ներկայացնելու հաջորդ ամսվա 10-րդ աշխատանքային օրը, բանկային վերահսկողության վարչության համապատասխան բաժնի պետին է ներկայացնում եռամսյակային հեռակա հաշվետվությունը, իսկ մինչև հաշվետվությունների ներկայացման հաջորդ ամսվա 15-ը՝ համապատասխան բաժնի պետը հեռակա վերահսկողության հաշվետվությունը ներկայացնում է բանկային վերահսկողության վարչության պետին:

Եռամսյակային հեռակա հաշվետվությունները, մինչև բանկի կողմից ամսական և եռամսյակային հաշվետվությունները՝ Կենտրո-

նական բանկ ներկայացնելու հաջորդ ամսվա 15-րդ աշխատանքային օրը, հանձնվում են Հանձնաժողովի քարտուղարին՝ Հանձնաժողովի նիստի օրակարգում ընդգրկելու և բանկի ՔԱՄԵԼՍ գնահատականը Հանձնաժողովի հաստատմանը ներկայացնելու նպատակով: Եռամսյակային հեռակա հաշվետվությունները Հանձնաժողովին ներկայացնելուց հետո վերջիններս եռօրյա ժամկետում կարվում են բանկի գործի համապատասխան բաժիններում:

5. ՏԱՐԵԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

5.1. Տարեկան վերահսկողության նպատակները

Տարեկան հեռակա վերահսկողության նպատակը՝ հաշվետու տարվա ընթացքում հեռակա և վերստուգվող անձանց մոտ (բանկերում) վերահսկողության արդյունքներից ելնելով՝ բանկի տարեկան գործունեության և ֆինանսական կայունության վերլուծությունն է, որը պետք է ուղղված լինի բանկի երկարաժամկետ գործելու հնարավորության գնահատմանը:

5.2. Տարեկան վերահսկողության տեղեկատվական աղբյուրները

Տարեկան հեռակա վերահսկողությունն իրականացվում է սույն ձեռնարկի «1.4. Հեռակա վերահսկողության տեղեկատվական աղբյուրները» բաժնում ներկայացված տեղեկատվական աղբյուրներից ստացված տեղեկատվության վերլուծության, ինչպես նաև սույն ձեռնարկի 3.4 և 4.4 բաժինների դրույթների համաձայն կազմված ամսական, եռամսյակային հաշվետվությունների հիման վրա:

5.3. Տարեկան վերահսկողության հիմնական ուղղությունները

Տարեկան հեռակա վերահսկողությունը ենթադրում է հեռակա և վերստուգվող անձանց մոտ (բանկերում), վերահսկողության արդյունքներից ելնելով, բանկի տարեկան ամփոփ հաշվետվության (բանկի անձնագրի)

կազմումը: Տարեկան անճնագիր կազմելիս վերահսկողը պետք է առանճնակի ուշադրություն դարճնի բանկի ներքին աուդիտի գործունեության, ներքին ընթացակարգերի և կանոնակարգերի, ինչպես նաև արտաքին աուդիտի կողմից հաստատված և հրապարակվող տարեկան հաշվետվությունների և աուդիտորական եզրակացության ուսումնասիրության վրա:

Տարեկան ամփոփ հաշվետվություն (բանկի անճնագիր): Տարեկան ամփոփ հաշվետվության (հավելված 10) նպատակը հեռակա և վերստուգվող անճանց մոտ (բանկերում) վերահսկողության արդյունքները մեկ ընդհանուր փաստաթղթի մեջ ամփոփելն է: Բացի դրանից, հաշվետվությունում ներկայացվում է նաև վերահսկողության ռազմավարությունը, արտաքին աուդիտի կողմից տրված եզրակացության վերլուծությունը:

Հաշվետվության յուրաքանչյուր բաժնում պետք է վերլուծվեն բանկի առանճին ոլորտների զարգացման միտումներն ու հնարավորությունները, բացահայտված և հավանական ռիսկերը, իրադարձությունները: Այս խնդիրների իրագործման համար պետք է ելնել ոչ միայն բանկի ընթացիկ ֆինանսական վիճակից, խնդիրներից, հեռանկարային զարգացման ծրագրերի դրույթներից, այլև տնտեսության, մասնավորապես՝ ֆինանսական համակարգի զարգացման հնարավորություններից, սպասվող կամ կանխատեսվող իրադարձություններից և վերջիններիս փոփոխություններից:

Տարեկան հաշվետվությունը կազմված է վեց հիմնական բաժիններից՝

- «1. Բանկի մասնակիցների կառուցվածքը և տեղեկություններ բաժնետերերի վերաբերյալ»,
- «2. ՀՀ տարածքում գործող բանկերի կողմից ՀՀ ԿԲ ներկայացվող հեռանկարային զարգացման ծրագրերը»,
- «3. Բանկի ընդհանուր ֆինանսական վիճակը»,

- «4. Բանկի կառավարումը, բանկի մասնաճյուղերի ցանցը, բանկի հետ կապված անձինք»
- «5. Բանկի ներքին և արտաքին աուդիտ»,
- «6. Վերահսկողական մարտավարությունը»:

«1. Բանկի մասնակիցների կառուցվածքը և տեղեկություններ բաժնետերերի վերաբերյալ» բաժնում ներկայացվում են բանկի սեփականատերերի ու խոշոր բաժնետերերի վերաբերյալ ընդհանուր տեղեկատվությունը: «Դիտողություններ մասնակիցների կառուցվածքի վերաբերյալ» մասում ներկայացվում են բանկի կազմակերպաիրավական տեսակը, մասնակիցների ընթացիկ կառուցվածքը՝ ուշադրությունը կենտրոնացնելով հիմնական և խոշոր մասնակիցներին, վերջիններիս գծով արձանագրված էական շարժերին և դեպքերին, որոնք, ըստ վերահսկողի կարծիքի, պետք է արտացոլվեն տարեկան հաշվետվության մեջ: «Տեղեկություններ բաժնետերերի վերաբերյալ» մասում նշվում են բանկի խոշոր բաժնետերերը: Այս հաշվետվության մեջ խոշոր բաժնետերը սահմանվում է որպես ցանկացած կողմ, որը ուղղակիորեն կամ անուղղակիորեն տնօրինում է (որպես սեփականություն), կառավարում կամ ունի քվեարկման իրավունք բանկի քվերակման իրավունքի 5% կամ ավելի չափով: «Տեղեկությունների բաժնետերերի վերաբերյալ» աղյուսակը լրացվում է հետևյալ կերպ.

«Բանկի խոշոր բաժնետերեր» սյունակում պետք է արտացոլել բանկի խոշոր բաժնետերերի լրիվ անունը կամ անվանումը, իսկ «Բաժնեմասնակցության չափը» սյունակում՝ տնօրինվող կամ կառավարվող բաժնետոմսերի (քվեարկման իրավունքի) տոկոսը: «Բաժնետիրոջը տրված վարկերը կամ այլ փոխատվություններ» սյունակում պետք է արտացոլել խոշոր բաժնետերերին տրամադրված բոլոր վարկերը, այլ փոխատվությունները: «Դիտողություններ բաժնետերերին վերաբերող տեղեկատվության մասին» սյունակում

ներկայացվում է բաժնետերերի կամ մասնակիցների ընդհանուր ժողովի (եթե այդպիսին տեղի է ունեցել) վերաբերյալ դիտողությունները և վերջիններիս գծով արձանագրված էական դեպքերը, որոնք, ըստ վերահսկողի կարծիքի, պետք է արտացոլվեն տարեկան հաշվետվության մեջ:

«2. ՀՀ տարածքում գործող բանկերի կողմից ՀՀ ԿԲ ներկայացվող հեռանկարային զարգացման ծրագրերը» բաժնում ամփոփվում են նախորդ տարվա ընթացքում ՀՀ կենտրոնական բանկ ներկայացված բանկերի հեռանկարային զարգացման ծրագրերի վերլուծության արդյունքները:

Տարեկան վերլուծության ընթացքում վերահսկողը պետք է.

- իրականացնի «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածով սահմանված և Կենտրոնական բանկ ներկայացվող հեռանկարային զարգացման ծրագրերի (այսուհետև՝ Ծրագիր) ուսումնասիրություն,
- ուսումնասիրի և բացահայտի նախորդ տարվա ընթացքում բանկում արձանագրված զարգացումների և «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի կողմից ՀՀ կենտրոնական բանկ հեռանկարային զարգացման ծրագրերի ներկայացման մասին» կարգով սահմանված և Կենտրոնական բանկ ներկայացված Ծրագրով նախատեսված նպատակների միջև շեղումների առկայության փաստերը: Շեղումների արձանագրման պարագայում անհրաժեշտ է բացահայտել Կենտրոնական բանկ ներկայացված Ծրագրից շեղման հիմնական պատճառները. արդյո՞ք Ծրագրից շեղումը սխալ կանխատեսումների, մակրոտնտեսական փոփոխությունների, թե վատ կառավարման ու

չկատարված, բայց նախատեսված միջոցառումների արդյունք է,

– ուսումնասիրել ՀՀ պետական պարտատոմսերի շուկայում Գործակալի/Դիլերի կարգավիճակ ունեցող բանկերի կողմից ՀՀ պետական (գանձապետական) պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման կարգերով սահմանված Կենտրոնական բանկ ներկայացվող առաջիկա վեց ամսվա պարտատոմսերի շուկայում գործունեության ռազմավարությունը:

«3. Բանկի ընդհանուր ֆինանսական վիճակը» բաժնում ներկայացվում են բանկի ֆինանսական վիճակի բնութագիրը, վերլուծվում են այն պայմանավորող գործոնները: «1. Բանկի ընդհանուր ֆինանսական վիճակը» բաժինը կազմված է երկու ենթաբաժնից՝

– «3.1. Հեռակա վերլուծության արդյունքները»,

– «3.2. Վերստուգվող անձանց մոտ (բանկերում) ստուգման արդյունքները»:

«3.1. Հեռակա վերլուծության արդյունքները» ենթաբաժինը տարեկան ուսումնասիրության համառոտ ամփոփումն ու բանկի սպասվող (սովորաբար մեկ տարի) ֆինանսական վիճակի, մասնավորապես՝ ռիսկերի գնահատումն ու կանխատեսումն է: Սույն ենթաբաժնում ներկայացվում են բանկի ընդհանուր ներկա ու սպասվող վիճակի և միտումների վերաբերյալ վերահսկողի գնահատականներն ըստ ակտիվների որակի, կապիտալի համարժեքության, եկամտաբերության, իրացվելիության, շուկայական ռիսկերի նկատմամբ զգայունության, կառավարման որակի և ղեկավարության գործունեության գնահատման ու վերլուծության, ամփոփում առաջարկվող վերահսկողական գործողությունները:

«Հեռակա վերլուծության արդյունքները» ենթաբաժնի «Նշանակալից տեղեկատվություն կամ արձանագրված այլ

դեպքեր» տողն օգտագործվում է վերահսկողի կողմից տվյալ հաստատության վերաբերյալ ստացված ցանկացած նշանակալի տեղեկատվության գրանցման համար: Այս տողում գրացվող տեղեկատվության օրինակները ներառում են տարվա ընթացքում բանկի ֆինանսական վիճակը բնութագրող նշանակալի շարժերի նկարագրություններ, բանկի կողմից օրենքի, մասնավորապես՝ նորմատիվների, արձանագրված խախտումների, դրանց վերացմանն ուղղված գործողությունների նկարագրեր, պատժամիջոցների կիրառման արդյունավետության գնահատականը, մասնավորապես՝ արդյո՞ք կիրառվող պատժամիջոցները նպաստել են արձանագրված խնդիրների լուծմանը:

Այս բաժնում պետք է ամփոփվեն նաև «4.3.2. Բանկի ներկա և սպասվող ֆինանսական վիճակի, ռիսկերի գնահատումն ու վերլուծությունը» բաժնով սահմանվող ռիսկերի վերաբերյալ վերլուծության արդյունքները: Հաշվետու տարվա արդյունքներից ելնելով՝ յուրաքանչյուր ռիսկի տեսակը, ըստ 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ հավելվածներում ներկայացված ռիսկերի գնահատման մեթոդաբանությունների, պետք է գնահատել որպես կամ բարձր, կամ միջին, կամ ցածր: Միևնույն ժամանակ, վերլուծելով վերոնշյալ ռիսկերի միտումները, պետք է գնահատել ռիսկերի վարքագիծը՝ արդյո՞ք դրանք աճող, կայուն, թե՞ նվազող են:

«3.2. Վերստուգվող անձանց մոտ (բանկերում) ստուգման արդյունքները» ենթաբաժինը կազմվում է այն դեպքում, եթե տվյալ տարվա ընթացքում բանկում իրականացվել է ստուգում: Այս ենթաբաժնում ներառված տեղեկատվության մեծ մասը բխում է ուղղակիորեն վերջին ստուգման արդյունքներից և հաշվետվությունից: Այստեղ պետք է ներկայացվեն անցկացված ստուգումների բացահայտումները: «Ներքական ստուգման ամսաթիվը» և «Արտահերթ ստուգման ամսաթիվը» (եթե այդպիսիք տեղի

են ունեցել) տողերում լրացվում են, համապատասխանաբար, վերջին ստուգման կամ արտահերթ ստուգման ամսաթվերը: «Խմբի ղեկավարը» տողում լրացվում է վերստուգման խմբի ղեկավարի անունը: «Ամփոփ դիտողություններ ստուգման արդյունքների վերաբերյալ» տողում ամփոփվում են ստուգման բացահայտումները կամ տրվում հղումներ համապատասխան ստուգման հաշվետվությանը: Սպասարկողը կարող է ավելացնել ստուգման բացահայտումների հետ առնչվող ցանկացած տեղեկատվություն, որը ստացվել կամ բանկի կողմից պետք է իրականացվեր ստուգման ամսաթվից հետո:

«4. Բանկի կառավարումը, բանկի մասնաճյուղերի ցանցը, բանկի հետ կապված անձինք» բաժնում ներկայացվում է բանկի կառավարման մարմինների վերաբերյալ ընդհանուր տեղեկատվությունը: Տեղեկություններ են տրամադրվում նաև բանկի կազմակերպչական կառուցվածքի, նրա մասնաճյուղերի կառուցվածքի, ներկայացուցչությունների, դուստր ընկերությունների և բանկի հետ կապված ածանց վերաբերյալ: Այս բաժինն իր հերթին բաժանվում է 4 ենթաբաժինների՝

- «4.1. Բանկի կառավարման մարմինները և ղեկավար անձինք»,
- «4.2. Բանկի մասնաճյուղերի ցանցը»,
- «4.3. Բանկի դուստր ընկերությունները»,
- «4.4. Բանկի հետ կապված անձինք»:

«4.1. Բանկի կառավարման մարմինները և ղեկավար անձինք» ենթաբաժնում կառավարում հասկացության մեջ ընդգրկվում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածով սահմանված բանկի կառավարման մարմինները, բանկի վերստուգիչ հանձնաժողովը և 22-րդ հոդվածով սահմանված բանկի ղեկավարները, որոնք, վերահսկողի կարծիքով, առավել

մեծ ազդեցություն ունեն բանկի կառավարման վրա: «Բանկի կառավարման մարմինները և ղեկավար անձինք» ենթաբաժնի աղյուսակներում պետք է ներկայացվեն բանկի տնօրենների խորհրդի, գործադիր տնօրենի, բանկի կանոնադրությամբ նախատեսված դեպքերում՝ բանկի վարչության, վերստուգիչ հանձնաժողովի, ինչպես նաև բանկի ղեկավար այլ անձանց մասին տեղեկությունները: Համապատասխան աղյուսակներին կից բանկի կառավարման մարմինների և ղեկավար անձանց վերաբերյալ մասերում պետք է ներկայացվեն վերջիններիս վերաբերյալ դիտողությունները և արձանագրված էական դեպքերը, որոնք, ըստ վերահսկողի, պետք է արտացոլվեն տարեկան հաշվետվության մեջ:

«4.2. Բանկի մասնաճյուղերի ցանցը»: Կարևոր է, որպեսզի վերահսկողը վերլուծի բանկի մասնաճյուղերի ցանցը և կառուցվածքը, քանի որ լայն ցանցի առկայությունը լրացուցիչ ռիսկերի պատճառ կարող է հանդիսանալ և, հետևաբար, պահանջել բանկի առավել կատարելագործված կառավարում: Հաշվետվությունում ներկայացվում են միայն գլխավոր գրասենյակի, բանկի գործառնությունների և ակտիվների տեսանկյունից նշանակալի մասնաճյուղերին վերաբերող տեղեկությունները: «Տեղեկություններ բանկի մասնաճյուղերի ցանցի վերաբերյալ» աղյուսակը լրացվում է հետևյալ կերպ:

«Մասնաճյուղի անվանումը և գտնվելու վայրը» սյունակում լրացվում է մասնաճյուղի գրասենյակի անվանումը և տեղակայման քաղաքը: «Մասնաճյուղի ակտիվները որպես տոկոս բանկի ընդհանուր համախմբված ակտիվներում» սյունակում լրացվում են մասնաճյուղի ընդհանուր ակտիվները որպես համախմբված ընդհանուր ակտիվների տոկոս: «Մասնաճյուղի ավանդները որպես տոկոս բանկի ընդհանուր համախմբված ավանդներում» սյունակում

լրացվում են մասնաճյուղի ընդհանուր ավանդները որպես համախմբված ընդհանուր ավանդների տոկոս, «Մասնաճյուղի վարկերը որպես տոկոս բանկի ընդհանուր համախմբված վարկային ներդրումներում» սյունակում՝ մասնաճյուղի ընդհանուր վարկերը որպես համախմբված ընդհանուր վարկերի տոկոս, «Մասնաճյուղի ղեկավարի անունը և ազգանունը» սյունակում՝ ղեկավարի լրիվ անվանումը և տվյալ պաշտոնում նշանակման ամսաթիվը: Վերևում ներկայացված մասնաճյուղերի վերաբերյալ տեղեկությունները բաժանված են երեք խոշոր խմբերի՝ գլխավոր գրասենյակ, նշանակալի մասնաճյուղ և արտերկրյա մասնաճյուղ: Սույն ձեռնարկի իմաստով «Նշանակալի մասնաճյուղ» է համարվում այն մասնաճյուղը, որի ակտիվները կազմում են բանկի կոնսոլիդացված ընդհանուր ակտիվների հինգ տոկոսը (5%) կամ ավելին, և/կամ այն մասնաճյուղը, որի կողմից ներգրավված ավանդները (բանկային հաշիվներ, ցպահանջ և ժամկետային ավանդներ գումարային արդահայտությամբ) կազմում են բանկի կողմից ներգրավված ավանդների հինգ տոկոսը (5%) կամ ավելին: «Դիտողություններ բանկի մասնաճյուղերի ցանցի վերաբերյալ» մասում ներկայացվում է բանկի մասնաճյուղերի և մասնաճյուղերի ղեկավարների վերաբերյալ դիտողությունները, արձանագրված էական դեպքերը, որոնք, ըստ վերահսկողի, պետք է արտացոլվեն տարեկան հաշվետվության մեջ:

«4.3. Բանկի դուստր ընկերություններ» ենթաբաժնում պետք է արտացոլել այն ընկերություններին վերաբերող տեղեկատվությունը, որոնց հաշվեկշիռները, համաձայն «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող համախմբված հաշվետվությունների կազմման կարգի», համախմբվում են մայր բանկի հաշվեկշռում: «Տեղեկություններ բանկի

դուստր ընկերությունների վերաբերյալ» աղյուսակը լրացվում է հետևյալ կերպ:

«Դուստր ընկերության անվանումը» սյունակում լրացվում է այն ընկերության անվանումը, որի հաշվեկշիռը, ըստ վերնշյալ կարգի, ենթակա է համախմբման մայր բանկի հաշվեկշռում: «Դուստր ընկերության ղեկավարը, նշանակման ամսաթիվը» սյունակում լրացվում է դուստր ընկերության ղեկավարի լրիվ անունը և տվյալ պաշտոնում նշանակման ամսաթիվը, «Դուստր ընկերության կազմա-կերպաիրավական տեսակը» սյունակում՝ դուստր ընկերության կազմակերպաիրավական տեսակը, «Բանկի մասնակցության չափը դուստր ընկերությունում» սյունակում՝ բանկի կողմից տնօրինվող կամ կառավարվող քվերակման իրավունքի տոկոսը, «Բանկի խորհրդի այն անդամները, որոնք միաժամանակ հանդիսանում են դուստր ընկերության խորհրդի անդամ» սյունակում՝ այն անձինք, որոնք հանդիսանում են բանկի խորհրդի անդամ՝ միաժամանակ լինելով դուստր ընկերության խորհրդի անդամ:

«Դիտողություններ բանկի դուստր ընկերությունների վերաբերյալ» մասում ներկայացվում են բանկի դուստր ընկերությունների և դրանց ղեկավար անձանց վերաբերյալ դիտողությունները, արձանագրված էական դեպքերը, որոնք, ըստ վերահսկողի, պետք է արտացոլվեն տարեկան հաշվետվության մեջ:

«4.4. Բանկի հետ կապված անձինք» ենթաբաժնում բանկի հետ կապված անձինք սահմանվում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն: «Տեղեկություններ բանկի հետ կապված անձանց վերաբերյալ» աղյուսակը լրացվում է հետևյալ կերպ: Բանկի հետ կապված անձինք բաժնում պետք է ներկայացվեն բանկի հետ կապված այն անձինք (բացառությամբ Հավելված 10-ի այլ բաժիններում ներկայացված անձանց, օրինակ՝ ղեկավարներ,

նշանակալից մասնակիցներ), որոնք տվյալ պահի դրությամբ հանդիսանում են բանկի վարկառու (կամ բանկի նկատմամբ ունեն ստանձնած որևէ պարտավորություն) կամ խոշոր պարտատեր կամ ունեն բանկի կառավարման մարմինների որոշումների վրա էապես ազդելու հնարավորություն:

«Բանկի հետ կապված անձի անունը» սյունակում լրացվում է բանկի հետ կապված անձանց անունները կամ անվանումները, «Գործունեության տեսակը» սյունակում՝ բանկի հետ կապված անձանց գործունեության հիմնական բնագավառը, «Բանկի հետ կապակցվածության տեսակը» սյունակում՝ բանկի հետ կապված անձ հանդիսանալու տեսակը, «Տրամադրված վարկեր կամ այլ փոխատվություններ» սյունակում՝ բանկի հետ կապված անձին տրված վարկերը և այլ փոխառությունները, «Խոշոր պահանջներ բանկի նկատմամբ» սյունակում՝ բանկի հետ կապված անձի պահանջները տվյալ բանկի նկատմամբ (ընդ որում, տվյալ սյունակը լրացվում է, եթե բանկի հետ կապված անձը համաձայն կանոնակարգ 3-ի 19-րդ կետի համարվում է բանկի խոշոր պարտատեր):

«Դիտողություններ բանկի հետ կապված անձանց վերաբերյալ» մասում ներկայացվում է բանկի հետ կապված անձանց վերաբերյալ դիտողությունները, արձանագրված էական դեպքերը, որոնք, ըստ վերահսկողի, պետք է արտացոլվեն տարեկան հաշվետվության մեջ:

«5. Բանկի ներքին և արտաքին աուդիտ» բաժինը կազմված է երկու ենթաբաժիններից՝

– «5.1. Ներքին աուդիտ»,
– «5.2. Արտաքին աուդիտ»:

«5.1. Ներքին աուդիտ»: Բանկին մատչելի ներքին կարգավորման ամենաարդյունավետ ընթացակարգը բարձր մասնագիտական պատրաստվածություն ունեցող ներքին աուդիտորի նշանակումն է, որը պատասխանատու

է բանկի ներքին աուդիտի ծրագրի մշակման և իրականացման համար: Բանկի ներքին աուդիտը բանկի ներքին հսկողություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում է, որը զբաղվում է բանկի գործունեության և ներքին հսկողության համակարգի պարբերական և անկախ գնահատմամբ: Ներքին աուդիտի նպատակը բանկի աշխատակիցներին և ղեկավարությանն աջակցելն է՝ իրենց պարտականություններն արդյունավետ իրականացնելու համար:

Բանկի ներքին հսկողության համակարգը լիովին կարելի է գնահատել՝ հիմնվելով վերստուգվող անճանց մոտ (բանկերում) ստուգման արդյունքների վրա: Եթե հաշվետու տարում բանկում ստուգում չի իրականացվել, և վերահսկողը չի տիրապետում նմանատիպ տեղեկատվության, ներքին հսկողության համակարգի գործունեությունը պետք է գնահատել՝ ելնելով հեռակա վերահսկողության տարեկան արդյունքներից, ուսումնասիրելով բանկում նախորդ ստուգման արդյունքները, Կենտրոնական բանկ ներկայացվող հեռանկարային զարգացման ծրագրերը, ընթացիկ տարում բանկի կառավարման մարմինների և ղեկավարների գործունեության մասին տեղեկատվությունը (օրինակ, հիմնվելով օրենսդրական խախտումների, ղեկավար անճանց նկատմամբ կիրառված պատժամիջոցների, տրված հանճնարարականների կատարման ուսումնասիրության վրա):

«5.2. Արտաքին աուդիտ»: Արտաքին աուդիտը, համաճայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի, ստուգում է բանկի տարեկան հաշվետվությունները և ներկայացնում աուդիտորական եզրակացություն այն մասին, թե արդյո՞ք ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ են արտահայտում բանկի ֆինանսական վիճակը, և ստուգում բանկի վերստուգիչ հանճնաժողովի կազմակերպման և գործունեության

համապատասխանությունն օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին:

«Աուդիտորական կազմակերպության անվանումը» տողում լրացվում է արտաքին աուդիտ իրականացրած աուդիտորական կազմակերպության անվանումը, «Վերջին աուդիտի ամսաթիվը» տողում՝ աուդիտորական ուսումնասիրության ժամկետը: «Աուդիտորի կարծիքը» տողում ներկայացվում է անկախ աուդիտորական կազմակերպության կարծիքը (եզրակացությունը) բանկի ֆինանսական հաշվետվությունների վիճակի մասին:

«Դիտողություններ արտաքին աուդիտի վերաբերյալ» մասում պետք է ներկայացնել արտաքին աուդիտորի կողմից տրված եզրակացության և «Նամակ ղեկավարությանը» տեղեկատվության ուսումնասիրության արդյունքները՝ ուշադրություն դարձնելով ներքոհիշյալ հարցադրումների վրա՝

1. բացահայտել կամ ուսումնասիրել մամուլում հրապարակված տարեկան ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը՝ արդյո՞ք արձանագրվել են շեղումներ Կենտրոնական բանկ ներկայացված և մամուլում հրապարակված հաշվետվությունների միջև: Արդյո՞ք այդ շեղումները պատահական բնույթ ունեն, տեխնիկական կամ անուշադրության սխալի, թե նպատակային կեղծիքի արդյունք են: Արդյո՞ք, շեղումներն աուդիտի կողմից տարեկան ֆինանսական հաշվետվություններում կատարված փոփոխությունների, թե ֆինանսական հաշվետվությունների կազմման այլ սկզբունքների կիրառման արդյունք են,
2. մանրամասն ուսումնասիրել աուդիտի եզրակացությունը՝ բացահայտելով, թե արտաքին աուդիտն ինչպես է գնահատում՝
   – ֆինանսական հաշվետվությունների՝ բանկի իրական ֆինանսական վիճակը ճշգրիտ

արտահայտելու աստիճանը, և համեմատել Կենտրոնական բանկի գնահատումների հետ,

- բանկի գործունեության համապատասխանությունն իր գործունեությունը կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին, և համեմատել Կենտրոնական բանկի գնահատումների հետ,
- բանկի ներքին աուդիտի գործունեությունը, ինչպես նաև բանկի գործունեության տարբեր բնագավառների ներքին հսկողությունը, վերջինիս բավարար լինելը ռիսկերը կառավարելու համար, և համեմատել Կենտրոնական բանկի գնահատումների հետ,
- բանկում մշակված՝ ներքին աուդիտի գործունեությունը կարգավորող քաղաքականությունը, ներքին կարգերը, ընթացակարգերը, և համեմատել Կենտրոնական բանկի գնահատումների հետ,

3. պարզել՝ արդյո՞ք արտաքին աուդիտի կողմից տրված եզրակացության և «Նամակ ղեկավարությանը» տեղեկատվության մեջ նշվել են թերությունները և բացթողումները, և արդյո՞ք վերջիններիս վերացման նպատակով բանկի ղեկավարությունը ձեռնարկել է համապատասխան միջոցառումներ և հասել արդյունքի:
4. բացահայտել՝ արդյո՞ք հրապարակվող տարեկան ֆինանսական հաշվետվությունները կազմված և լրացված են «Բանկերի հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերը և դրանց լրացման ցուցումները» կարգի, «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտների

(այսուհետ՝ ՀՀՀՀՍ) սկզբունքների պահանջներին համապատասխան, ինչպես նաև՝ արդյո՞ք արձանագրվել են շեղումներ Կենտրոնական բանկ ներկայացված և մամուլում հրապարակված տեղեկատվությունների միջև: Արդյո՞ք այդ շեղումները պատահական բնույթ ունեն, տեխնիկական կամ անուշադրության սխալի, թե նպատակային կեղծիքի արդյունք են:

«6. Վերահսկողական մարտավարություն» բաժնում արտացոլվում են վերստուգվող անձանց մոտ (բանկերում) ստուգումներ անցկացնելու, ինչպես նաև ստուգումների կամ հեռակա վերլուծության միջոցով բացահայտված նշանակալի թերությունների վերացմանն ուղղված վերահսկողական միջոցառումները:

Տարեկան ամփոփ հաշվետվությունը պետք է ունենա հստակ կարգավորման ուղղվածություն այն իմաստով, որ վերահսկողի կողմից պետք է մշակվեն և առաջարկվեն բացահայտված խնդիրների լուծումներ:

Տարեկան ամփոփ վերլուծությունների ընթացքում բացահայտված ռիսկերի, խնդրահարույց հարցադրումների կամ ոլորտերի պարագայում վերահսկողը բանկի վճարունակության, ֆինանսական վիճակի կայունության ապահովման, երկարաժամկետ գործունեության ապահովման նպատակով պետք է անհրաժեշտության դեպքում առաջարկի վերահսկողական միջոցառումների ցանկ: Պետք է գնահատել բանկում հերթական կամ արտահերթ ստուգումներ անցկացնելու, ինչպես նաև բանկի վերահսկողական ռազմավարության սկզբունքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու նպատակահարմարությունը կամ անհրաժեշտությունը:

Բանկի համար կազմված վերահսկողական մարտավարությունը սովորաբար ունենում է երեք

հիմնական բաժիններ՝ նպատակներ, գործողություններ և աշխատանքային ծրագիր:[1]

Տարեկան հաշվետվությանը կից ներկայացվող լրացուցիչ տեղեկատվություն

Տարեկան հաշվետվության վեց հիմնական բաժիններում արտացոլված տեղեկատվությանը զուգահեռ ենթահավելվածներում պետք է ներկայացվեն՝

- տարեկան հաշվեկշիռը՝ համաձայն ենթահավելված 10.1-ի,
- «ՔԱՄԵԼՍ»-ի գնահատականները՝ համաձայն ենթահավելված 10.2-ի,
- նորմատիվների փաստացի մեծությունները՝ համաձայն ենթահավելված 10.3-ի,

---

[1] Նպատակները սահմանում են կոնկրետ հաստատությանը վերաբերող վերահսկողական նպատակները՝ կազմված վերջին տարում բանկի հեռակա և վերստուգվող անձանց մոտ (բանկերում) ստուգման արդյունքների հիման վրա: Նպատակները առաջարկվող գործողությունների և աշխատանքային ծրագրերի հիմնաքարերն են: Արդյունավետ լինելու համար նպատակները պետք է իրատեսական լինեն այն առումով, որ պետք է որոշակի միջոցառումներ նախանշեն: Վերահսկողը պետք է համոզվի, որ նպատակները համահունչ են բացահայտված ռիսկերի կամ հիմնախնդիրների սկզբնապատճառներին: «Դասակարգված ակտիվների մակարդակի նվազեցումը» կարող է ցանկալի նպատակ լինել բանկի համար, սակայն վերահսկողի համար դա անհասկանալի է: Նրա համար թերևս առավել ընդունելի նպատակ կարող է լինել «համոզվել, որ բանկը մշակում և հետևողականորեն կիրառում է ներքին գնահատման ընդունելի համակարգը»: Հնարավոր է, որ վերահսկողն ունենա բանկերին վերաբերող մի քանի նպատակներ, սակայն շատ նպատակներ հետապնդելը կարող է արդյունավետ չլինել: Այդ դեպքում վերահսկողը պետք է կարողանա բացահայտել դրանց առաջնահերթությունը:

Գործողություններն այն քայլերն են, որոնք բանկը կամ վերահսկողը պետք է ձեռնարկի նպատակներն իրականացնելու համար: Յուրաքանչյուր գործողություն պետք է ուղղված լինի մեկ կամ մի քանի նպատակների իրականացմանը և հարաբերակցվի բացահայտված ռիսկի մակարդակին: Եթե բանկը նշանակալի թերություններ չունի կամ հետևողականորեն ուղղել է բացահայտված թերությունները, առաջարկված գործողությունները, ապա պետք է կենտրոնանա համակարգի գործունեության շարունակականության վրա: Բարձր ռիսկային բնագավառներին վերաբերող գործողությունները պետք է ուղղված լինեն թերությունների վերացմանը:

Աշխատանքային ծրագիրը նկարագրում է տարբեր գործողությունների կամ վերահսկողության իրականացման եղանակները (մասնավորապես՝ աշխատանքային ծրագիրը, ժամկետները, ներգրաված անձանց քանակն ու ծանրաբեռնվածությունը, իրավունքներն ու պարտականությունները):

– բանկի հիմանական ցուցանիշները՝ համաձայն ենթահավելված 10.4-ի:

5.4. Տարեկան վերահսկողության արդյունքների ամփոփումը, ներկայացումը և պահպանումը

Բանկի վերահսկողը, մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 1-ը, բանկային վերահսկողության վարչության համապատասխան բաժնի պետին է ներկայացնում տարեկան ամփոփ հաշվետվությունը (բանկի անձնագիր), բացառությամբ «5. Բանկի ներքին և արտաքին աուդիտ» բաժնի, իսկ մինչև մարտի 10-ը՝ համապատասխան բաժնի պետը կամ վերջինիս հանձնարարությամբ տվյալ բանկի վերահսկողը հաշվետվությունը ներկայացնում է բանկային վերահսկողության վարչության պետին: Տարեկան հաշվետվությունները, բացառությամբ «5. Բանկի ներքին և արտաքին աուդիտ» բաժնի, մինչև մարտի 20-ը հանձնվում են բանկային վերահսկողության վարչության տեղեկատվության հավաքագրման, կարգավորման և արխիվացման բաժին՝ բանկի գործի համապատասխան բաժիններում կարելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի տեղեկատվական համակարգի՝ \\CBAdom\Info\B_PASSP\ Banks\200-\----\ հասցեում տեղադրելու նպատակով:

Տվյալ բանկի վերահսկողը, մինչև յուրաքանչյուր տարվա օգոստոսի 1-ը, բանկային վերահսկողության վարչության համապատասխան բաժնի պետին է ներկայացնում տարեկան հաշվետվության «5. Բանկի ներքին և արտաքին աուդիտ» բաժինը, իսկ մինչև օգոստոսի 15-ը համապատասխան բաժնի պետը կամ վերջինիս հանձնարարությամբ տվյալ բանկի վերահսկողը տարեկան

հաշվետվության վերոնշյալ բաժինը ներկայացնում է բանկային վերահսկողության վարչության պետին: Տարեկան ամփոփ հաշվետվության «5. Բանկի ներքին և արտաքին աուդիտ» բաժինը մինչև օգոստոսի 15-ը հանձնվում է բանկային վերահսկողության վարչության տեղեկատվության հավաքագրման, կարգավորման և արխիվացման բաժին՝ բանկի գործի համապատասխան բաժիններում կարելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի տեղեկատվական համակարգի՝ \\CBAdom\Info\B_ PASSP\Banks\200-\----\ հասցեում տեղադրելու նպատակով:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1

ՌԻՍԿԵՐ

Ռիսկի սահմանումը

Ռիսկն այն հնարավոր հավանականությունն է, երբ ակնկալվող և (կամ) չնախատեսված դեպքերը կարող են բացասական ազդեցություն ունենալ բանկի կապիտալի և (կամ) շահույթի վրա:

Ռիսկի գոյությունը, որպես այդպիսին, բացասական երևույթ չէ. որոշ ռիսկեր անքակտելի են բանկային գործունեությունից: Ավելի կարևոր է հասկանալ՝ արդյո՞ք այն ռիսկը, որին գնում է բանկը, արդարացված է, թե ոչ: Ընդհանրապես, ռիսկերն արդարացված են, երբ նրանք հասկանալի են, չափելի, վերահսկելի, և բանկը կարող է հեշտորեն չեզոքացնել դրանց բացասական ազդեցությունը: Ռիսկերի բացասական ազդեցությունը չեզոքացնելու նպատակով բանկը կարող է իրականացնել մի շարք գործողություններ, ինչպիսիք են՝ ռիսկի ազդեցության նվազեցում, բանկի կապիտալի մեծացում կամ ռիսկի կառավարման գործընթացի ամրապնդում:

Ռիսկի տեսակները

Ռիսկը ըստ բնույթի լինում է ֆինանսական և ոչ ֆինանսական. դրանցից յուրաքանչյուրն իր հերթին կարելի է բաղդատել մի քանի տեսակների, որոնք, ըստ էության, իրենցից ներկայացնում են առանձին ռիսկեր: Ռիսկերի տարատեսակները չեն բացառում իրար, այլ փոխադարձաբար լրացնում են. ցանկացած գործառնություն կարող է բանկին ենթարկել ռիսկի մի քանի տեսակների: Սակայն ռիսկերի գնահատման և վերլուծության նպատակով ռիսկերը պայմանականորեն բաժանվում են յոթ տեսակի: Դրանք են՝

- ֆինանսական բնույթի ռիսկեր՝ վարկային, տոկոսադրույքի, իրացվելիության, գնային, արժութային,
- ոչ ֆինանսական բնույթի ռիսկեր՝ գործառնական և բարի համբավի:

Վարկային ռիսկն այն ներկա կամ ապագա հավանականությունն է, երբ բանկի վարկառուն կամ այլ պարտապանը խախտում է բանկի հետ կնքած պայմանագրի պայմանները կամ չի գործում այդ պայմանագրի պայմաններին համապատասխան, ինչը բացասաբար է ազդում բանկի շահույթի և (կամ) կապիտալի վրա: Վարկային ռիսկն առկա է այն գործարքներում, երբ «հաջողությունը» կախված է պարտապանի գործունեությունից: Դա ի հայտ է գալիս ամեն անգամ, երբ բանկը միջոցներ է տրամադրում, ներդնում կամ

միջոցների տրամադրման վերաբերյալ փաստացի կամ ենթադրվող պայմանագրային հարաբերությունների մեջ է մտնում այլ անձի հետ, որն արտացոլվում է բանկի հաշվեկշռում կամ հանդես գալիս որպես արտահաշվեկշռային միավոր: Վարկային ռիսկը բանկային գործունեության հետ կապված ամենահեշտ ճանաչվող ռիսկն է: Վարկային ռիսկն առաջանում է ոչ միայն վարկավորման ընթացքում, այլև բանկային բազմապիսի գործառնությունների արդյունքում, ներառյալ ներդրումային պորտֆելի, ածանցյալների առևտրով զբաղվող գործընկերների ընտրության ժամանակ: Վարկային ռիսկն առաջանում է որևէ երկրի (այդ երկրի իշխանությունների) հետ գործ ունենալու ժամանակ, ինչպես նաև անուղղակիորեն՝ երաշխավորողի գործունեության հետևանքով: Վարկային ռիսկն առաջանում է նաև պարտապանի սնանկության արդյունքում (սնանկության ռիսկ) և որևէ ոլորտում տեղաբաշխվող միջոցների կենտրոնացման պատճառով (կոնցենտրացիայի և կոռելյացիայի ռիսկեր):

Տոկոսադրույքի ռիսկն այն ներկա կամ ապագա հավանականությունն է, երբ շուկայում տոկոսադրույքի շարժը բացասաբար է ազդում բանկի շահույթի և (կամ) կապիտալի վրա: Տոկոսադրույքի ռիսկն առաջանում է դրամական հոսքերի կամ ակտիվների ու պարտավորությունների ժամանակային ճեղքվածքի պատճառով (վերագնահատման ռիսկ), բանկի գործունեության վրա ազդող տարբեր եկամտաբերության կորերի միջև տոկոսադրույքային հարաբերությունների փոփոխության (բազիսային ռիսկ) և մարման տարբեր ժամկետայնություն ունեցող միջոցների միջև տոկոսադրույքային հարաբերությունների փոփոխության (եկամտաբերության կորի ռիսկ) հետևանքով:

Իրացվելիության ռիսկն այն ներկա կամ ապագա հավանականությունն է, երբ բանկն ի վիճակի չէ ճիշտ ժամանակին բավարարել իր պարտատերերի պահանջներն առանց լրացուցիչ կորուստներ կրելու, ինչը բացասաբար է ազդում բանկի շահույթի և (կամ) կապիտալի վրա: Իրացվելիության ռիսկը պայմանավորված է դրամական միջոցների չկանխատեսված նվազման կամ փոփոխության հետևանքների կառավարելիության անկարողությամբ: Իրացվելիության ռիսկն առաջանում է նաև, երբ բանկն ի վիճակի չի լինում կանխատեսել և արձագանքել շուկայական պայմանների այն փոփոխություններին, որոնք ազդում են բանկի կողմից ակտիվների արագ և նվազագույն կորուստներով իրացման վրա:

Գնային ռիսկը այն ներկա կամ ապագա հավանականությունն է, երբ շուկայում արժեթղթերի և բանկի հաշվեկշռում առկա նման այլ ֆինանսական գործիքների գների փոփոխությունը բացասաբար է ազդում բանկի շահույթի և (կամ) կապիտալի վրա:

Արտարժութային ռիսկը այն ներկա կամ ապագա հավանականությունն է, երբ շուկայում արտարժույթի փոխարժեքի փոփոխությունը բացասաբար է ազդում բանկի շահույթի և (կամ) կապիտալի վրա: Այս ռիսկն ի հայտ է գալիս արտասահմանում ներդրումներ կամ գործառնություններ կատարելիս: Արտարժույթի ռիսկի հիմնական պատճառն այդ շուկայում բաց դիրքի (այսինքն՝ արտարժույթով արտահայտված ակտիվների ու պարտավորությունների միջև ճեղքվածքի) ընդունումն է:

Տոկոսադրույքի, իրացվելիության, գնային և արտարժութային ռիսկերը հաճախ խմբավորվում են մեկ՝ ***շուկայական ռիսկ*** հասկացության մեջ, քանի որ թվարկված ռիսկերն առաջանում և կենտրոնանում են շուկայական պայմանների փոփոխության հետևանքով:

Գործառնական ռիսկը այն ներկա կամ ապագա հավանականությունն է, երբ բանկի գործարքները հաճախորդների հետ չեն իրականանում տեխնիկական, բանկում անարդյունավետ որոշումների ընդունման գործընթացի կամ անբավարար մարդկային ռեսուրսների պատճառով, ինչը բացասաբար է ազդում բանկի շահույթի և (կամ) կապիտալի վրա: Այս ռիսկը պայմանավորված է բանկի ներքին հսկողության, տեղեկատվական համակարգերի աշխատանքով, աշխատողների ազնվությամբ և գործառնական գործընթացներով: Գործառնական ռիսկն առկա է կնքվող բոլոր գործարքներում և ծառայություններում, այդ պատճառով կոչվում է նաև գործառնությունների ռիսկ, քանի որ առաջանում է ամեն օր, բոլոր բանկերում՝ ցանկացած գործառնության իրականացման պահին:

Համբավի ռիսկը այն ներկա կամ ապագա հավանականությունն է, երբ բանկի մասին հաճախորդների, բաժնետերերի, գործընկերների, վերահսկողների և այլ հետաքրքրված անձանց կարծիքը կամ հասարակությունում տարածված լուրը բացասաբար է ազդում բանկի շահույթի և (կամ) կապիտալի վրա: Այս ռիսկը կապված է բանկի կողմից հասարակության հետ նոր կապեր հաստատելու ու նրան ծառայություններ մատուցելու, ինչպես նաև գոյություն ունեցող կապերի սպասարկման կարողության հետ: Համբավի ռիսկը կարող է ի հայտ գալ դատական վեճի, ֆինանսական կորուստների կամ վարկանիշի անկման հետևանքով: Համբավի ռիսկն անքակ-

տելի է բանկային գործունեությունից: Որքան բանկը խոցելի է դառնում հասարակական բացասական կարծիքի հետևանքով, այնքան նվազում է նրա կարողությունը մրցունակ ծառայություններ մատուցելու ասպարեզում:

Ռիսկի գնահատման համակարգը

Վարկային ռիսկ

Ներքոնշյալ գործոնների ստուգումը հնարավորություն կտա վերահսկողներին գնահատել ընդհանուր վարկային ռիսկը որպես՝

Ցածր	Միջին	Բարձր
Ղեկավարությունը լիովին ըմբռնում է վարկային ռիսկի բոլոր առանձնահատկությունները, կանխատեսում և ճիշտ արձագանքում է շուկայում տիրող իրավիճակի փոփոխություններին:	Ղեկավարությունը ընդհանուր առմամբ ըմբռնում է վարկային ռիսկի հիմնական առանձնահատկությունները և համապատասխան կերպով արձագանքում է շուկայում տիրող իրավիճակի փոփոխություններին:	Ղեկավարությունը չի ըմբռնում կամ արհամարհում է վարկային ռիսկի հիմնական առանձնահատկությունները, չի կանխատեսում և չի ձեռնարկում ժամանակին կամ համապատասխան քայլեր շուկայում տիրող իրավիճակի փոփոխություններին արձագանքելու համար:
ՀՀ կենտրոնական բանկ ներկայացված բանկի վարկավորման քաղաքականությունը և ընթացակարգերը բավարարում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն պահանջները:	ՀՀ կենտրոնական բանկ ներկայացված բանկի վարկավորման քաղաքականությունը և ընթացակարգերը մասամբ են բավարարում ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն պահանջները:	ՀՀ կենտրոնական բանկ ներկայացված բանկի վարկավորման քաղաքականությունը և ընթացակարգերը չեն բավարարում ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն պահանջները:
Վարկային պորտֆելը բավարար չափով բազմազանեցված է, և վարկային ռիսկի բազմազանեցումը արդյունավետորեն կառավարվում է:	Վարկային ռիսկի բազմազանեցմանը տրամադրվող ուշադրությունը բավարար է:	Վարկային ռիսկի բազմազանեցումը բավարար չէ:
Նոր վարկերն իրենց կառուցվածքով, տևողությամբ, աճով կամ ըստ տրամադրման եղանակի պահպանողական են:	Նոր վարկերն իրենց կառուցվածքով, տևողությամբ, աճով կամ ըստ տրամադրման եղանակի շատ զգույշ են:	Նոր վարկերն իրենց կառուցվածքով, տևողությամբ, աճով կամ ըստ տրամադրման եղանակի ագրեսիվ են:

Վարկային ներդրումները բավարար չափով ապահովված են գրավով կամ փոխառուի դրամական հոսքերով:	Վարկը գրավով պաշտպանված է:	Գրավն իրացվելի չէ, կամ դրա մեծությունը բավարար չէ, կամ վարկային ներդրումներն ապահովված չեն փոխառուի դրամական հոսքերով:
Դասակարգված վարկերի ծավալը փոքր է. այդ խնդիրը կարող է լուծվել սովորական աշխատանքային գործունեության ընթացքում:	Դասակարգված վարկերի ծավալը միջին է. այդ խնդիրը կարող է լուծվել թույլատրելի ժամանակահատվածում:	Դասակարգված վարկերի ծավալը կարող է մեծ լինել. այդ խնդրի լուծումը կարող է երկար ժամանակ պահանջել:
Պահուստները բավարար չափով ծածկում են անխուսափելի կորուստները: Շահույթին և կապիտալին սպառնացող վարկային ռիսկը նվազագույն է:	Անխուսափելի վարկային կորուստները լրջորեն չեն նվազեցնի առկա պահուստները կամ լրացուցիչ պահուստավորման կարիք չեն ստեղծի: Շահույթին և կապիտալին սպառնացող վարկային ռիսկը կառավարելի է:	Վարկային կորուստները լրջորեն կնվազեցնեն առկա պահուստները կամ կորուստները ծածկելու համար սովորականից մեծ պահուստներ կպահանջեն: Շահույթին և կապիտալին սպառնացող վարկային ռիսկն էական է:

Տոկոսադրույքի ռիսկ

Ներքոնշյալ գործոնների ստուգումը հնարավորություն կտա վերահսկողներին գնահատել ընդհանուր տոկոսադրույքի ռիսկը որպես՝

Ցածր	Միջին	Բարձր
Պատասխանատու պաշտոնյաները լիովին ըմբռնում են տոկոսադրույքի ռիսկի բոլոր առանձնահատկությունները և տոկոսադրույքի կառավարման գործընթացն արդյունավետ է:	Պատասխանատու պաշտոնյաները հիմնականում ըմբռնում են տոկոսադրույքի ռիսկի հիմնական առանձնահատկությունները և տոկոսադրույքի կառավարման գործընթացը բավարար է:	Պատասխանատու պաշտոնյաները չեն ըմբռնում կամ արհամարհում են տոկոսադրույքի ռիսկի հիմնական առանձնահատկությունները և տոկոսադրույքի կառավարման գործընթացը թերի է:
Ղեկավարությունը կանխատեսում է և ճիշտ արձագանքում է շուկայում տիրող իրավիճակի փոփոխություններին:	Ղեկավարությունը համապատասխան կերպով արձագանքում է շուկայում տիրող իրավիճակի փոփոխություններին:	Ղեկավարությունը չի կանխատեսում և ժամանակին չի ձեռնարկում համապատասխան քայլեր շուկայում տիրող իրավիճակի փոփոխություններին արձագանքելու համար:

Տոկոսադրույքի շարժի հետևանքով անհամապատասխանությունները հազիվ թե շահույթի կամ կապիտալի անկայունություններ առաջացնեն:	Տոկոսադրույքի շարժի հետևանքով շահույթի կամ կապիտալի մեծ անկայունություններ չեն ակնկալվում:	Տոկոսադրույքի շարժի հետևանքով շահույթի կամ կապիտալի անկայունությունների հավանականությունը մեծ է:
Վերագնահատման, բազիսային և եկամտաբերության կորի շատ քիչ ռիսկ է սպառնում: Օպցիոնային դիրքերը հստակորեն նույնականացված (իդենտիֆիկացված) են և լավ են կառավարվում:	Սպառնում են միասնաբար կառավարվող վերագնահատման, բազիսային և եկամտաբերության կորի օպցիոնային ռիսկերը:	Առկա են զգալի վերագնահատման ռիսկ, բազիսային ռիսկի բարձր մակարդակ, մեծ եկամտաբերության կորի ռիսկ և օպցիոնային ռիսկի զգալի մակարդակ:
Տոկոսադրույքի կառավարման գործընթացն արդյունավետ է:	Տոկոսադրույքի կառավարման գործընթացը բավարար է:	Տոկոսադրույքի կառավարման գործընթացը թերի է:
Տոկոսադրույքի ռիսկի չափման և ռիսկի մոնիտորինգի համար պատասխանատվությունն անկախ է ռիսկային գործունեությունն իրականացնողներից:	Տոկոսադրույքի ռիսկի չափման և ռիսկի մոնիտորինգի համար պատասխանատվությունն անկախ է ռիսկային գործունեությունն իրականացնողներից:	Տոկոսադրույքի ռիսկի ազդեցության և ռիսկի մոնիտորինգի համար պատասխանատվությունն անկախ չէ ռիսկային գործունեությունն իրականացնողներից:

Իրացվելիության ռիսկ

Ներքոնշյալ գործոնների ստուգումը հնարավորություն կտա վերահսկողներին գնահատել իրացվելիության ընդհանուր ռիսկը որպես՝

Ցածր	Միջին	Բարձր
Ղեկավարությունը լիովին ըմբռնում է իրացվելիության ռիսկի բոլոր առանձնահատկությունները:	Ղեկավարությունը ընդհանուր առմամբ ըմբռնում է իրացվելիության ռիսկի հիմնական առանձնահատկությունները:	Ղեկավարությունը չի ըմբռնում կամ արհամարհում է իրացվելիության ռիսկի հիմնական առանձնահատկությունները:
Ղեկավարությունը կանխատեսում և ճիշտ արձագանքում է շուկայում տիրող իրավիճակի փոփոխություններին:	Ղեկավարությունը համապատասխան կերպով արձագանքում է շուկայում տիրող իրավիճակի փոփոխություններին:	Ղեկավարությունը չի կանխատեսում և ժամանակին չի ձեռնարկում համապատասխան քայլեր շուկայում տիրող իրավիճակի փոփոխություններին արձագանքելու համար:

Իրացվելիության վիճակը բարենպաստ է շահույթի և կապիտալի վրա չնչին ազդեցությամբ:	Շուկայի գնահատման փոփոխության դեպքում բանկին սպառնացող դժվարություններն էական չեն: Շահույթի կամ կապիտալի վրա ունեցած ազդեցությունը չնչին է:	Հաստատության համար միջոցների մատչելիության վրա բացասական ազդեցություն է գործում շուկայի վատ ըմբռնումը, որի արդյունքում մեծանում է եկամուտների կամ կապիտալի կորստի հնարավորությունը:
Միջոցները բավականին առատ են և բանկին տալիս են գնային մրցակցության առավելություն:	Միջոցները բավարար են արդյունավետ իրացվելիության ապահովման համար:	Միջոցները և պորտֆելների կառուցվածքները վկայում են երկարաժամկետ արդյունավետ իրացվելիության ապահովման հարցում ընթացիկ կամ պոտենցիալ բարդությունների առկայության մասին:
Փոխառությունների աղբյուրները բազմազան են, ինստիտուցիոնալ կամ վարկի նկատմամբ զգայուն միջոցների աղբյուրների վրա հույս դնելու կարիք չկա կամ դրա կարիքը չնչին է:	Փոխառությունների աղբյուրները բազմազան են, ընդհանուր ներդրումային նպատակներ, ժամանակաշրջան և տնտեսական ազդեցություն ունեցող աղբյուրների (միջոցների) կամ խմբերի թիվը սահմանափակ է:	Փոխառության միջոցները կենտրոնացած են մի քանի աղբյուրներում կամ ընդհանուր ներդրումային նպատակներ և տնտեսական ազդեցություն ունեցող աղբյուրներում:
Իրացվելիության ռիսկի կառավարման գործընթացները վկայում են ժամանակի ընթացքում իր արդյունավետությունն ապացուցած հարուստ փորձի մասին:	Իրացվելիության ռիսկի կառավարման գործընթացները բավարար են:	Իրացվելիության ռիսկի կառավարման գործընթացներն անբավարար են:
Չնախատեսված հանգամանքներում գործողությունների ծրագիրը լավ է մշակված և արդյունավետ է:	Չնախատեսված հանգամանքներում գործողությունների ծրագիրն արդյունավետ է, իսկ իրացվելիության հնարավորությունների արժեքը՝ համապատասխանորեն հաշվառված:	Չնախատեսված հանգամանքներում գործողությունների ծրագիր գոյություն չունի կամ անավարտ է: Իրացվելիության հնարավորությունների արժեքը պատշաճ կերպով չի հաշվառվել: Պատահական դեպքերի պահուստաֆոնդի անհրաժեշտության հնարավորությունը մեծ է: Մոտ ապագայում բարեփոխումներ չեն սպասվում:

Գնային ռիսկ

Ներքոնշյալ գործոնների ստուգումը հնարավորություն կտա վերահսկողներին գնահատել գնային ընդհանրացված ռիսկը որպես՝

Միջին	Ցածր	Բարձր
Ղեկավարությունն ընդհանուր առմամբ ըմբռնում է գնային ռիսկի հիմնական առանձնահատկությունները:	Ղեկավարությունը լիովին ըմբռնում է գնային ռիսկի բոլոր առանձնահատկությունները:	Ղեկավարությունը չի հասկանում կամ գերադասում է արհամարհել գնային ռիսկի հիմնական առանձնահատկությունները:
Ղեկավարությունը համապատասխան կերպով արձագանքում է շուկայում տիրող իրավիճակի փոփոխություններին:	Ղեկավարությունը կանխատեսում է և իրատեսորեն արձագանքում շուկայում տիրող իրավիճակի փոփոխություններին:	Ղեկավարությունը չի կանխատեսում և ժամանակին չի ձեռնարկում համապատասխան քայլեր շուկայում տիրող իրավիճակի փոփոխություններին արձագանքելու համար:
Գնային ռիսկի կառավարման գործընթացները բավարար են:	Գնային ռիսկի կառավարման գործընթացներն անթերի են կամ ունեն շատ քիչ թերություններ:	Գնային ռիսկի կառավարման գործընթացները թերի են:
Գնային ռիսկի չափման և ռիսկի մոնիտորինգի համար պատասխանատվությունն անկախ է ռիսկային գործունեությունից:	Գնային ռիսկի չափման և ռիսկի մոնիտորինգի համար պատասխանատվությունն անկախ է ռիսկային գործունեությունից:	Գնային ռիսկի չափման և ռիսկի մոնիտորինգի համար պատասխանատվությունն անկախ չէ ռիսկային գործունեությունից:

Արտարժութային ռիսկ

Ներքոնշյալ գործոնների ստուգումը հնարավորություն կտա վերահսկողներին գնահատել գնային ընդհանուր ռիսկը որպես՝

Ցածր	Միջին	Բարձր
Ղեկավարությունը լիովին ըմբռնում է արտարժույթի ռիսկի բոլոր առանձնահատկությունները:	Ղեկավարությունը բավարար կերպով ըմբռնում է արտարժույթի ռիսկի հիմնական առանձնահատկությունները:	Ղեկավարությունը չի ըմբռնում կամ գերադասում է արհամարհել արտարժույթի ռիսկի հիմնական առանձնահատկությունները:

Ղեկավարությունը կանխատեսում է և իրատեսորեն արձագանքում շուկայում տիրող իրավիճակի փոփոխություններին:	Ղեկավարությունը համապատասխան կերպով արձագանքում է շուկայում տիրող իրավիճակի փոփոխություններին:	Ղեկավարությունը չի կանխատեսում և ժամանակին չի ձեռնարկում համապատասխան քայլեր շուկայում տիրող իրավիճակի փոփոխություններին արձագանքելու համար:
Արտարժույթի վերագնահատման արդյունքում եկամուտներին և կապիտալին սպառնացող անկայունությունն աննշան է:	Արտարժույթի վերագնահատման արդյունքում եկամուտներին և կապիտալին սպառնացող անկայունությունը միջին չափի է:	Արտարժույթի վերագնահատման արդյունքում եկամուտներին և կապիտալին սպառնացող անկայունությունը շատ բարձր է:
Արտարժույթի վերագնահատումից դրամական հոսքերը կանխատեսելի են և լիովին համապատասխանեցված կամ պաշտպանված:	Արտարժույթի վերագնահատումից դրամական հոսքերի անհամապատասխանությունները կանխատեսելի են և միջին չափի:	Որոշ դիրքեր գնահատված են համեմատաբար դժվար իրացվելի արժույթով, ինչը դժվարացնում է դրանց պաշտպանումը, արագությունն ու թանկացնում է գինը:
Ռիսկի չափման գործիքները և մեթոդները բազմակիորեն փորձված են գործունեության տվյալ ծավալի և բարդության համար:	Ռիսկի չափման գործիքները և մեթոդները կարող են ունենալ աննշան թերություններ, բայց բավարար են գործունեության տվյալ ծավալի և բարդության համար:	Ռիսկի չափման գործիքները և մեթոդները բավարար չեն գործունեության տվյալ ծավալի և բարդության համար:
Բանկի ղեկավարության կողմից սահմանվել են արտարժույթի ռիսկի հստակ սահմանաչափեր, և սահմանի կառուցվածքը խելամիտ է, հասկանալի և հայտնի:	Սահմանի կառուցվածքը բավականին խելամիտ է, հասկանալի և հայտնի:	Բանկի ղեկավարության կողմից չեն սահմանվել արտարժույթի ռիսկի հստակ սահմանաչափեր, և սահմանի կառուցվածքը խելամիտ, հասկանալի և հայտնի չէ:
Սահմանները հստակորեն արտացոլում են այն ռիսկը, որին ենթակա են եկամուտներն ու կապիտալը՝ բազմաթիվ սահմանված ու խելամիտ սցենարների դեպքում:	Սահմաններն արտացոլում են այն ռիսկը, որին ենթակա են եկամուտներն ու կապիտալը՝ սահմանված ու խելամիտ սցենարների դեպքում:	Սահմանները հստակ պատկերացում չեն տալիս եկամուտներին և կապիտալին սպառնացող ռիսկի մասին:

Գործառնական ռիսկ

Ներքոնշյալ գործոնների ստուգումը հնարավորություն կտա վերահսկողներին գնահատել ընդհանուր գործառնական ռիսկը որպես՝

Ցածր	Միջին	Բարձր
Ղեկավարությունը լիովին ըմբռնում է գործառնական բոլոր առանձնահատկությունները և կանխատեսում ու իրատեսորեն արձագանքում շուկայական և տեխնոլոգիական փոփոխություններին:	Ղեկավարությունը բավարար կերպով ըմբռնում է գործառնական հիմնական առանձնահատկությունները և համապատասխան կերպով արձագանքում շուկայական և տեխնոլոգիական փոփոխություններին:	Ղեկավարությունը չի ըմբռնում կամ գերադասում է արհամարհել գործառնական ռիսկի հիմնական առանձնահատկությունները և չի կանխատեսում կամ ժամանակին չի ձեռնարկում համապատասխան քայլեր շուկայական և տեխնոլոգիական փոփոխություններին արձագանքելու համար:
Գործառնությունների ծավալն ու բարդությունը փոքր են և բավականին լավ աջակցություն են ստանում համակարգերի զարգացմամբ:	Գործառնությունների ծավալն ու բարդությունը բանկի համար որոշակի ռիսկի աղբյուր են: Համակարգերի զարգացման օժանդակությունը համարժեք է իրականացվող գործարքների ծավալին:	Գործառնությունների իրականացման մակարդակը և համակարգերի զարգացման վիճակը հետևողական չեն և արտացոլում են բոլոր թերությունները:
Գործառնական ռիսկի հետևանքով բանկի վարկանիշին հասցված հնարավոր վնասը կամ եկամուտների և կապիտալի կորստի հնարավորությունն աննշան է:	Գործառնական ռիսկի հետևանքով բանկի վարկանիշին հասցված հնարավոր վնասը կամ եկամուտների և կապիտալի կորստի հնարավորությունն առկա է, բայց մեղմացվում է համապատասխան ներքին վերահսկողության միջոցով:	Թույլ ներքին վերահսկողությունը լրջորեն վնասում է բանկի վարկանիշին և բանկին ենթարկում եկամուտների կամ կապիտալի էական կորստի ռիսկի:
Բանկն ունի առողջ գործառնական ռիսկի վերաբերյալ պատմություն: Ապագա գործառնությունների ծախողման հնարավորությունը նվազագույնի է հասնում ուժեղ ներքին վերահսկողության շնորհիվ:	Բանկն ունի բավարար գործառնական ռիսկի վերաբերյալ պատմություն: Ապագա գործառնությունների ծախողման հնարավորությունը նվազում է ընդհանուր առմամբ արդյունավետ ներքին վերահսկողության շնորհիվ:	Բանկը նախկինում գուցե ունեցել է գործառնական ռիսկի ծախողումներ: Ապագա գործառնությունների ծախողման հնարավորությունը բարձր է արդյունավետ ներքին վերահսկողության բացակայության պատճառով:

Բանկն արժանի տեղ է հատկացնում ուժեղ վերահսկողությանը, որի հետևանքով համակարգերը, ներքին վերահսկողությունը, աուդիտը և չնախատեսված դեպքերի համար մշակված գործունեության ծրագիրը հստակ են:	Համարժեք տեղեկատվության մշակման համակարգերը, ներքին վերահսկողությունը, աուդիտն ու չնախատեսված դեպքերի համար մշակված գործունեության ծրագիրն առկա են:	Գործառնական և տեղեկատվական համակարգերը, ներքին վերահսկողությունը, աուդիտն ու չնախատեսված դեպքերի համար մշակված գործունեության ծրագիրը թույլ են:

Բարի համբավի ռիսկ

Ներքոնշյալ գործոնների ստուգումը հնարավորություն կտա վերահսկողներին գնահատել վարկանիշի ընդհանրացված ռիսկը որպես՝

Ցածր	Միջին	Բարձր
Ղեկավարությունը կանխատեսում է և իրատեսորեն արձագանքում շուկայում ունեցած իր վարկանիշի վրա ազդող շուկայական և կարգավորման բնույթի փոփոխություններին:	Ղեկավարությունը համապատասխան կերպով արձագանքում է շուկայում ունեցած իր վարկանիշի վրա ազդող շուկայական և կարգավորման բնույթի փոփոխություններին:	Ղեկավարությունը չի կանխատեսում կամ ժամանակին և համապատասխան գործողություններ չի ձեռնարկում շուկայական և կարգավորման բնույթի փոփոխություններին արձագանքելու համար:
Ներքին վերահսկողությունը և աուդիտը լիովին արդյունավետ են:	Ներքին վերահսկողությունը և աուդիտը հիմնականում արդյունավետ են:	Ներքին վերահսկողությունը և աուդիտը արդյունավետ չեն ռիսկերի ազդեցության նվազեցման հարցում: Ղեկավարությունը կամ չի նախաձեռնել բարդ իրավիճակների լուծման համար ուղղիչ գործողություններ կամ թերացել է դրանց իրականացման մեջ:
Վարկանիշի ռիսկի ազդեցությունը բանկի արժեքի վրա նվազագույնի է հասնում: Ակնկալվում է, որ վարկանիշի ռիսկի ազդեցությունը կանխատեսելի ապագայում կմնա ցածր:	Վարկանիշի ռիսկի ազդեցությունը բանկի արժեքի վրա վերահսկողության ներքո է: Ակնկալվում է, որ վարկանիշի ռիսկի ազդեցությունը կանխատեսելի ապագայում չի աճի:	Բանկի արժեքի վրա վարկանիշի ռիսկի ազդեցությունը նշանակալի է, որն արտահայտվում է էական դատավեճերով, ԱՄՆ դոլարի խոշոր կորուստներով կամ հաճախորդների բողոքների մեծ ծավալով: Պոտենցիալ ազդեցու-

		թյունն աճում է հաշիվների թվի, կառավարման ներքո գտնվող ակտիվների ծավալի կամ ձախողված գործարքների քանակի հետևանքով: Կանխատեսելի ապագայում ազդեցությունը չի փոփոխվի:
Բանկի դատավեճերը և հաճախորդների բողոքները համակարգված բնույթ չեն կրում:	Բանկին հաջողվել է խուսափել շահերի բախումից և այլ իրավական ու վերահսկողական խախտումներից: Դատավեճերի, կորուստների և հաճախորդների բողոքների ծավալը կառավարելի է և համապատասխանում է ընդհանուր գործունեության ծավալին:	Ակնհայտ են վարչական թերություններ, շահերի բախում և այլ իրավական ու վերահսկողական խախտումներ:

Հավելված 2

ՍՏՐԵՍ ՏԵՍՏԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

Բանկային ռիսկերը գնահատելու նպատակով միջազգային փորձում լայնորեն կիրառվում են ստրես տեստերը, համաձայն որոնց դիտարկվող ամենատարբեր շոկային սցենարների հանդես գալու դեպքում գնահատվում են բանկի վնասները: Ստրես տեստերը չեն ենթադրում հաշվարկման կոնկրետ մեթոդիկա, քանի որ դիտարկվում են տարբեր ռիսկերին վերաբերող մի շարք սցենարներ և յուրաքանչյուր սցենարի դեպքում համապատասխան մեթոդով հաշվարկվում են բանկի վնասը կամ օգուտը: Սցենարները կարող են լինել պատմականորեն հիմնավորված և չհիմնավորված (հիպոթեզային):

Պատմականորեն հիմնավորված սցենարները համարվում են ավելի իրատեսական, քանի որ դրանք անցյալում արդեն տեղի են ունեցել, և կրկնվելու հավանականությունն ավելի մեծ է:

Հիպոթեզային սցենարները կիրառվում են այն դեպքերում, երբ շոկային իրավիճակները, որոնք անցյալում տեղի չեն ունեցել, ապագայում թվում են հավանական և կանխատեսելի: Ստրես տեստերի այս տեսակը հիմնվում է ռիսկերը գնահատող մարմնի արհեստավարժության և իրատեսական ռիսկերը ճիշտ կանխատեսելու կարողության վրա, քանի որ յուրաքանչյուր ֆինանսական կազմակեպություն գիտակցում է իր գործունեության առանձնահատուկ ռիսկային իրավիճակները և կառուցում միայն իրեն բնորոշ սցենարներ:

Շոկային սցենարների բնույթից ելնելով կարող են գնահատվել ինչպես մեկ, այնպես էլ մեկից ավելի հնարավոր ռիսկերի գործոնների միաժամանակյա հանդես գալու դեպքում բանկում ակնկալվող կորուստը (օրինակներ՝ 1. ենթադրվում է արտարժույթի 10% արժեքավորում, ինչը կարող է վնասել ինչպես արտարժութային, այնպես էլ վարկային ռիսկի տեսանկյունից՝ հաշվի առնելով, որ մեծածավալ արտարժութային վարկեր ունեցող բանկերի որոշ վարկառուներ չնախատեսված արժեքավորումից հնարավոր է ի վիճա-

կի չլինեն ամբողջ գումարը ժամանակին մարել, 2. անշարժ գույքի արժեզրկումը կարող է վնաս պատճառել բանկին ինչպես հիմնական միջոցների վերագնահատման արդյունքում, այնպես էլ վարկային ռիսկի տեսանկյունից՝ հաշվի առնելով գրավադրված անշարժ գույքի արժեզրկման փաստը):

Ստորև ներկայացվում են որոշ շոկային սցենարների հանդես գալու դեպքում բանկային պորտֆելի փոփոխությունների հաշվարկման մեթոդները: Դիտարկվող սցենարներից մի քանիսը պատմականորեն հիմնավորված են, մասնավորապես՝ վարկային ռիսկին վերաբերող «ընդհանուր վարկերի 1%-ի դասակարգումն անհուսալի վարկերի» և արտարժութային ռիսկի: Այնուհանդերձ, քանի որ ստրես տեստերի իմաստն առանձին շոկային իրավիճակներում բանկի ակնկալվող ֆինանսական վիճակը գնահատելն է, ապա պարտադիր չէ, որ դիտարկվող սցենարները կատարված լինեն: Այս առումով, հաշվի առնելով նաև, որ ոչ բոլոր ստրես սցենարների պատմական շարքերը կարող են հասանելի լինել, և, սակայն, որոնց հանդես գալը չի բացառվում, անհրաժեշտություն է առաջանում դիտարկել նաև հիպոթեզային սցենարներ: Հատկանշական է, որ ելնելով բանկի առանձնահատկություններից (մասնավորապես՝ ո՞ր ռիսկն է բանկում առավելապես արտահայտված), կարող են առաջարկվել և դիտարկվել ներքոնշյալ սցենարներից տարբերվող այլ սցենարներ:

Այսպես, ստորև դիտարկվում են վարկային, իրացվելիության, արտարժութային և տոկոսադրույքի ռիսկերին վերաբերող որոշ ստրես սցենարների հանդես գալու պարագայում բանկի՝ ակնկալվող կորուստների կամ օգուտների հաշվարկման մեթոդները: Այնուհանդերձ, դիտարկվող սցենարների համար անհրաժեշտ տեղեկատվական ժամանակային շարքը ուսումնասիրելու պայմաններում յուրաքանչյուր բանկի համար կարելի է նշված սցենարները կառուցել առավել իրատեսորեն (օրինակ, դիտարկվող կասկածելի վարկերի 75%-ն անհուսալի դասակարգելու սցենարն առանձին բանկերի համար կարելի է վերափոխել ավելի իրատեսական տոկոս ընտրելով՝ հաշվարկելով, թե ժամանակային շարքով ամսական կտրվածքով այդ բանկի կասկածելի վարկերի միջինը քանի տոկոսն է դարձել անհուսալի):

ՍՏՐԵՍ ՏԵՍՏԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Վարկային ռիսկ

Բանկերի վրա վարկային ռիսկի ազդեցությունը գնահատելու նպատակով օգտագործվում են հետևյալ շոկային սցենարները.

- դասակարգված վարկերի 25%-ի չափով համամասնական դուրսգրումը,
- կասկածելի վարկերի 75%-ի դասակարգումն անհուսալի վարկերի,
- ստանդարտ վարկերի 30%-ի դասակարգումը հսկվող վարկերի,
- խոշոր վարկառուի սնանկացման հետևանքով վարկի անհուսալի դառնալու փաստը,
- ընդհանուր վարկերի 1%-ի դասակարգումն անհուսալի վարկերի:

Նշված սցենարներն իրագործելու համար օգտագործվում են «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ով (այսուհետ՝ Կանոնակարգ 3) նախատեսված առևտրային բանկերի կողմից ներկայացվող ձև թիվ 3 և 6 հաշվետվությունների տվյալները:

Առաջին սցենարով դիտարկվում է դասակարգված վարկերի 25%-ի չափով համամասնական դուրսգրումը: Ուսումնասիրության արդյունքում վերլուծվում է, թե նշված իրավիճակն ինչպես կանդրադառնա բանկերի նորմատիվային ընդհանուր կապիտալի և համարժեքության ($Ն1^1$ և $Ն1^2$) նորմատիվների վրա:

Դասակարգված վարկերի 25%-ի չափով համամասնական դուրսգրման ազդեցությունը բանկերի վրա գնահատելու համար հաշվարկվում է նշված իրավիճակում բանկի պահուստաֆոնդ փոխանցվող անհրաժեշտ ավել գումարի չափը, որը որոշելու համար օգտագործվում է Կանոնակարգ 3-ի ձև թիվ 6 հաշվետվության տեղեկատվությունը:

<u>Պահուստաֆոնդ ավել փոխանցման ենթակա գումարը</u> = Հսկվող վարկեր/4 + Ոչ ստանդարտ վարկեր/4 + Կասկածելի վարկեր/4 - (ընդամենը պահուստաֆոնդ - Ստանդարտ վարկեր x 0.01- Հսկվող վարկեր x 3/4 x 0.1 - Ոչ ստանդարտ վարկեր x 3/4 x 0.2 - Կասկածելի վարկեր x 3/4 x 0.5)

Այնուհետև նորմատիվային ընդհանուր և հիմնական կապիտալները, ինչպես նաև ռիսկով կշռված ակտիվները նվազեցվում են այդ գումարի չափով, ապա հաշվարկվում նորմատիվային ընդհանուր կապիտալի, Ն1^1 և Ն1^2 նորմատիվները: Տվյալների աղբյուր է Կանոնակարգ 3-ի ձև թիվ 3 հաշվետվությունը:

Արդյունքում վերլուծվում է, թե նշված իրավիճակում որ բանկերը կխախտեն ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվը, Ն1^1 և Ն1^2 նորմատիվները և/կամ որ բանկերը թեպետ չեն խախտի նորմատիվային պահանջները, սակայն խոշոր գումարներ կփոխանցեն պահուստաֆոնդ:

Երկրորդ սցենարով դիտարկվում է կասկածելի վարկերի 75%-ի դուրսգրման սցենարը: Ուսումնասիրության արդյունքում վերլուծվում է, թե նշված իրավիճակն ինչպես կանդրադառնա բանկերի նորմատիվային ընդհանուր կապիտալի և համարժեքության (Ն1^1 և Ն1^2) նորմատիվների վրա:

Նախ հաշվարկվում է նշված իրավիճակում բանկի պահուստաֆոնդ փոխանցվող անհրաժեշտ ավել գումարի չափը, որը որոշելու համար օգտագործվում է Կանոնակարգ 3-ի ձև թիվ 6 հաշվետվության տեղեկատվությունը:

<u>Պահուստաֆոնդ ավել փոխանցման ենթակա գումարը</u> = Կասկածելի վարկեր x 3/4 - (ընդամենը պահուստաֆոնդ - Ստանդարտ վարկեր x 0.01 - Հսկվող վարկեր x 0.1 - Ոչ ստանդարտ վարկեր x 0.2 - Կասկածելի վարկեր /4 x 0.5)

Այնուհետև նորմատիվային ընդհանուր և հիմնական կապիտալները, ինչպես նաև ռիսկով կշռված ակտիվները նվազեցվում են այդ գումարի չափով, ապա հաշվարկվում նորմատիվային ընդհանուր կապիտալի, Ն1^1 և Ն1^2 նորմատիվները:

Արդյունքում վերլուծվում է, թե նշված իրավիճակում որ բանկերը կխախտեն ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվը, Ն1^1 և Ն1^2 նորմատիվները և/կամ որ բանկերը խոշոր գումարներ կփոխանցեն պահուստաֆոնդ:

Երրորդ սցենարով դիտարկվում է ստանդարտ վարկերի 30%-ի դասակարգումը հսկվող վարկերի: Ուսումնասիրության արդյունքում վերլուծվում է, թե նշված իրավիճակն ինչպես կանդրադառնա բանկերի նորմատիվային ընդհանուր կապիտալի և համարժեքության (Ն1^1 և Ն1^2) նորմատիվների վրա:

Նախ հաշվարկվում է նշված իրավիճակում բանկի պահուստաֆոնդ փոխանցվող անհրաժեշտ ավել գումարի չափը, որը որոշելու համար օգտագործվում է Կանոնակարգ 3-ի ձև թիվ 6 հաշվետվության տեղեկատվությունը:

<u>Պահուստաֆոնդ ավել փոխանցման ենթակա գումարը</u> = Ստանդարտ վարկեր x 0.3 x 0.1- (ընդամենը պահուստաֆոնդ - Ստանդարտ վարկեր x 0.7 x 0.01- Հսկվող վարկեր x 0.1 - Ոչ ստանդարտ վարկեր x 0.2 - Կասկածելի վարկեր x 0.5)

Այնուհետև նորմատիվային ընդհանուր և հիմնական կապիտալները, ինչպես նաև ռիսկով կշռված ակտիվները նվազեցվում են այդ գումարի չափով, ապա հաշվարկվում նորմատիվային ընդհանուր կապիտալի, $Ն1^1$ և $Ն1^2$ նորմատիվները: Տվյալների աղբյուր է Կանոնակարգ 3-ի ձև թիվ 3 հաշվետվությունը:

Արդյունքում վերլուծվում է, թե նշված իրավիճակում որ բանկերը կխախտեն ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվը, $Ն1^1$ և $Ն1^2$ նորմատիվները և/կամ որ բանկերը խոշոր գումարներ կփոխանցեն պահուստաֆոնդ:

Չորրորդ սցենարով դիտարկվում է խոշոր վարկառուի սնանկացման հետևանքով խոշորագույն վարկի դուրսգրման սցենարը և վերլուծվում, թե նշված իրավիճակն ինչպես կանդրադառնա բանկերի նորմատիվային ընդհանուր կապիտալի և համարժեքության $Ն1^1$ և $Ն1^2$ նորմատիվների վրա: Հաշվարկման համար բանկի ընդհանուր և հիմնական կապիտալները, ինչպես նաև ռիսկով կշռված ակտիվները նվազեցվում են խոշորագույն վարկի գումարի չափով, ապա հաշվարկվում նորմատիվային ընդհանուր կապիտալի, $Ն1^1$ և $Ն1^2$ նորմատիվները: Տվյալների աղբյուր է հանդիսանում Կանոնակարգ 3-ի ձև թիվ 3 հաշվետվությունում մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվի տեղեկատվությունը:

Արդյունքում վերլուծվում է, թե նշված իրավիճակում որ բանկերը կխախտեն ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվը, $Ն1^1$ և $Ն1^2$ նորմատիվները և/կամ որ բանկերը խոշոր գումարներ կփոխանցեն պահուստաֆոնդ:

Հինգերորդ սցենարով դիտարկվում է ընդհանուր վարկերի 1%-ի դասակարգումն անհուսալի վարկերի: Ուսումնասիրության արդյունքում վերլուծվում է, թե նշված իրավիճակն ինչպես կանդրա-

դառնա բանկերի նորմատիվային ընդհանուր կապիտալի և համարժեքության ($Ն1^1$ և $Ն1^2$) նորմատիվների վրա:

Նախ հաշվարկվում է նշված իրավիճակում բանկի պահուստաֆոնդ փոխանցվող անհրաժեշտ ավել գումարի չափը, որը որոշելու համար օգտագործվում է Կանոնակարգ 3-ի ձև թիվ 6 հաշվետվության տեղեկատվությունը:

Պահուստաֆոնդ ավել փոխանցման ենթակա գումարը = Ընդհանուր վարկեր x 0.01 - (ընդամենը պահուստաֆոնդ - Ստանդարտ վարկեր x 0.01 - Հսկվող վարկեր x 0.1 - Ոչ ստանդարտ վարկեր x 0.2 - Կասկածելի վարկեր x 0.5)

Այնուհետև նորմատիվային ընդհանուր և հիմնական կապիտալները, ինչպես նաև ռիսկով կշռված ակտիվները նվազեցվում են այդ գումարի չափով, ապա հաշվարկվում նորմատիվային ընդհանուր կապիտալի, $Ն1^1$ և $Ն1^2$ նորմատիվները: Տվյալների աղբյուր է հանդիսանում Կանոնակարգ 3-ի ձև թիվ 3 հաշվետվությունը:

Արդյունքում վերլուծվում է, թե նշված իրավիճակում որ բանկերը կխախտեն ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվը, $Ն1^1$ և $Ն1^2$ նորմատիվները և/կամ որ բանկերը խոշոր գումարներ կփոխանցեն պահուստաֆոնդ:

Իրացվելիության ռիսկ

Բանկերում իրացվելիության ռիսկի ազդեցությունը գնահատելու նկատառումով ստորև դիտարկվում են հետևյալ ստրես սցենարները.

- ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների 25%-ի՝ պայմանագրի ժամկետից շուտ հետ պահանջում,
- ցպահանջ պարտավորությունների 25%-ի հետ պահանջում,
- ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների 25%-ի՝ ժամկետից շուտ և ցպահանջ պարտավորությունների 25%-ի հետ պահանջում:

Դիտարկումները բացահայտում են, թե նշված իրավիճակների հանդես գալու պայմաններում որ բանկերը կխախտեն իրացվելիության ($Ն2^1$ և $Ն2^{2)}$ նորմատիվները: Նշված սցենարները դիտարկելու համար օգտագործվում են Կանոնակարգ 3-ի ձև թիվ 1 և 3 հաշվետվությունների տվյալները:

Առաջին սցենարով դիտարկվում է ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների 25%-ի՝ պայմանագրի ժամկետից շուտ հետ պահանջումը: Ուսումնասիրության արդյունքում վերլուծվում է, թե նշված իրավիճակը ինչպես կանդրադառնա բանկերի իրացվելիության ($Ն2^1$ և $Ն2^2$) նորմատիվների վրա:

Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների 25%-ի՝ պայմանագրի ժամկետից շուտ հետ պահանջման հետևանքները գնահատելու համար հաշվարկում ենք նշված իրավիճակի հանդես գալու պարագայում մարման ենթակա գումարի մեծությունը: Տվյալների աղբյուր է հանդիսանում Կանոնակարգ 3-ի ձև թիվ 1 հաշվետվությունը:

<u>Մարման ենթակա գումարը</u> = ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ/4

Այնուհետև բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարները նվազեցվում են (ցպահանջ պարտավորությունների գումարը չի նվազեցվում) ստացված գումարի չափով, ապա հաշվարկվում ընդհանուր իրացվելիության և ընթացիկ իրացվելիության նորմատիվները: Տվյալների աղբյուր է հանդիսանում Կանոնակարգ 3-ի ձև թիվ 3 հաշվետվությունը:

Արդյունքում վերլուծվում է, թե նշված իրավիճակի հանդես գալու պարագայում որ բանկերը կխախտեն իրացվելիության նորմատիվները:

Երկրորդ սցենարով դիտարկվում է ցպահանջ պարտավորությունների 25%-ի հետ պահանջումը: Ուսումնասիրության արդյունքում պարզաբանվում է, թե նշված իրավիճակն ինչպես կանդրադառնա բանկերի իրացվելիության ($Ն2^1$ և $Ն2^2$) նորմատիվների վրա:

Ցպահանջ պարտավորությունների 25%-ի հետ պահանջման հետևանքները գնահատելու նպատակով հաշվարկվում է նշված իրավիճակի հանդես գալու պարագայում մարման ենթակա գումարը: Տվյալների աղբյուր է հանդիսանում Կանոնակարգ 3-ի ձև թիվ 3 հաշվետվությունը:

<u>Մարման ենթակա գումարը</u> = Ցպահանջ պարտավորություններ/4

Այնուհետև բարձր իրացվելի ակտիվների, ընդհանուր ակտիվների և ցպահանջ պարտավորությունների գումարները նվազեց-

վում են ստացված գումարի չափով, ապա հաշվարկվում ընդհանուր իրացվելիության և ընթացիկ իրացվելիության նորմատիվները: Տվյալների աղբյուր է հանդիսանում Կանոնակարգ 3-ի ձև թիվ 3 հաշվետվությունը:

Արդյունքում վերլուծվում է, թե նշված իրավիճակում որ բանկերը կխախտեն իրացվելիության նորմատիվները:

Երրորդ սցենարով դիտարկվում է ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների 25%-ի ժամկետից շուտ և ցպահանջ պարտավորությունների 25%-ի միաժամանակ հետ պահանջումը: Ուսումնասիրության արդյունքում պարզաբանվում է, թե նշված իրավիճակն ինչպես կանդրադառնա բանկերի իրացվելիության ($Ն2^1$ և $Ն2^2$) նորմատիվների վրա:

Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների 25%-ի ժամկետից շուտ և ցպահանջ պարտավորությունների 25%-ի հետ պահանջման հետևանքները գնահատելու համար հաշվարկվում է նշված իրավիճակի հանդես գալու պարագայում մարման ենթակա գումարը: Տվյալների աղբյուր են հանդիսանում Կանոնակարգ 3-ի ձև թիվ 1 և թիվ 3 հաշվետվությունները:

<u>Մարման ենթակա գումարը</u> = Ցպահանջ պարտավորություններ/4+ ֆիզիկական անձանց ավանդներ/4

Այնուհետև բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարները նվազեցվում են ստացված գումարի չափով, իսկ ցպահանջ պարտավորությունները՝ միայն ցպահանջ պարտավորությունների 1/4-ի չափով, ապա հաշվարկվում են ընդհանուր իրացվելիության և ընթացիկ իրացվելիության նորմատիվները: Տվյալների աղբյուր է հանդիսանում Կանոնակարգ 3-ի ձև թիվ 3 հաշվետվությունը: Արդյունքում պարզվում է, թե նշված իրավիճակում որ բանկերը կխախտեն իրացվելիության նորմատիվները:

Արտարժութային ռիսկ

Արտարժութային ռիսկի ազդեցությունը բանկերի վրա գնահատելու համար դիտարկվում է հետևյալ ստրեսային սցենարը. ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի 10 դրամով արժեզրկումը: Բանկի կրած վնասը կամ շահույթը բացահայտելու համար անհրաժեշտ է Կանոնակարգ 3-ի ձև թիվ 1 «հաշվեկշիռ» հաշվետվության առաջին

խմբի արտարժութային ճեղքվածքը բաժանել տվյալ օրը Կենտրոնական բանկի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքի վրա և բազմապատկել 10-ով: Այնուհետև նորմատիվային ընդհանուր և հիմնական կապիտալները, ինչպես նաև ռիսկով կշռված ակտիվները նվազեցվում են այդ գումարի չափով, ապա հաշվարկվում նորմատիվային ընդհանուր կապիտալի և $Ն1^1$ և $Ն1^2$ նորմատիվները: Տվյալների աղբյուր է հանդիսանում Կանոնակարգ 3-ի ձև թիվ 3 հաշվետվությունը:

Կարելի է դիտարկել նաև ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի 2.5%-ով կամ 5%-ով արժեզրկման սցենարը, որը հաշվարկելու համար Կանոնակարգ 3-ի ձև թիվ 1 «հաշվեկշիռ» հաշվետվության հաշվարկվում է առաջին խմբի արտարժութային ճեղքվածքը, ինչը հետո պետք է բաժանել տվյալ օրվա՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքի վրա և բազմապատկել՝ հաշվարկային փոխարժեք x 5/100: Բնականաբար երկար դիրք ունեցող բանկերը ՀՀ դրամի արժեզրկման արդյունքում կունենան օգուտ, իսկ կարճ դիրք ունեցողները՝ վնաս:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ առաջին խմբի արտարժույթի մեջ բացի ԱՄՆ դոլարից ընդգրկվում են նաև այլ արտարժույթներ, ապա անհրաժեշտ է նույն սցենարը դիտարկելիս ընդգրկել միայն ԱՄՆ դոլարի դիրքը (եթե անհրաժեշտ տեղեկատվությունը հասանելի է): Միևնույն ժամանակ, այն բանկերի համար, որոնք ունեն խոշոր ծավալի այլ արտարժութային միջոցներ, կարելի է կատարել ստրես տեստեր այդ արտարժույթի արժեզրկման և/կամ արժեքավորման դիտարկմամբ:

Տոկոսադրույքի ռիսկը

Տոկոսադրույքի ռիսկը գնահատելու համար կարող են դիտարկվել ինչպես ընդհանուր շուկայական միջին տոկոսադրույքի, այնպես էլ առանձին ակտիվի կամ պարտավորության տոկոսադրույքի փոփոխության (օրինակ՝ 2% կամ 3% նվազման կամ աճի) սցենարներ: Հաշվարկը կատարվում է դյուրացիայի մեթոդով, ըստ որի դիտարկվող սցենարով հաշվարկվում է բանկի կապիտալի տնտեսական արժեքի փոփոխությունը:

Հավելված 3

ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՌԻՍԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ճԵՂՔՎԱԾՔԻ (GAP) ԵՎ ԴՅՈՒՐԱՑԻԱՅԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ներածություն

Տոկոսադրույքի ռիսկը այն ներկա կամ ապագա հավանականությունն է, երբ տոկոսադրույքի մակարդակի անբարենպաստ փոփոխությունը կարող է բացասական հետևանք ունենալ բանկի կապիտալի և/կամ շահույթի վրա:

Տարբերակում են տոկոսադրույքի ռիսկի չորս տեսակ.

- բազիսային ռիսկ,
- եկամտաբերության կորի ռիսկ,
- օպցիոնի (ընտրության) ռիսկ,
- ժամկետայնության ճեղքվածքի ռիսկ:

Բազիսային ռիսկը կապված է տարբեր տեսակի տոկոսադրույքների հետագա փոփոխությունների հետ: Հիմնականում ի հայտ է գալիս, երբ փոփոխվող տոկոսադրույքներով ներգրավված և տեղաբաշխված միջոցները կապված են տարբեր բազիսային տոկոսադրույքների հետ, որոնց միջև կատարյալ կոռելյացիոն կապ գոյություն չունի:

Եկամտաբերության կորի ռիսկն առաջանում է, երբ կորի փոփոխության հետևանքով բանկի կապիտալի տնտեսական արժեքը և/կամ շահույթը բացասական ազդեցություն են կրում:

Օպցիոնի (ընտրության) ռիսկն առաջանում է, երբ բանկը կամ բանկի հաճախորդը ունենում է ֆինանսական գործիքից ստացվող դրամական հոսքերի մակարդակը և/կամ ժամանակը փոփոխելու իրավունք, բայց ոչ պարտավորություն: Օպցիոնի ռիսկ են պարունակում վարկերի գծով կանխավճարման իրավունքը, ավանդների վաղաժամկետ դուրսբերումը, վարկերի տոկոսադրույքների վերին սահմանը:

Ժամկետայնության ճեղքվածքի ռիսկն առաջանում է, երբ բանկը միջոցներ է ներգրավում և տեղաբաշխում միևնույն բազիսային տոկոսադրույքներով, սակայն որոշ ժամանակային ճեղքվածքով, ըստ որի բանկի ներգրաված և տեղաբաշխած միջոցները համա-

ձայնեցված չեն մարման կամ տոկոսադրույքների վերանայման ժամկետներով:

Տոկոսադրույքի փոփոխության հետևանքով բանկի սպասվող հավանական կորուստները կամ օգուտները գնահատվում են ամենատարբեր մոդելներով, որոնցից կարևորվում են.

- տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների ճեղքվածքի կամ տոկոսադրույքների վերանայման (այսուհետև՝ GAP) մոդել,
- դյուրացիայի մոդել:

GAP մոդելը թույլ է տալիս ստանալ տոկոսադրույքի փոփոխության ազդեցությունը բանկի սպասվող զուտ տոկոսային եկամտի վրա:

Դյուրացիայի մոդելը ցույց է տալիս տոկոսադրույքի փոփոխության արդյունքում կապիտալի տնտեսական արժեքի փոփոխությունը՝ հաշվի առնելով ներգրավված պարտավորությունների և տեղաբաշխված ակտիվների ժամկետայնության անհամապատասխանությունը:

GAP մոդել

GAP մոդելով վերլուծության արդյունքում գնահատվում է տոկոսադրույքի փոփոխության ազդեցությունը զուտ տոկոսային եկամտի վրա: Տոկոսադրույքի ռիսկը գնահատելու համար տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ զգայուն պարտավորությունները հանվում են ակտիվներից՝ յուրաքանչյուր ժամանակահատվածի ճեղքվածքը (GAP) հաշվարկելու համար.

$$GAP=RSA-RSL, \quad (1)$$

որտեղ՝

GAP - տոկոսադրույքների փոփոխության նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների տարբերությունն է,

RSA - տոկոսադրույքների փոփոխության նկատմամբ զգայուն ակտիվներն են,

RSL - տոկոսադրույքների փոփոխության նկատմամբ զգայուն պարտավորությունները են:

Ճեղքվածքը կարող է լինել զրոյական, բացասական և դրական: Բացասական ճեղքվածքի դեպքում տոկոսադրույքների աճը կհան-

գեցնի զուտ տոկոսային եկամտի նվազման, իսկ դրական ճեղքվածքի դեպքում տոկոսադրույքների նվազումը կհանգեցնի զուտ տոկոսային եկամտի նվազման:

Սույն մեթոդիկայի հաշվարկում կատարվում են հետևյալ ենթադրությունները.

- դիտարկվող ժամանակահատվածում ակտիվների և պարտավորությունների կառուցվածքը և ծավալները մնում են անփոփոխ, այսինքն՝ մարված ակտիվները և պարտավորությունները կրկին տեղաբաշխվում և ներգրավվում են, բայց արդեն գործող նոր տոկոսադրույքով,
- տոկոսադրույքների վերանայումը կատարվում է յուրաքանչյուր ժամանակաշրջանի միջնակետում,
- տարբեր մարման ժամկետայնությամբ բոլոր ակտիվների և պարտավորությունների տոկոսադրույքները փոփոխվում են միևնույն չափով, այսինքն՝ տեղի է ունենում ակտիվների և պարտավորությունների եկամտաբերության կորերի զուգահեռ տեղաշարժ:

Հաշվարկի արդյունքում գնահատվում է տոկոսադրույքների փոփոխության ազդեցությունն առաջիկա եռամսյակի ընթացքում ստացվելիք զուտ տոկոսային եկամտի վրա:

Հաշվարկի համար օգտագործվում է հետևյալ բանաձևը.

$$\Delta NII = \sum GAP_t * \Delta R * K \text{ , (2)}$$

որտեղ՝

ΔNII - զուտ տոկոսային եկամտի փոփոխությունն է երեք ամսվա ընթացքում,

GAP_t - t ժամանակաշրջանի ճեղքվածքն է,

ΔR - տոկոսադրույքի ենթադրվող տարեկան փոփոխությունն է,

$K = (90-t) / 365$:

Վերոնշյալ սահմանափակող ենթադրություններից ելնելով՝ նպատակահարմար է տոկոսադրույքների փոփոխության ազդեցությունը զուտ տոկոսային եկամտի վրա հաշվարկել առաջիկա երեք ամիսների համար:

Սույն մեթոդաբանությունում տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների կազմում չեն ընդգրկվում ցպահանջ ակտիվները և պարտավորությունները, քանի

որ վերջիններիս ցածր եկամտաբերության/ծախսատարության պատճառով տոկոսադրույքների էական փոփոխություններ չեն ենթադրվում:

Հաշվարկման տվյալների աղբյուր է Կանոնակարգ 3-ով սահմանված ձև թիվ 9 հաշվետվությունը:

Հաշվարկում յուրաքանչյուր ժամանակահատվածի համար տոկոսադրույքի նկատմամբ զգայուն պարտավորությունները զտվում են ակտիվներից. այսպես, վերցվում է «մինչև 30 օր», «31-60 օր» և «61-90 օր» մարման ժամկետայնություն ունեցող «փոփոխվող տոկոսադրույքներով» և «հաստատագրված տոկոսադրույքներով» ակտիվների և պարտավորությունների հանրագումարների տարբերությունը: Ստացված տվյալները տեղադրելով բանաձև (2)-ի մեջ՝ հաշվարկվում է տոկոսադրույքի փոփոխության ազդեցությունը զուտ տոկոսային եկամուտի վրա.

$$\Delta NII = (GAP_{15}*75/365 + GAP_{45}*45/365 + GAP_{75}*15/365) * \Delta R \quad (3)$$

GAP մոդելի հիման վրա կատարվում է նաև տոկոսադրույքի նկատմամբ բանկի զգայունության վերլուծություն, որը, ի տարբերություն վերը ներկայացված մոդելի, ընդգրկում է նաև անտոկոս և ցպահանջ ակտիվներն ու պարտավորությունները:

Համաձայն այս վերլուծության՝ GAP-ի հաշվարկում ընդգրկվում են «ցպահանջ», «մինչև 30 օր», «31-60 օր» և «61-90 օր» մարման ժամկետայնություն ունեցող «փոփոխվող տոկոսադրույքներով», «հաստատագրված տոկոսադրույքներով» և «անտոկոս» ակտիվները և պարտավորությունները: Նշված ժամկետայնությամբ ակտիվների և պարտավորությունների կումուլյատիվ ճեղքվածքը հարաբերվում է ակտիվներին (սովորաբար կոչվում է ճեղքվածքի հարաբերակցություն՝ GAP/ASSETS), ինչը ցույց է տալիս տոկոսադրույքի ռիսկի ազդեցության ուղղությունը (դրական կամ բացասական GAP) և ռիսկի նկատմամբ զգայունության աստիճանը (ճեղքվածքն ակտիվների որ տոկոսն է կազմում): Դրական կումուլյատիվ ճեղքվածքը վկայում է, որ կարճաժամկետ հատվածում (երեք ամսում) բանկն ունի ազատ դրամական միջոցներ, որոնք կարող է տեղաբաշխել եկամտաբեր ակտիվների միջև՝ չառաջացնելով իրացվելիության հիմնախնդիր: Հետևաբար, դրական ճեղքվածքի դեպքում տոկոսադրույքների բարձրացումը կարող է բարենպաստ ազդեցություն թողնել բանկի եկամուտների վրա:

Ի լրումն վերոնշյալ մեթոդաբանության՝ փոփոխուն տոկոսադրույքով ակտիվների և պարտավորությունների զգալի GAP ունեցող բանկերին առաջարկվում է կատարել հետևյալ հաշվարկը, ինչը հնարավորություն կտա ճշգրիտ հաշվարկել տոկոսադրույքի փոփոխության հետևանքով բանկի կրած վնասները՝ պայմանավորված միայն փոփոխուն տոկոսադրույքով ակտիվներով և պարտավորություններով.

- զգալի փոփոխուն տոկոսադրույքով ակտիվներ և պարտավորություններ ունեցող բանկերից պահանջվում է ներկայացնել Հավելված 1-ում նշված հաշվետվությունը, որտեղ ներառվում են միայն փոփոխուն տոկոսադրույքով ակտիվները և պարտավորությունները,
- քանի որ ցպահանջ ավանդների դիմաց վճարվող տոկոսադրույքը հիմնականում աննշան կամ զրոյական է, ապա դա GAP-ի հաշվարկման մոդելում չի ներառվում,
- տոկոսադրույքի ռիսկի այս մեթոդով հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով.

$$\Delta NII = \sum\sum (GAP_{it}) \Delta R_{it} = \sum (RSA_{it} - RSL_{it}) \Delta R_{it}, \quad (4)$$

որտեղ՝

Δ NII - տոկոսադրույքի ենթադրվող փոփոխության հետևանքով բանկի կրած օգուտը կամ վնասն է,

GAP_{it} - i-րդ վերանայման ժամկետով և t-րդ մարման ժամկետայնությամբ ակտիվների և պարտավորությունների միջև ճեղքվածքի թվային արտահայտությունն է,

ΔR_{it} - այն համապատասխան ժամանակահատվածի ենթադրվող տոկոսադրույքի փոփոխությունն է, որը հավասար է մարման ժամկետի և վերանայման ժամկետի տարբերությանը (t-i):

Այս մոդելի կիրառման արդյունքում հաշվարկվում է տոկոսադրույքի փոփոխության հետևանքով բանկի կրած ընդհանուր վնասը կամ օգուտը՝ պայմանավորված միայն փոփոխուն տոկոսադրույքով ակտիվներով և պարտավորություններով:

Ստորև դիտարկվում է Հավելված 1-ում նշված հաշվետվության օգնությամբ վերոնշյալ մոդելով տոկոսադրույքի փոփոխության հետևանքով փոփոխուն տոկոսադրույքով ակտիվներով և պարտավորություններով պայմանավորված վնասի հաշվարկման մեկ օրինակ.

ԱԲԳ բանկն ունի ցպահանջ վերանայման ժամկետայնությամբ և 121-150 օր մարման ժամկետայնությամբ 1 մլն դրամ դրական ճեղքվածք, 61-90 օր վերանայման ժամկետայնությամբ և 91-120 օր մարման ժամկետայնությամբ 1.2 մլն դրամ դրական ճեղքվածք և կրկին 61-90 օր վերանայման ժամկետայնությամբ, սակայն 1-3 տարի մարման ժամկետայնությամբ 2 մլն դրամ բացասական ճեղքվածք: Տարեկան տոկոսադրույքի ենթադրվող 2% աճի դեպքում փոփոխուն տոկոսադրույքով ակտիվների և պարտավորությունների ազդեցությունը բանկի սպասվող եկամտի վրա հաշվարկվում է հետևյալ կերպ (հաշվարկներում վերցվում են ժամկետների միջնակետերը).

հազար դրամ

Մարմանը մնացել է		Վերանայմանը մնացել է											
		ցպահանջ[1]	մինչև 30 օր	31- 60 օր	61- 90 օր	91- 120 օր	121- 150 օր	151- 180 օր	181 օրից 1 տարի	1-3 տարի	3 տարուց ավելի	ընդամենը
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11
ցպահանջ	1											
մինչև 30 օր	2											
31-60 օր	3											
61-90 օր	4											1200
91-120 օր	5				1200							1000
121-150 օր	6	1000										
151-180 օր	7											
181 օրից 1 տարի	8											
1-3 տարի	9				-2000							-2000
3 տարուց ավելի	10											
ճեղքվածք	11	1000			800							200

$$\Delta \text{ NII} = \sum\sum (GAP_{it})\ \Delta R_{it} = 0.02*(135/365*1+(105-75)/365*1.2-(730-75)/365*2) = -0.06 \text{ մլն դրամ}$$

[1] *Ցպահանջ միջոցների տոկոսադրույքները վերանայվում են շուկայական տոկոսադրույքների ցանկացած փոփոխության դեպքում:*

Նշված օրինակում շուկայական տարեկան տոկոսադրույքի 2% աճը ԱԲԳ բանկին կհանգեցնի 0.06 մլն դրամ տոկոսային եկամուտների նվազման:

Թեև GAP մեթոդը լայնորեն կիրառվում է տոկոսադրույքի ռիսկը գնահատելու համար, այնուամենայնիվ ունի մի շարք թերություններ, մասնավորապես՝

- անտեսվում է տարբեր բազիսներին ամրագրված փոփոխվող տոկոսադրույքների բազիսային ռիսկը,
- անտեսվում է տոկոսադրույքների փոփոխության հետևանքով ակտիվների և պարտավորությունների կազմում տեղի ունեցող հնարավոր փոփոխությունները (օրինակ, տոկոսադրույքների աճի դեպքում հնարավոր է ցպահանջ ավանդների վերափոխումը ժամկետային ավանդների, կամ ժամկետային ավանդների ավանդատուների պահանջով ժամանակից շուտ մարումը (օպցիոնի ռիսկ)՝ ավելի բարձր տոկոսադրույքով վերաձևակերպելու նպատակով),
- բանկի տոկոսային մարժայի և եկամտի նկատմամբ տոկոսադրույքի փոփոխության ազդեցությունն արտահայտվում է միայն տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների մասով, և անտեսվում են մյուս ակտիվներով և պարտավորություններով պայմանավորված վնասները:

GAP մոդելի թերությունն այն է, որ դա թույլ չի տալիս լիարժեք գնահատել տոկոսադրույքի դինամիկայի ազդեցությունը բանկի կապիտալի տնտեսական արժեքի վրա: Այս նպատակն է փորձում ապահովել դյուրացիայի մոդելը, որի հաշվարկում դիտարկվում են ակտիվների և պարտավորությունների միջին կշռված ժամկետները, ինչպես նաև դրամական հոսքերի ստացումը:

Դյուրացիայի մոդել

Դյուրացիան ակտիվների և պարտավորությունների տոկոսադրույքների նկատմամբ զգայունության չափման առավել լիարժեք ցուցանիշն է, քանի որ հաշվի է առնում ինչպես ժամկետայնությունը, այնպես էլ սպասվող դրամական հոսքերը: Դյուրացիան միջին կշռված ժամկետայնություն է, որը հաշվարկվում է դրամական հոսքերի ներկա արժեքի հաշվարկման միջոցով.

$$D = \frac{\sum_{t=1}^{N} CF_t * DF_t * t}{\sum_{t=1}^{N} CF_t * DF_t} = \frac{\sum_{t=1}^{N} PV_t * t}{\sum_{t=1}^{N} PV_t}$$

որտեղ՝

D - դյուրացիան է՝ արտահայտված տարիներով,

CF_t - ստացված դրամական հոսքն է t ժամանակաշրջանի վերջում,

N - դրամական հոսքի ստացման վերջին ժամանակաշրջանն է,

DF_t - դիսկոնտավորման գործակիցն է, որը որոշվում է $1/(1+R)^t$ բանաձևով, որտեղ R-ն շուկայական ընթացիկ տոկոսադրույքն է,

PV_t - դրամական հոսքի ներկա արժեքն է t ժամանակաշրջանի վերջում:

Դյուրացիայի ամբողջական ճեղքվածքը գնահատելու համար պետք է որոշել տվյալ կազմակերպության ակտիվների պորտֆելի և պարտավորությունների պորտֆելի դյուրացիան: Դա հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$D_A = X_{1A}D_1^A + X_{2A}D_2^A + \dots + X_{nA}D_n^A \ (6)$$

$$D_L = Y_{1L}D_1^L + Y_{2L}D_2^L + \dots + Y_{nL}D_n^L, \ (7)$$

որտեղ՝

X_{iA} - i ակտիվի կշիռն է ընդհանուր ակտիվներում,

Y_{jL} - j պարտավորության կշիռն է պարտավորություններում,

D_i^A - i ակտիվի դյուրացիան (միջին կշռված ժամկետայնություն) է,

D_j^L - j պարտավորության դյուրացիան է:

Դյուրացիայի ճեղքվածքի և կապիտալի տնտեսական արժեքի կապը կայանում է հետևյալում.

$$A = L + E$$

$$\Delta A = \Delta L + \Delta E, \text{ որտեղից } \Delta E = \Delta A - \Delta L$$

Այսինքն, տոկոսադրույքների փոփոխության դեպքում տվյալ ֆինանսական կազմակերպության կապիտալի փոփոխությունը հավասար է հաշվեկշռի աջ և ձախ կողմերում ակտիվների և պարտավորությունների փոփոխության տարբերությանը:

Հաշվեկշռում ակտիվների և պարտավորությունների փոփոխության շուկայական արժեքների՝ ΔA և ΔL կապը դյուրացիայի հետ կայանում է հետևյալում՝ $\Delta E = \Delta A - \Delta L$ հավասարման մեջ տեղադրելով դյուրացիայի մոդելից ստացվող ΔA և ΔL արժեքները, այն է՝

$$\Delta A = -DA * A * (\Delta R/[1+R]) \quad (8)$$

$$\Delta L = -DL * L * (\Delta R/[1+R]) \quad (9)$$

ստացվում է հետևյալը.

$$\Delta E = -(DA - DL * k) * A * (\Delta R/[1+R]) \quad (10)$$

որտեղ՝

R - ակտիվների և պարտավորությունների միջին կշռված շուկայական տոկոսադրույքն է,

ΔE - կապիտալի տնտեսական արժեքի փոփոխությունն է,

*(DA - DL * k) - դյուրացիայի ճեղքվածքն է՝*

$$D_{GAP} = D_A - D_L * k \quad (11)$$

որտեղ՝

k = պարտավորություններ/ակտիվներ (L/A):

Կապիտալի տնտեսական արժեքը ակտիվների և պարտավորությունների ներկա արժեքների (PV) տարբերությունն է:

Ըստ վերոնշյալի՝ ֆինանսական կազմակերպության կապիտալի վրա տոկոսադրույքի փոփոխության ազդեցությունը կարելի է տարաբաշխել երեք առանձին գործոնների.

1. <u>Ըստ լևերեջի ճշգրտված դյուրացիայի ճեղքվածք</u> = [D_A - $D_L k$]. այս ճեղքվածքը չափվում է տարիներով և արտացոլում տվյալ ֆինանսական կազմակերպության հաշվեկշռում ակտիվների և պարտավորությունների դյուրացիայի անհամապատասխանության աստիճանը: Մասնավորապես, որքան մեծ է ճեղքվածքի բացարձակ մեծությունը, այնքան մեծ ռիսկ է կրում տվյալ ֆինանսական կազմակերպությունը՝ կապված տոկոսադրույքի փոփոխությունների հետ:
2. <u>Ֆինանսական կազմակերպության չափերը.</u> A-ով չափվում են տվյալ կազմակերպության ակտիվները: Որքան մեծ են կազմակերպության մասշտաբները, այնքան մեծ է այն պո-

տենցիալ ռիսկի գումարային արտահայտությունը (բացարձակ մեծությամբ), որը ֆինանսական կազմակերպությունը կարող է կրել՝ կապված տոկոսադրույքի փոփոխությունների հետ:

3. Տոկոսադրույքի փոփոխության չափը = (ΔR/[1+R]): Որքան մեծ է փոփոխությունը, այնքան մեծ է ռիսկը, որ բանկը կարող է կրել:

Վերոնշյալը հաշվի առնելով՝ որևէ ֆինանսական կազմակերպության զուտ արժեքի ենթակայությունը ռիսկին կարող է գնահատվել հետևյալ կերպ.

ΔE = - [ըստ լևերեջի ճշգրտված դյուրացիայի ճեղքվածք] * [ֆինանսական կազմակերպութան չափեր] * [տոկոսադրույքի փոփոխության չափ]:

Դյուրացիայի մոդելով տոկոսադրույքի ռիսկի չափման օրինակ

Դիտարկենք դյուրացիայի մեթոդով հաշվարկված շուկայական տոկոսադրույքի փոփոխության հետևանքով կապիտալի շուկայական արժեքի փոփոխության բացահայտման մեթոդաբանությունը:

Հաշվարկը կատարվում է՝ հիմք ընդունելով «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ով սահմանված ձև թիվ 9 հաշվետվությունը:

Հաշվարկում օգտագործվում են «ցպահանջ» սյունակից «3 տարուց ավելի» սյունակները: Ակտիվների դյուրացիան հաշվելիս հաշվարկվում են 1.1-ից 1.19 տողերում նշված պարտավորությունների դյուրացիան, իսկ պարտավորությունների դյուրացիան հաշվելիս՝ 2.1-2.16 տողերում նշված ակտիվների դյուրացիան:

Տոկոսադրույքի փոփոխության հետևանքով դյուրացիայի մեթոդով բանկի կապիտալի տնտեսական արժեքի փոփոխության հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ.

1. հաշվարկվում է դիտարկվող տողում նշված ակտիվի կամ պարտավորության միջին շուկայական տոկոսադրույքը (միջին շուկայական տոկոսադրույքը հաշվարկելիս օգտագործվում է Կանոնակարգ 3-ի ձև թիվ 17 հաշվետվությունը),
2. հաշվարկվում է ապագայում մարվող ակտիվների և պարտավորությունների ներկա արժեքները, ըստ որի յուրաքանչյուր տողի սյունակներում նշված գումարները զեղչվում են համապատասխան սյունակում նշված ժամկետների միջնա-

կետին համապատասխան՝ հետևյալ բանաձևով (ընդ որում՝ ցպահանջ միջոցների ժամկետայնությունը վերցվում է գրոյական).

$$A_d = A / (R_a/100+1)^{(t/365)}$$

որտեղ՝

A_d - զեղչված գումարն է,

A - համապատասխան մարման ժամկետայնությամբ ակտիվի կամ պարտավորության գումարն է,

R_a - համապատասխան ակտիվի կամ պարտավորության տարեկանացված շուկայական տոկոսադրույքն է,

t - համապատասխան մարման ժամկետայնության միջնակետը (3 տարուց ավելի ժամկետայնությամբ ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության միջնակետը՝ t-ն, պայմանականորեն վերցնում ենք 4 տարի),

3. հաշվարկվում է յուրաքանչյուր տողում գտնվող ակտիվի/պարտավորության դյուրացիան բանաձև (5)-ի միջոցով. օրինակ, 2.3 տողում նշված «Պարտավորություններ բանկերի նկատմամբ» պարտավորության դյուրացիան (միջին կշռված ժամկետայնությունը) հավասար է.

$$\underline{D_{\text{պարտ. բանկերի նկ.}}} = (A_{\text{(մինչև 30 օր տեղաբաշխված այդ պարտավորության մեծությունը)}} /(R_a/100+1)^{(15/365)} *15/365+\ldots+A_{\text{(3 տարուց ավելի տեղաբաշխված այդ պարտավորության մեծությունը)}}/(R_a/100+1)^4 *4) / (A_{\text{(ցպահանջ տեղաբաշխված այդ պարտավորության մեծությունը)}} / (R_a/100+1)^{(0/365)} +\ldots+A_{\text{(3 տարուց ավելի տեղաբաշխված այդ պարտավորության մեծությունը)}} /(R_a/100+1)^4),$$

4. հաշվարկվում է յուրաքանչյուր տողում գտնվող ակտիվի/պարտավորության ներկա արժեքի կշիռն ընդհանուր ակտիվների/պարտավորությունների ներկա արժեքում. օրինակ, 2.3 տողում նշված «Պարտավորություններ բանկերի նկատմամբ» պարտավորության կշիռն ընդհանուր պարտավորություններում հավասար է.

$$\underline{\text{կշիռն ընդհանուր պարտավորություններում}} = (A_{d\text{(ցպահանջ տեղաբաշխված այդ պարտավորության զեղչված մեծությունը)}} +\ldots+A_{d\text{ (3 տարուց ավելի տեղաբաշխված այդ պարտավորության զեղչված մեծությունը)}}) / \text{Կանոնակարգ 3-ի ծև թիվ 9 հաշվետվության ընդհանուր պարտավորությունների ներկա արժեքին,}$$

5. հաշվարկվում է ակտիվների դյուրացիան, պարտավորությունների դյուրացիան և դյուրացիայի ճեղքվածքը.

$$D_A = X_{1A}D_1^A + X_{2A}D_2^A + \dots + X_{nA}D_n^A$$

$$D_L = Y_{1L}D_1^L + Y_{2L}D_2^L + \dots + Y_{nL}D_n^L,$$

որտեղ՝

X_{iA} - i ակտիվի ներկա արժեքի կշիռն է ընդհանուր ակտիվների ներկա արժեքում,

Y_{jL} - j պարտավորության ներկա արժեքի կշիռն է ընդհանուր պարտավորությունների ներկա արժեքում,

D_i^A - i ակտիվի դյուրացիան է, իսկ D_j^L-ը՝ j պարտավորության դյուրացիան:

Դիտարկվող օրինակում.

*D_A = «Կանխիկ և կանխիկին հավասարեցված դրամական միջոցներ» ակտիվի տեսակարար կշիռն ընդհանուր ակտիվներում * $D_{\text{կանխիկ և կանխ. հավ. դրամական միջ.}}$+…+ «Այլ պահանջներ» ակտիվի տեսակարար կշիռն ընդհանուր ակտիվներում * $D_{\text{այլ պահանջներ}}$*

*D_L = «Պարտավորություններ ՀՀ ԿԲ նկատմամբ» պարտավորության տեսակարար կշիռն ընդհանուր ակտիվներում * $D_{\text{պարտավորություններ ՀՀ ԿԲ նկ.}}$+…+ «Այլ պարտավորություններ» պարտավորության տեսակարար կշիռն ընդհանուր ակտիվներում * $D_{\text{այլ պարտավորություններ}}$*

$$D_{GAP} = D_A - D_L k$$

որտեղ՝

k = կանոնակարգ 3-ի ձև թիվ 9 հաշվետվության ընդհանուր պարտավորությունների ներկա արժեք/կանոնակարգ 3-ի ձև թիվ 9 հաշվետվության ընդհանուր ակտիվների ներկա արժեք,

6. վերջին փուլում դյուրացիայի ճեղքվածքի միջոցով ներքոնշյալ բանաձևով հաշվարկվում է, թե տոկոսադրույքի տարբեր հնարավոր փոփոխությունների դեպքում որքան կփոփոխվի բանկի կապիտալի տնտեսական արժեքը.

$$\Delta E = -D_{GAP} *(\Delta R/[1+R]) *A,$$

7. նշենք նաև, որ առանձին կարող ենք գնահատել ինչպես միայն ակտիվների կամ միայն պարտավորությունների շուկայական տոկոսադրույքի ($\Delta A = -DA * A* (\Delta R/[1+R])$, ΔL

= -DL * L* (ΔR/[1+R])), այնպես էլ առանձին ակտիվների կամ պարտավորությունների (օրինակ, միայն «Պահանջներ իրավաբանական անձանց նկատմամբ» ակտիվի) շուկայական տոկոսադրույքի փոփոխության հետևանքով նշված ակտիվի կամ պարտավորության ապագա ընդհանուր հոսքերի ներկա շուկայական արժեքի փոփոխությունները (%ΔP = ΔP /P= - Dur * (ΔR/[1+R])), որտեղ Dur-ը տվյալ ակտիվի կամ պարտավորության դյուրացիան է):

Ստորև ներկայացված են դյուրացիայի երեք հատկությունները՝ կապված մարման ժամկետի, եկամտաբերության շուկայական տոկոսադրույքի և արժեկտրոնային տոկոսադրույքի հետ.

- ֆինանսական գործիքի ժամկետայնության աճը զուգորդվում է դյուրացիայի աճով, սակայն նվազող տեմպով, այսինքն՝ որքան մեծ է տվյալ ֆինանսական գործիքի մարման ժամկետը, այնքան մեծ է դյուրացիան,
- ֆինանսական գործիքի եկամտաբերության աճը զուգորդվում է դյուրացիայի նվազմամբ, այսինքն՝ որքան բարձր է ֆինանսական գործիքի եկամտաբերությունը, այնքան փոքր է դյուրացիան, քանի որ բարձր եկամտաբերության պայմաններում գալիք դրամական հոսքերն ավելի մեծ զեղչատոկոսով են բերվում ընթացիկ արժեքի,
- որքան մեծ է ֆինանսական գործիքի արժեկտրոնային վճարման գումարը, այնքան փոքր է դյուրացիան, այսինքն՝ ներդրողներն ավելի շուտ են հետ ստանում իրենց ներդրած գումարը, և դրանց դրամական հոսքերի ընթացիկ արժեքն ավելի մեծ է:

Դիտարկված մոդելներով բանկերի տոկոսադրույքի ռիսկը գնահատվում է շուկայի այլ հավասար պայմաններում, այնինչ տոկոսադրույքի փոփոխությունը կարող է հանգեցնել ընդհանուր պարտավորությունների փոփոխության, որն իր հերթին կհանգեցնի տոկոսային մարժայի փոփոխության: Վերջինս կանխատեսելու նպատակով անհրաժեշտ է գնահատել տոկոսադրույքի և պարտավորությունների կապի առածգականությունը:

Հավելված 3.1

հազար դրամ

Սարմանը մնացել է			Վերանայմանը մնացել է										
			գպահանջ[2]	մինչև 30 օր	31- 60 օր	61- 90 օր	91- 120 օր	121- 150 օր	151- 180 օր	181 օրից 1 տարի	1 - 3 տարի	3 տարուց ավելի	ընդամենը
			1	2	3	4	5	6	7	8	9	10	11
	գպահանջ	1											
	մինչև 30 օր	2											
	31 - 60 օր	3											
	61 - 90 օր	4											
	91 - 120 օր	5											
	121 - 150 օր	6											
	151 - 180 օր	7											
	181 օրից 1 տարի	8											
	1 - 3 տարի	9											
	3 տարուց ավելի	10											
	ճեղքվածք	11											

[2] *Գպահանջ միջոցների տոկոսադրույքները վերանայվում են շուկայական տոկոսադրույքների ցանկացած փոփոխության դեպքում:*

ՀԱՎԵԼՎԱԾ 4

ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՌԻՍԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ճԵՂՔՎԱԾՔԻ (GAP) ԵՎ VaR ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ներածություն

Արտարժութային ռիսկն այն ներկա կամ ապագա հավանականությունն է, երբ արտարժույթի փոխարժեքի տատանումները կարող են բացասական հետևանք ունենալ բանկի կապիտալի և/կամ շահույթի վրա:

Ազգային արժույթի նկատմամբ արտարժույթի փոխարժեքի տատանման հետևանքով բանկի սպասվող հավանական կորուստները կամ օգուտները գնահատվում են ամենատարբեր մոդելներով, որոնցից կարևորվում են.

- արտարժութային ակտիվների և պարտավորությունների ճեղքվածքի մոդելը (այսուհետև՝ GAP մոդել),
- Value-at-Risk (VaR) մոդելը:

GAP մոդել

GAP մոդելը թույլ է տալիս ստանալ արտարժույթի փոխարժեքի դիտարկվող փոփոխության հետևանքով բանկի արտարժութային միջոցների վերագնահատման արդյունքում բանկի գնահատվող կորուստը կամ օգուտը:

Արտարժույթի ռիսկը գնահատելու համար արտարժութային պարտավորությունները հանվում են արտարժութային ակտիվներից՝ յուրաքանչյուր արտարժութային ճեղքվածքը (GAP) հաշվարկելու համար.

$$GAP=FxA-FxL,$$

որտեղ՝
FxA - արտարժութային ակտիվներն են,
FxL - արտարժութային պարտավորություններն են,
GAP - արտարժութային ակտիվների և պարտավորությունների տարբերությունն է (ճեղքվածքը):

Ճեղքվածքը կարող է լինել զրոյական, բացասական և դրական: Բացասական ճեղքվածքի դեպքում (կարճ դիրք) արտարժույթի

փոխարժեքի աճը բանկին կհանգեցնի կորստի: Դրական ճեղքվածքի դեպքում ևս (երկար դիրք) արտարժույթի փոխարժեքի նվազումը բանկին կհանգեցնի կորստի:

Այս մոդելում դիտարկվող GAP-ը բնորոշում է արտարժութային միջոցների կուտակային ճեղքվածքը, ըստ որի դիտարկվում են բոլոր արտարժութային ակտիվները և պարտավորությունները (յուրաքանչյուր արտարժույթի համար)՝ անկախ դրանց տեղաբաշխման և ներգրավման ժամկետայնություններից: Նշվածի հիմնավորումը կայանում է նրանում, որ արտարժույթի փոխարժեքի տատանման դեպքում վերագնահատվում են այդ արտարժույթով ներգրավված և տեղաբաշխված բոլոր միջոցները:

GAP-ի հաշվարկման ժամանակ տվյալների աղբյուր կարող են հանդիսանալ բանկերի կողմից ներկայացվող հաշվապահական հաշվեկշիռը և Կանոնակարգ 3-ով սահմանված ձև թիվ 1 հաշվետվությունը, որտեղ արտարժույթները տարանջատված են որպես ազատ փոխարկելի և սահմանափակ փոխարկելի արտարժույթներ: Այդ տվյալներով հաշվարկվում են ազատ փոխարկելի բոլոր արտարժույթների ամբողջական ճեղքվածքը և սահմանափակ փոխարկելի բոլոր արտարժույթների ամբողջական ճեղքվածքը:

Անհրաժեշտ տվյալների տիրապետման դեպքում նպատակահարմար է հաշվարկել յուրաքանչյուր արտարժույթով ակտիվների և պարտավորությունների ճեղքվածքը, ապա գնահատել, թե որքանով է բանկի պորտֆելը զգայուն ինչպես յուրաքանչյուր արտարժույթի, այնպես էլ բոլոր արտարժույթների փոխարժեքների տատանումների նկատմամբ:

Ճեղքվածքն արտահայտվում է կապիտալի հետ հարաբերակցության տեսքով (սովորաբար կոչվում է ճեղքվածքի հարաբերակցություն. GAP/CAPITAL), ինչը ցույց է տալիս ինչպես արտարժութային ռիսկի ազդեցության ուղղությունը (դրական կամ բացասական GAP), այնպես էլ արտարժութային բաց դիրքի կապիտալով ապահովվածության մակարդակը:

Հատկանշական է, որ արտարժութային ռիսկի GAP մեթոդով բանկի հավանական կորուստը գնահատելիս արտարժույթի փոխարժեքի փոփոխության մակարդակը վերցվում է կամայական հավանական մեծություն: Այս առումով արտարժութային ռիսկի գնահատման VaR մեթոդը թույլ է տալիս որոշակի հավանականությամբ կանխորոշել արտարժույթի՝ հետագայում սպասվող առավե-

լագույն տատանման մակարդակը (օգտագործելով որևէ ժամանակային շարքում արտարժույթի տատանման մեծությունները) և ըստ այդ տատանման հաշվարկել բանկի հնարավոր կորուստը:

Սակայն, քանի որ արտարժույթի փոխարժեքի տատանումները պայմանավորված են մի շարք գործոններով, որոնց մի մասն անկանխատեսելի է, ապա արտարժույթի փոխարժեքը ինչ-որ շոկային իրավիճակում կարող է շեղվել ժամանակային շարքում իր դրսևորած միտումներից: Այս առումով բացի VaR մեթոդից (որը տալիս է միայն վերջնական կորստի մեծությունը) կարևորվում է նաև GAP մեթոդը, որի օգնությամբ կարելի է ապագայում փոխարժեքի հնարավոր ամենատարբեր փոփոխությունների համար հաշվարկել բանկի ակնկալվող կորուստը:

VaR մոդել

VaR-ը որոշակի բարձր հավանականությամբ (օրինակ՝ 95%) որոշակի ժամանակահատվածում (օրինակ՝ 1 օր) ակնկալվող առավելագույն կորստի վիճակագրական գնահատականն է:

Արտարժութային ռիսկը VaR մոդելով գնահատելու նպատակով կիրառվում է հետևյալ բանաձևը.

$$VaR = u * \sigma * W$$

որտեղ՝

u – ընտրված վստահության միջակայքի գործակիցն է՝ 0 միջինով և 1 ցրվածքով նորմալ բաշխման դեպքում, որը 95% վստահության միջակայքի համար հավասար է 1.64-ի, 99%-ի համար՝ 2.33-ի,

σ – փոխարժեքի տատանումների ստանդարտ շեղումն է,

W – արտարժութային ակտիվների և պարտավորությունների տարբերությունն (արտարժութային դիրք) է:

Որպես փոխարժեքի տատանումների բնութագրիչ վերցվում է հետևյալ մեծությունը, որի բաշխումը պետք է հնարավորինս մոտ լինի նորմալ բաշխմանը՝

$$Ln\left(\frac{FX_t}{FX_{t-1}}\right) \rightarrow N(a, \sigma),$$

որտեղ՝ FX_t - տվյալ արտարժույթի փոխարժեքն է ժամանակի t պահին:

Վերը բերված արտահայտությունը մոտարկվում է FX-ի հարաբերական աճերով՝

$$Ln\left(\frac{FX_{t}}{FX_{t-1}}\right) \approx \frac{FX_{t} - FX_{t-1}}{FX_{t-1}}$$

Քանի որ բերված շարքի միջինը գրեթե չի տարբերվում 0-ից, շարքի ստանդարտ շեղումը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\sigma = \sqrt{\frac{1}{N}\sum_{i=1}^{N} L_i^2}$$

որտեղ՝ $L = Ln\left(\frac{FX_t}{FX_{t-1}}\right)$

Երկու արժույթների դեպքում կիրառվում է հետևյալ բանաձևը՝

$$VaR = \sqrt{VaR_{(1)}^2 + 2 * R * VaR_{(1)} * VaR_{(2)} + VaR_{(2)}^2}$$

Եթե ուսումնասիրվող արժույթների փոխարժեքները կոռելացված չեն (R-ը վիճակագրորեն նշանակալից չէ), ապա բանաձևը հանգում է հետևյալ տեսքի՝

$$VaR = \sqrt{VaR_{(1)}^2 + VaR_{(2)}^2}$$

Երեք և ավելի արժույթների դեպքում կիրառվում է փոխարժեքների տատանումների լոգարիթմների կոռելյացիոն մատրիցը, և կիրառվում նույն մոտեցումը, ինչ որ 2 փոխարժեքի դեպքում՝ կախված կոռելյացիայի գործակցի մեծությունից (R-ի նշանակալիությունից): Եթե ուսումնասիրվող արժույթների փոխարժեքները թույլ են կոռելացված, ապա կիրառվում է հետևյալ բանաձևը՝

$$VaR = \sqrt{VaR_{(1)}^2 + VaR_{(2)}^2 + ... + VaR_{(n)}^2}$$

VaR մոդելով արտարժույթի ռիսկի չափման օրինակ

Դիտարկենք VaR մեթոդով արտարժույթի փոխարժեքի տատանման հետևանքով բանկի 10-օրյա ժամանակահատվածում 95% հավանականությամբ հնարավոր վնասի առավելագույն չափի հաշվարկումը:

Հաշվարկում անհրաժեշտ տվյալների աղբյուր են հանդիսանում ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված արտարժույթների

հաշվարկային փոխարժեքները, և որպես ժամանակային շարք դիտարկենք 30.09.03-30.09.04 թթ. բոլոր աշխատանքային օրերում արտարժույթների (ԱՄՆ դոլար և եվրո) հաշվարկային փոխարժեքները: Դիտարկվող շարքի երկարությունը 255 է (Բազելյան կոմիտեի պահանջով՝ շարքի երկարությունը պետք է լինի առնվազն 250, իսկ ժամանակահատվածը, որում հաշվարկվում է բանկի հնարավոր կորուստը, նախընտրելի է լինի 10 օր):

Հաշվարկում անհրաժեշտ աղբյուր է հանդիսանում նաև Կանոնակարգ 3-ով սահմանված ձև թիվ 1 «հաշվեկշիռ» հաշվետվության, որը թեպետ բավարար չէ, քանի որ տալիս է միայն արտարժութային ազատ փոխարկելի և սահմանափակ փոխարկելի խմբերի դիրքերի մասին տեղեկատվություն և չի տալիս արտարժութային դիրքերի մասին տեղեկատվություն՝ ըստ առանձին արժույթների:


Ենթադրվում է, որ հարցման արդյունքում բանկից ստացվել է տեղեկատվություն, որ ԱՄՆ դոլարով ակտիվների և պարտավորությունների բաց դիրքը 450 մլն դրամ մեծություն է, իսկ եվրոյով՝ 300 մլն դրամ (անկախ նրանից, դիրքը երկար է, թե կարճ, քանի որ հաշվարկում կիրառվում է բաց դիրքի բացարձակ մեծությունը):

VaR-ը հաշվարկելու համար նախ հաշվարկում ենք 255 աշխատանքային օրերի ԱՄՆ դոլարի և եվրոյի հաշվարկված փոխարժեքների տատանումների լոգարիթմները՝


$$Ln\left(\frac{FX_{t}}{FX_{t-1}}\right) \approx \frac{FX_{t} - FX_{t-1}}{FX_{t-1}}$$

և այնուհետև հաշվարկում ստացված շարքի ստանդարտ շեղումը (σ), որը տվյալ դեպքում հավասար է՝ ԱՄՆ դոլարի համար՝ 0.0023, իսկ եվրոյի համար՝ 0.0066:

30.09.03-30.09.04 թթ. ժամանակահատվածում ԱՄՆ դոլարի փոխարժեքի տատանումների հիստոգրամը



30.09.03-30.09.04 թթ. ժամանակահատվածում եվրոյի փոխարժեքի տատանումների հիստոգրամը



Օրական կտրվածքով 95% վստահության միջակայքով VaR-ը հաշվարկելու համար.

$$VaR_{(USD)} = 1.64 * 0.0023 * 450000000 = 1697400$$
$$VaR_{(EUR)} = 1.64 * 0.0066 * 300000000 = 3247200$$

Քանի որ հաշվարկվել է ԱՄՆ դոլարի և եվրոյի հաշվարկված փոխարժեքների տատանումների լոգարիթմների կոռելյացիան, և կոռելյացիոն կապը թույլ է եղել (կոռելյացիան = 0.285), ապա ընդհանուր VaR-ի հաշվարկը հանգում է հետևյալ տեսքի.

$$VaR = \sqrt{VaR^2_{(USD)} + VaR^2_{(EUR)}} = \underline{3664079}$$

որտեղ՝

1.64-ը ընտրված 95% վստահության միջակայքի գործակիցն է՝ 0 միջինով և 1 ցրվածքով նորմալ բաշխման դեպքում,

0.0023-ը 30.09.03-30.09.04 թթ. ՀՀ-ում ԱՄՆ դոլարի փոխարժեքի տատանումների ստանդարտ շեղումն է (օրական կտրվածքով),

0.0066-ը 30.09.03-30.09.04 թթ. ՀՀ-ում եվրոյի փոխարժեքի տատանումների ստանդարտ շեղումն է (օրական կտրվածքով),

450000000-ը ԱՄՆ դոլարով ակտիվների և պարտավորությունների բաց դիրքն է՝ բացարձակ արժեքով,

300000000-ը եվրոյով ակտիվների և պարտավորությունների բաց դիրքն է:

Տասնօրյա կտրվածքով հնարավոր առավելագույն կորստի չափը (95% հավանականությամբ) VaR մեթոդով հաշվարկելու համար նախևառաջ հաշվարկվում է փոխարժեքի տատանումների ստանդարտ շեղումը տասնօրյա կտրվածքով, որը հեշտությամբ կարելի է ստանալ օրական կտրվածքով ստանդարտ շեղումը բազմապատկելով 10-ով՝

$$VaR_{10} = \sqrt{10} * VaR_1$$

Արդյունքում տասնօրյա Var-ը՝

$$VaR_{10(USD)} = 1697400 * \sqrt{10} = 5367650$$

$$VaR_{10(EUR)} = 3247200 * \sqrt{10} = 10268548$$

$$\text{VaR}_{10} = \sqrt{VaR^2_{10(USD)} + VaR^2_{10(EUR)}} = \underline{11586835}$$

Այսպիսով, նշված բանկն արտարժույթի տատանումների հետևանքով 95% հավանականությամբ առաջիկա տասնօրյա ժամանակահատվածում կարող է կրել առավելագույնս 11.6 մլն դրամի չափով վնաս:

ՀԱՎԵԼՎԱԾ 5

ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

Իրացվելիությունը կամ կարողությունը՝ մարել պարտավորությունները մինչև մարման ժամկետի լրանալը, վճռական է յուրաքանչյուր բանկի համար: Իրացվելիության ռիսկն այն ներկա կամ ապագա հավանականությունն է, երբ բանկն ի վիճակի չի լինի ճիշտ ժամանակին բավարարել իր պարտատերերի պահանջներն առանց լրացուցիչ կորուստներ կրելու, ինչը բացասաբար կազդի բանկի շահույթի և/կամ կապիտալի վրա: Իրացվելիության ռիսկն առաջանում է նաև, երբ բանկն ի վիճակի չի լինում կանխատեսել և արձագանքել շուկայական պայմանների այն փոփոխություններին, որոնք ազդում են բանկի կողմից ակտիվների արագ և նվազագույն կորուստներով իրացման վրա:

Ընդհանուր առմամբ, էապես կարևորվում է բանկերում իրացվելիության բավարար մակարդակի պահպանումը, քանի որ իրացվելիության հիմնախնդիր առաջանալիս բանկերը ստիպված են արագ ներգրավել արդեն բավականին թանկ (բարձր տոկոսադրույքով) միջոցներ: Այլ խնդիր է գնահատել բանկի երկրորդային շուկայից արագորեն միջոցներ ներգրավելու հնարավորությունը, քանի որ անբավարար միջոցների առկայության դեպքում արագորեն միջոցներ ներգրավելու անհնարինությունը կարող է խաթարել բանկի բնականոն գործունեությունը: Այսպես, վերոնշյալ պարագայում բանկը կարող է կորցնել որոշ հաճախորդների, ինչը, բնականաբար, իր ազդեցությունը կթողնի շահույթի մակարդակի վրա: Իսկ եթե նշված իրացվելի միջոցների պակասուրդը հաճախակի բնույթ կրի, ապա դա կհանգեցնի բանկի վարկանիշի նվազման և ավանդների զանգվածային հետպահանջման:

Սույն մեթոդաբանությունը հնարավորություն է տալիս գնահատել և վերլուծել բանկի իրացվելիության ռիսկը, ինչպես նաև բանկի կողմից վարվող քաղաքականությունը իրացվելիության բավարար մակարդակը պահպանելու համար:

ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ*

Տվյալ մեթոդը հնարավորություն է տալիս բացահայտել բանկի ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ճեղքվածքը և գնահատել բանկը իրացվելիության կառավարման տեսանկյունից:

Բանկը չի համարվում իրացվելի, եթե ունի ժամկետանց պարտավորություններ:

Բանկի գնահատումը կատարվում է ելնելով ակտիվների և պարտավորությունների մարմանը մնացած ժամկետներից՝ Կանոնակարգ 3-ի «Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետայնության վերաբերյալ» ձև թիվ 9 հաշվետվության հիման վրա:

Հաշվարկների մեջ ընդգրկվում են միայն մինչև մեկ տարի մարման ժամկետներով ակտիվները և պարտավորությունները:

Ակտիվների ու պարտավորությունների մարման ժամկետները դասակարգվում են ըստ հետևյալ խմբերի՝

- ժամկետանց (միայն պարտավորությունների գծով),
- ցպահանջ,
- մինչև 30 օր,
- 31-60 օր,
- 61-90 օր,
- 91-120 օր,
- 121-150 օր,
- 151-180 օր
- 181 օրից 1 տարի:

Իրացվելիության գնահատման տվյալ մեթոդաբանությունում կատարվում է ակնթարթային, մինչև 90 օր կուտակային և ընդհանուր իրացվելիությունների տարանջատում:

Ակնթարթային իրացվելիությունը բանկի ցպահանջ ակտիվների (ներառած բարձր իրացվելի ակտիվները) և ցպահանջ պարտավորությունների տարբերության հարաբերակցությունն է բարձր իրաց-

** Ցուցանիշների հաշվարկները կարող են տարբերվել կանոնակարգերով սահմանված հաշվարկներից:*

վելի ակտիվներին, որտեղ ցպահանջ պարտավորությունների մեծությունը հաշվարկվում է Աղյուսակ 1-ում նշված կշիռներով**.

$$ԱԻ = (Ացպ-Պցպ) / ԲԻԱ,$$

որտեղ՝
ԱԻ - բանկի ակնթարթային իրացվելիությունն է,
ԲԻԱ - բարձր իրացվելի ակտիվներն են,
Ացպ - ցպահանջ ակտիվներն են,
Պցպ - ցպահանջ պարտավորություններն են:

Բարձր իրացվելի ակտիվները (ԲԻԱ) հավասար են Կանոնակարգ 3-ի ձև թիվ 9 հաշվետվության «Ակտիվների մարման ժամկետայնության վերաբերյալ» աղյուսակի «ցպահանջ» սյունակի «Կանխիկ և կանխիկին հավասարեցված դրամական միջոցներ», «Պահանջներ Հայաստանի Հանրապետության բանկերի նկատմամբ», «Պահանջներ B-ից բարձր վարկանիշ ունեցող բանկերի, նրանց դուստր բանկերի և մասնաճյուղերի նկատմամբ», «Պահանջներ այլ բանկերի նկատմամբ», «Պահանջներ B-ից բարձր վարկանիշ ունեցող կենտրոնական բանկերի և կառավարությունների նկատմամբ», «Պահանջներ այլ կենտրոնական բանկերի և կառավարությունների նկատմամբ» տողերի, ինչպես նաև բոլոր ժամանակահատվածների համար՝ «Պահանջներ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նկատմամբ», «Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթեր» (բացառությամբ Հայաստանի Հանրապետության պետական մուրհակների) և «Ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթեր» տողերի հանրագումարին:

Ցպահանջ ակտիվները (Ացպ) հավասար են վերոնշյալ բարձր իրացվելի ակտիվների (ԲԻԱ) և Կանոնակարգ 3-ի ձև թիվ 9 հաշվետվության «Ակտիվների մարման ժամկետայնության վերաբերյալ» աղյուսակի «ցպահանջ» սյունակի «Հայաստանի Հանրապետության պետական մուրհակներ», «Պահանջներ Հայաստանի Հանրապետության կառավարության նկատմամբ», «Պահանջներ ֆիզիկական անձանց նկատմամբ», «Պահանջներ ֆիզիկական անձ տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ», «Պահանջներ իրավա-

*** Կշիռները հաշվարկվում են ելնելով պարտավորությունների պահանջելու հավանականության տեսանկյունից:*

բանական անձանց և հիմնարկների նկատմամբ», «Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ», «Հաշվարկված ստացվելիք տոկոսներ» ու «Այլ պահանջներ» տողերի հանրագումարին:

Ցպահանջ պարտավորությունների (Պցպ) հաշվարկում ներառված են ձև թիվ 9 հաշվետվության «Պարտավորությունների ժամկետայնության վերաբերյալ» աղյուսակի «ցպահանջ» սյունակի այն տողերը, որոնք նշված են Աղյուսակ 1-ում՝ համապատասխան կշիռներով: Ցպահանջ պարտավորությունների կազմում ընդգրկվում են նաև այն պարտավորությունները, որոնց մարման ժամկետը լրացել է, սակայն հաճախորդը ստանալու հայտ չի ներկայացրել:

Աղյուսակ 1

Հոդվածներ	Կշիռ (%)
Պարտավորություններ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նկատմամբ	100
Բանկերի թղթակցային հաշիվներ	100
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	100
Պարտավորություններ կառավարության նկատմամբ	100
Պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	80
Ֆիզիկական անձանց բանկային հաշիվներ	80
Այլ պարտավորություններ ֆիզիկական անձանց նկատմամբ	80
ֆիզիկական անձ տնտեսվարող սուբյեկտների բանկային հաշիվներ	80
Այլ պարտավորություններ ֆիզիկական անձ տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ	80
Իրավաբանական անձանց և հիմնարկների բանկային հաշիվներ	80
Այլ պարտավորություններ իրավաբանական անձանց և հիմնարկների նկատմամբ	80
Պարտավորություններ բանկերի կողմից թողարկված արժեթղթերի նկատմամբ	100
Հաշվարկված վճարվելիք տոկոսներ	100
Այլ պարտավորություններ	100
Հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններ, անավարտ ժամկետային գործառնություններ	20
Խոշոր պարտավորություններ	5

Մինչև 90 օր կուտակային իրացվելիությունը բանկի մինչև 90 օր մարման ժամկետայնությամբ ակտիվների (ներառյալ բարձր իրացվելի ակտիվները) և մինչև 90 օր մարման ժամկետայնությամբ պարտավորությունների տարբերության (մինչև 90 օր մարման

ժամկետայնությամբ կուտակային ճեղքվածք) հարաբերակցությունն է բարձր իրացվելի ակտիվներին.

$$ԿԻ_{մինչև\ 90\ օր} = (Ա_{մինչև\ 90\ օր} - Պ_{մինչև\ 90\ օր}) / ԲԻԱ,$$

որտեղ՝

$ԿԻ_{մինչև\ 90\ օր}$ - բանկի մինչև 90 օր կուտակային իրացվելիությունն է,

ԲԻԱ - բարձր իրացվելի ակտիվներն են,

$Ա_{մինչև\ 90\ օր}$ - մինչև 90 օր մարման ժամկետայնությամբ ակտիվներն են,

$Պ_{մինչև\ 90\ օր}$ - մինչև 90 օր մարման ժամկետայնությամբ պարտավորությունները են:

Մինչև 90 օր մարման ժամկետայնությամբ ակտիվները ($Ա_{մինչև\ 90\ օր}$) հավասար են վերոնշյալ ցպահանջ ակտիվների (Ացպ) և ձև թիվ 9 հաշվետվության «Ակտիվների մարման ժամկետայնության վերաբերյալ» աղյուսակի «մինչև 30 օր», «31-60 օր» ու «61-90 օր» սյունակների «Հայաստանի Հանրապետության պետական մուրհակներ», «Պահանջներ Հայաստանի Հանրապետության կառավարության նկատմամբ», «Պահանջներ Հայաստանի Հանրապետության բանկերի նկատմամբ», «Պահանջներ B-ից բարձր վարկանիշ ունեցող բանկերի, նրանց դուստր բանկերի և մասնաճյուղերի նկատմամբ», «Պահանջներ այլ բանկերի նկատմամբ», «Պահանջներ B-ից բարձր վարկանիշ ունեցող կենտրոնական բանկերի և կառավարությունների նկատմամբ», «Պահանջներ այլ կենտրոնական բանկերի և կառավարությունների նկատմամբ», «Պահանջներ ֆիզիկական անձանց նկատմամբ», «Պահանջներ ֆիզիկական անձ տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ», «Պահանջներ իրավաբանական անձանց և հիմնարկների նկատմամբ», «Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ», «Հաշվարկված ստացվելիք տոկոսներ» ու «Այլ պահանջներ» տողերի հանրագումարին:

Մինչև 90 օր մարման ժամկետայնությամբ պարտավորությունները ($Պ_{մինչև\ 90\ օր}$) հավասար են վերոնշյալ ցպահանջ պարտավորությունների (Պցպ) և ձև թիվ 9 հաշվետվության «Պարտավորությունների ժամկետայնության վերաբերյալ» աղյուսակի «մինչև 30 օր», «31-60 օր» ու «61-90 օր» սյունակների այն տողերի հանրագումարին, որոնք նշված են Աղյուսակ 1-ում, ընդ որում՝ «Հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններ, անա-

վարտ ժամկետային գործառնություններ» տողի մեծությունները ներառվում են 20% կշռով, իսկ «Խոշոր պարտավորություններ» տողի մեծությունները 5% կշռով:

Ընդհանուր իրացվելիությունը բանկի մինչև մեկ տարի մարման ժամկետայնությամբ ակտիվների (ներառյալ բարձր իրացվելի ակտիվները) և մինչև մեկ տարի մարման ժամկետայնությամբ պարտավորությունների տարբերության (մինչև մեկ տարի մարման ժամկետայնությամբ կուտակային ճեղքվածքի) հարաբերակցությունն է բարձր իրացվելի ակտիվներին.

$$ԸԻ = (ԸԱ - ԸՊ) / ԲԻԱ,$$

որտեղ՝

ԸԻ - բանկի մինչև մեկ տարի կուտակային իրացվելիությունն է,

ԲԻԱ - բարձր իրացվելի ակտիվներն են,

ԸԱ - մինչև մեկ տարի մարման ժամկետայնությամբ ակտիվներն են,

ԸՊ - մինչև մեկ տարի մարման ժամկետայնությամբ պարտավորությունները են:

Մինչև մեկ տարի մարման ժամկետայնությամբ ակտիվները (ԸԱ) հավասար են վերոնշյալ ցպահանջ ակտիվների (Ացպ) և ձև թիվ 9 հաշվետվության «Ակտիվների մարման ժամկետայնության վերաբերյալ» աղյուսակի «մինչև 30 օր», «31-60 օր», «61-90 օր», «91-120 օր», «120-151 օր», «151-180 օր» և «181 օրից 1 տարի» սյունակների «Հայաստանի Հանրապետության պետական մուրհակներ», «Պահանջներ Հայաստանի Հանրապետության կառավարության նկատմամբ», «Պահանջներ Հայաստանի Հանրապետության բանկերի նկատմամբ», «Պահանջներ B-ից բարձր վարկանիշ ունեցող բանկերի, նրանց դուստր բանկերի և մասնաճյուղերի նկատմամբ», «Պահանջներ այլ բանկերի նկատմամբ», «Պահանջներ B-ից բարձր վարկանիշ ունեցող կենտրոնական բանկերի և կառավարությունների նկատմամբ», «Պահանջներ այլ կենտրոնական բանկերի և կառավարությունների նկատմամբ», «Պահանջներ ֆիզիկական անձանց նկատմամբ», «Պահանջներ ֆիզիկական անձ տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ», «Պահանջներ իրավաբանական անձանց և հիմնարկների նկատմամբ», «Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ», «Հաշվարկված ստացվելիք տոկոսներ» ու «Այլ պահանջներ» տողերի հանրագումարին:

Մինչև մեկ տարի մարման ժամկետայնությամբ պարտավորությունները (ԸՊ) հավասար են վերոնշյալ ցպահանջ պարտավորությունների (Պցպ) և ձև թիվ 9 հաշվետվության «Պարտավորությունների ժամկետայնության վերաբերյալ» աղյուսակի «մինչև 30 օր», «31-60 օր» ու «61-90 օր», «91-120 օր», «120-151 օր», «151-180 օր» և «181 օրից 1 տարի» սյունակների այն տողերի հանրագումարին, որոնք նշված են Աղյուսակ 1-ում, ընդ որում՝ «Հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններ, անավարտ ժամկետային գործառնություններ» տողի մեծությունները ներառվում են 20% կշռով, իսկ «Խոշոր պարտավորություններ» տողի մեծությունները՝ 5% կշռով:

Վերոնշյալ գործողություններից հետո ակնթարթային իրացվելիության (ԱԻ), բանկի՝ մինչև 90 օր կուտակային իրացվելիության ($ԿԻ_{մինչև\ 90\ օր}$) և մինչև մեկ տարի ընդհանուր իրացվելիության (ԸԻ) հաշվարկված մեծություններին ներքոնշյալ սահմանաչափերի հիման վրա տրվում են գնահատականներ, ըստ որոնց՝ սույն մեթոդաբանության առումով.

- բացասական մեծությունից մինչև 0% տրվում է «C» գնահատական (անբավարար)
- 0%-ից (ներառյալ) մինչև 50% տրվում է «B» գնահատական (բավարար)
- 50%-ից (ներառյալ) բարձր մեծությանը տրվում է «A» գնահատական (լավ):

Այսպիսով, իրացվելիության վերոնշյալ մեթոդաբանությունը թույլ է տալիս դիտարկվող պահին գնահատել բանկի իրացվելիությունը:

Սակայն բանկի ապագա իրացվելիության մակարդակի կանխատեսումներ կատարելու համար անհրաժեշտ է նաև գնահատել իրացվելիության կառավարման մակարդակը, որի համար դիտարկենք բանկի իրացվելիության ճեղքվածքների պատմական շարքերը:

Այսպես, քանի որ բանկերը մշտապես վերարտադրում են իրենց գործունեությունը, այդ ընթացքում նոր ճեղքվածքների ի հայտ գալու փաստը չի բացառվում:

Բանկում իրացվելիության կառավարման մակարդակը գնահատելու նպատակով հավաքագրվում են իրացվելիության ճեղքվածքների դինամիկայի պատմական շարքերը և գնահատվում, թե որքանով է ապահովվում բանկի ակնթարթային և մինչև 90 օր մար-

ման ժամկետայնությամբ ակտիվների և պարտավորությունների իրացվելիության ճեղքվածքը դիտարկվող բոլոր ժամանակաշրջաններում:

Այսպես, օրինակ, բանկը կարող է ունենալ բացասական կուտակային ճեղքվածք, սակայն պատմականորեն բանկի ակնթարթային և մինչև 90 օր մարման ժամկետայնությամբ ակտիվների և պարտավորությունների իրացվելիության ճեղքվածքները մշտապես եղել են դրական մեծություններ: Դա թույլ է տալիս ենթադրել, որ բանկի իրացվելիութունը ճիշտ է կառավարվում, քանի որ բանկը նոր պայմանագրերի (ներգրավվող և տեղաբաշխվող միջոցների) միջոցով կարողանում է ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների մոտեցման հետ շտկել դրանց բացասական ճեղքվածքները կամ, որ նույնն է, մշտապես ապահովել ընթացիկ իրացվելիությունը:

Այսպիսով, պատմական շարքերն օգտավետ կլինեն նոր ճեղքվածքների բացահայտման կամ կանխատեսման համար՝ ենթադրելով, որ բանկի կողմից իրացվելիության պլանավորման գործընթացում իրականացված գործողությունների բնույթը նույն օրինաչափությունը պահպանելով էական փոփոխությունների չի ենթարկվի:

Իրացվելիության ռիսկի գնահատման օրինակներ

Դիտարկվող օրինակում ենթադրվում է, որ ԱԻ, $ԿԻ_{մինչև\ 90\ օր}$ և ԸԻ մեծություններն արդեն հաշվարկված են (Աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Բանկեր	ԱԻ (ակնթարթային իրացվելիություն)	$ԿԻ_{մինչև\ 90\ օր}$ (մինչև 90 օր կուտակային իրացվելիություն)	ԸԻ (ընդհանուր իրացվելիություն)	Իրացվելիության գնահատական
Բանկ 1	80%	62%	51%	AAA
Բանկ 2	52%	23%	-102%	ABC
Բանկ 3	8%	-12%	72%	BCA

Աղյուսակից կարելի է եզրակացնել, որ Բանկ 1-ը իրացվելիության հիմնախնդրի առջև կանգնած չէ, և եթե իր գործունեության ընթացքում նոր ներգրավվող պարտավորությունների և տեղաբաշխվող ակտիվների ժամկետայնությունները կարողանա դարձյալ ճիշտ կառավարել, ապա առաջիկա տարում իրացվելիության հիմնախնդիր չի ունենա: Բանկ 2-ը տվյալ պահին իրացվելիության հիմնախնդիր չունի. առաջիկա երեք ամիսների ընթացքում իրացվելիությունը բավարար մակարդակի վրա է, իսկ հետագայում, եթե

նոր ներգրավվող պարտավորությունների և տեղաբաշխվող ակտիվների ժամկետայնությունների ճիշտ կառավարման միջոցով իրացվելիությունը չշտկի, ապա կունենա իրացվելիության լուրջ խնդիրներ:

Հետագայում նոր ներգրավվող պարտավորությունների և տեղաբաշխվող ակտիվների հետևանքով բանկերի իրացվելիությունը կանխատեսելու նպատակով գնահատվում է բանկերում իրացվելիության կառավարման մակարդակը:


Բանկերում իրացվելիության կառավարման մակարդակի գնահատման համար դիտարկվում է բանկերի իրացվելիության պատմական շարքի մեկ օրինակ:

Ստորև զետեղված աղյուսակներում և գրաֆիկներում ներկայացված են երեք բանկերի իրացվելիության պատմական շարքերը (մասնավորապես՝ դիտարկվող չորս ժամանակային պահերում):

Բանկ 1.

Բանկի իրացվելիությունն ըստ ժամկետների


	Դիտարկվող ժամանակաշրջաններ			
	ամսաթիվ 1	ամսաթիվ 2	ամսաթիվ 3	ամսաթիվ 4
ԱԻ (ակնթարթային իրացվելիություն)	52%	39%	63%	49%
ԿԻ (մինչև 90 օր կուտակային իրացվելիություն)	24%	43%	36%	53%
ԸԻ (մինչև 1 տարի ընդհանուր իրացվելիություն)	12%	-24%	-5%	8%
Իրացվելիության գնահատական	ABB	BBC	ABC	BAB



Բանկ 2.

Բանկի իրացվելիությունը ըստ ժամկետների

	Դիտարկվող ժամանակաշրջաններ			
	ամսաթիվ 1	ամսաթիվ 2	ամսաթիվ 3	ամսաթիվ 4
ԱԻ (ակնթարթային իրացվելիություն)	8%	32%	55%	44%
ԿԻ (մինչև 90 օր կուտակային իրացվելիություն)	10%	20%	28%	22%
